

ՏԵՂԻՔ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Աստվածաբանության հանքերը, այսինքն այն «տեղ»-երը, որոնցից հանվում է Աստվածաբանությունը, կոչվում են **«Տեղիք Աստվածաբանության»**: Ուրեմն այն աղբյուրները կամ շտեմարանները, որոնք պարունակում են քրիստոնեական կյանքի ճշմարտությունները եւ նրանց փաստերը, կոչվում են **«Տեղիք Աստվածաբանության»**: Հետեւյալներն են այդ «Տեղ»-երը:

Ա.- **Եկեղեցի**

Բ.- **Ս. Գիրք**

Գ.- **Ավանդություն** (անգիր կամ գրավոր)

Դ.- **Եկեղեցական ժողովք** (տիեզերական եւ ազգային)

Ե.- **Կանոնք եւ կարգադրությունք հայրապետաց** (մեր եկեղեցու կողմից ընդունված համաքրիստոնեական հայրերի եւ հայոց եկեղեցու կաթողիկոսների)

Զ.- **Աստվածաբանք եկեղեցու** (ուղղափառ հայրեր եւ մեր եկեղեցու աստվածաբան վարդապետներ)

Է.- **Բանականության լույսը**

Ը.- **Իմաստասերներ**

Բանականաբար այս «տեղիք»-ները բոլորն էլ նույն զորությունը ու միեւնույն հեղինակությունը չունեն, այլ իրենց ազդուությունը գրեթե վերելում դրված շարքին համաձայն է. վերջին երկուսը պարզ օժանդակներ են առաջին հինգին: Ուրիշ խոսքով բանականության եւ իմաստասիրության բոլոր ասածները չեն կարող «տեղիք» լինել, այլ ծառայում են պարզաբանելու եւ դասավորելու առաջին հինգը: Սրանց ուսումնասիրությունը կազմում է նյութը «Տեղիք Աստվածաբանության»: Մենք սակայն, մեր այս դասընթացքով պիտի չկարողանանք զբաղվել վերելում հիշված ութ աղբյուրներով, այլ զբաղվելու ենք միայն երկուսով: **Ս. Գրքի** մասին խոսելը վերապահվելու է Ս. Գրքի դասին: **Եկեղեցական ժողովները եւ եկեղեցու Աստվածաբանները** պատկանում են եկեղեցու պատմության դասին: **Կանոնք եւ կանոնադրությունք հայրապետաց** մաս են կազմում կանոնագիտության դասին: **Բանականության լույսը եւ Իմաստասերները** կապված են իմաստասիրության դասին: Հետեւաբար մեր այս դասին նյութը կազմելու են **Ավանդություն եւ Եկեղեցի**:

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Բառին արմատն է **«Ավանդ»**, որ նշանակում է պահելու համար տրված ինչ-որ բան: Քրիստոնեական կրոնի մեջ ավանդություն են Աստծուց կամ Աստուծո ծառաներից հետզհետե հայտնված ճշմարտությունները, օրենքները, կարգերը, ծեսերը եւ այլն, որոնք պետք է պահվին, այսինքն կիրարկվին եկեղեցու մեջ եւ սերունդից սերունդ փոխանցվեն մշտնջենապես: Բառը ունի իր լայն ու նեղ իմաստները: Իր լայն իմաստով ամենայն ինչ, որ եկեղեցուն տրված է պահելու, կիրարկվելու է սերունդից սերունդ փոխանցվելու համար՝ Ավանդություն են: Այս իմաստով Ս. Գիրքը եւ հետոհիշյալ Ա-Զ տեղիքներն էլ ընկնում են Ավանդության մեջ: Իսկ նեղ առումով, այն ճշմարտությունները եւ սովորությունները, որոնք Ս. Գրքում հստակ կերպով չեն հիշվել, կամ այն «ավանդողը» գրի չէ առած անձամբ, այլ երկար ժամանակ սերունդից սերունդ անգիր կերպով փոխանցված եւ կամ անգիր մնացած է, կոչվում է Ավանդություն: Մենք բառը օգտագործելու ենք այս վերջին՝ նեղ իմաստով:

Ավանդության նկատմամբ երկու հակադիր կեցվածք գոյություն ունի քրիստոնեական եկեղեցուն: Առաջինը Հին Պատմական եկեղեցիներունն է, որոնք ընդունում են ավանդությունը եւ երբեմն էլ չափազանց կարեւորություն են ընծայում նրան (հռոմեականք, հույնք-հայք եւ այլն): Երկրորդ կեցվածքն է բողոքականներունը, որոնք մերժում եւ պայքարում են նրա դեմ:

Սակայն պետք է գիտենալ, թե ուղղափառ հավատքի ուսուցումները ոչ միայն Ս. Գրքում են բովանդակվում, այլ նաեւ ավանդության մեջ: Ավանդության տվյալները գալիս են Հիսուսից, Առաքյալներից եւ նրանց հաջորդներից. ամբողջ Քրիստոսի ուսուցումը նախ ավանդություն էր եւ հետո միայն վերածվեց մեր այսօրվա ծանոթ ավետարաններին: Ստույգ է, որ Քրիստոս կշտամբում էր փարիսեցիներին իրենց ավանդապաշտության համար:

«Ընդէ՞ր անցանք զպատուիրանան Աստուծոյ վասն ձերոյ ւաւանդութեան» կամ «խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ ւաւանդութեան» կամ Եսայի մարգարեից մեջ բերելով. «Ջուր պաշտեն զիս, ուսուցանեն զվարդապետութիւնս զմարդկան պատուիրեալս» (Մատթ. ԺԵ 1-10): Սակայն այս կշտամբանքները մարդկանցից հնարված ավանդությունների համար են, որոնք ստվերի տակ էին թողնում կամ մոռացնում էին Աստծու կենսական պատվերները. Հիսուս հանդիմանում է Փարիսեցիների նանրահավատ սովորությունները (ձեռների լվացում, Տաճարին նվեր տալ՝ ծնողներին զրկելով եւ այլն):

Պողոս առաքյալն էլ դատապարտում է «մարդկային» (հակադրված Աստծուց տրվածին) այս ավանդությունը: «Զգոյշ լերուք, մի ոք իցէ՝ որ ձեզ կողոպտիցէ ճարտարութեամբ եւ սնոտի խաբեութեամբ, որք ըստ մարդկան ւաւանդութեան» (Կորնոս. Բ. 8): Մի ուրիշ տեղ Առաքյալը խստիվ արգիւում է իր ավանդածից տարբեր ուսուցումների կարեւորություն տալը: «Այլ եթե մեք, կամ հրեշտակ յերկնից ձեզ **աւելի** քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի» (Գաղ. Ա. 14): Ուրեմն Ս. Գրքով դատապարտվածը **հնարովի** եւ Քիրստոսի եւ առաքյալների սովորեցրածից **տարբեր** ավանդությունն է: Ընդհակառակը՝ ճշմարիտ ավանդությունը գովվում է եւ հանձնարարվում Ս. Գրքում: Պողոս առաքյալն ասում է. «Գովեմ զձեզ, զի զամենայն ինչ զիմ յիշեք, եւ որպէս ավանդեցի ձեզ զավանդութիւնսն» (Ա. Կորնթ. ԺԱ 2): «Բայց զայլն ինչ, յորժամ եկից, յայնժամ պատուիրեցից» (Ա. Կորնթ. ԺԱ 34): Ինչ որ նշանակում է, որ Առաքյալի քարոզած ճշմարտությունը «պատուիրած» սովորույթները կամ օրենքները լոկ գրվածները չեն, այլ շատ բան «պատուիրած» է, այսինքն **ավանդած է**, որոնք չեն գրվել: Հովհաննէս առաքյալ ասում է. «Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսի եւ դեղով գրել. զի ակն ունեն ինձէն իսկ գալ, եւ բերան ի բերան խօսիլ» (Բ. Հովհ. 12): Հունայի թղթում ասվել է. «Բայց դուք, սիրելիք, յիշեցեք զկանխասաց բանս զառաքելոցն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (հմբ. 17): Այս բոլորը փաստում են, որ առաքյալները իրենց գրածից բացի շատ բան են ավանդել Եկեղեցուն, որը պահած եւ իր հերթին ավանդել է այն հաջորդ սերունդներին:

Եկեղեցու հայրերից Իգնատիոս հավատացյալներին հորդորում է ասելով. «Պինդ ունել զառաքելոցն ւաւանդ»: Ոսկեբերան մեկնաբանելով Ս. Պողոսի «պինդ կալարուք զավանդութիւնս» (Բ. Կորնթ. 14) խոսքը, ասում է. «Աստի ի միտ առ, զի ոչ զամենայն գրով ւաւանդեցին առաքեալք, այլ բազում ինչ եւ անգիր, այսոքիկ եւ այնոքիկ հաւասարապէս արժանահաւատք, այսր աղագաւ պարտ եւ արժան է մեզ զւաւանդութիւնս եկեղեցւոյ դատել հաւատարիմս. ավանդութիւն է, մի եւս ինչ խնդրիցես աւելի քան զայն»: Սուրբ Օգոստինոսն էլ ասում է. «Բազում ինչ, որ ոչ ի գիրս առաքելոց եւ ոչ ի սահմանս ժողովոց գտանին, այլ քանզի պահին յամենայն եկեղեցիս, յառաքելոց անտի հաւատամք ւաւանդեալ եւ հրամայեալ»: Մեր եկեղեցու հայրերից Սարկավազ վարդապետ ասում է. «Զայսքան եւ զայսպիսի յեկեղցւոջն բարեկարգութեան յօրինուած... որքան ինչ յիշատակ ւաւանդեցաւ ի Տեառնէ քրիստոնէից եւ յառաքելոց իւրոց»: Շնորհալին ասում է. «Եթե այլ ոք ուսուցէ ձեզ հակառակ սրբոցն հարցն ւաւանդութեանց, հալածիցէք ի միջոյ ձերմէ զայնպիսին»: Լամբրոնացին ասում է. «Ոչ ես, այլ Աստուածաշունչք Գիրք եւ հարցն սրբոց ւաւանդութիւնք գրով առ մեզ հասեալ»: Այս բոլորը փաստատում են, որ Եկեղեցու ամենից սրբակյաց եւ աստվածամերձ հայրերն իսկ փաստատում են ավանդության գոյությունը եւ կարեւորությունը Եկեղեցուն:

Պետք է հիշել, որ Ավետարանները եւ Առաքելական Թուղթերը Տիրոջ Համբարձումից շատ տարիներ վերջը գրվեցին, հետեւաբար Ավետարանը եւ հավատո եւ բարոյականի կանոնները երկար տարիներ «բանիւ բերանոյ», այսինքն անգիր կերպով քարոզվեցին, այսինքն՝ ավանդվեցին: Սրանից բացի բազմաթիվ կետեր այնքան բացահայտ էին եւ այնքան հաստատ կիրարկության մեջ, որ հարկ չկար դրանք գրով ավանդել. այսպէս օրինակ շաբաթ օրվա տեղ կիրակին սուրբ պահելը, մանկամկրտությունը, դրոշմը, Ս. Հաղորդության կատարելու կերպերը եւն. եւն: Սրանից բացի Ս. Գրքում ոչ մի տեղ չի հիշված թե ո՞ր գրքերը կանոնական են եւ որոնք չեն, հետեւաբար, Ավանդութեամբ միայն, այսինքն եկեղեցական իշխանության միջոցով ինքնաբերաբար ճշտվեցին թե ո՞ր գրքերը Ս. Գրքի կանոնի մաս են կազմում եւ որոնք չեն կազմում:

Առարկվում էր նաեւ, որ անգիր կոչված ավանդությունները անխուսափելի կերպով ենթարկվում են փոփոխությունների եւ եղծումների դարերի ընթացքում, սերնդից սերունդ փոխանցման միջոցին: Այս առարկության դեմ պատասխանվում է, որ աստվածային ավանդությունները չեն նմանվում մարդկանց կողմից հնարված ավանդություններին: Այլ

ինչպես որ ճշմարիտ աստվածապաշտության կրոնքը հին Իսրայելի միջոցով անաղարտ մնաց դարերի ընթացքին, հակառակ դրսից ու ներսից կատարված եղծիչ եւ խանգարիչ ազդեցություններին, այնպես էլ քրիստոնեական մաքուր եւ աստվածատուր կամ Ս. Հոգուց ներշնչված ավանդությունները անաղարտ մնացին, որովհետեւ Աստծու նախախնամությունը հսկում էր, որ նրանք անեղծ մնան: Անգիր ավանդությունների ավանդապահը Եկեղեցին է, որ որքան ժամանակ, որ իր մեջ պահում է Աստծու Ս. Հոգին, անսխալական է: Իսկ եթե «Փոփոխություններ» նշարվել են դարերի ընթացքում, դրանք ավելի շուտ աճում եւ բարգավաճում են, քան թե եղծում: Այսպես են օրինակ Ս. Պատարագի եւ Ս. Մկրտության կատարումները, որոնք սկզբնական շրջանում ավելի պարզ եւ այսօր ավելի մշակված եւ կատարելագործված են:

Ավանդության տեսակները. Քրիստոնեական ավանդությունը ավանդատվի կողմից կարող է դիտված լինել.

ա) **Քրիստոսավանդ,** այսինքն ուղղակի Քրիստոսից ավանդված առաքյալներին եւ նրանց միջոցով տարածված քրիստոնյա բոլոր Եկեղեցիներին: Արդարեւ Քրիստոս իր Հարությունից հետո առաքյալներին շատ բան խոսեց, որոնք սակայն չեն արձանագրվել Ավետարանների մեջ: «Յաւուրս քառասուն երեւել նոցա եւ ասել վասն արքայութեան Աստուծոյ» (Գործք, Ա. 3): «Բազում եւ այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ» (Հովհ. Ե. 30): Կամ «Բայց է այլ ինչ բազում զոր արար Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ եւ ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն որ թէ գրեալ էին» (Հովհ. ԻԱ 25): Ուրեմն առաքյալները ամեն ինչ անգիր ստացան Քրիստոսից եւ իրենց ստացածը կամ տեսածն ու լսածը ամբողջությամբ չգրանցեցին. իրենք էլ անգիր ավանդեցին իրենց սովորածը. «Զի ես ընկալայ ի Տեառնէ, զոր եւ ձեզն աւանդեցի» (Ա. Կորնթ. ԺԱ 23):

Ավանդությունները կարող են լինել.

բ) **Առաքելական.** Արդարեւ կան այնպիսի ավանդություններ, որոնք ոչ թե Քրիստոսից տրվեցին, այլ առաքյալներից, իբրեւ Եկեղեցու հիմնադիրներ եւ Քրիստոսի հաջորդներ ու Անոր գործի շարունակողներ: Օրինակ՝ սրբապահությունը փոխանակ շաբաթ օրվան, ծեսերի եւ պաշտամունքի վերաբերյալ կարգադրություններ եւ այլն: «Բայց այլոց ես պատուիրեմ,- ասում է Պողոս առաքյալը,- ոչ եթէ Տեր» (Ա. Կորնթ. Է 12):

Ավանդությունը կարող է լինել նաեւ

գ) **Եկեղեցական,** այսինքն այնպիսի ավանդություններ, որոնք ոչ Քրիստոսից եւ ոչ էլ առաքյալներից են գալիս, այլ գալիս են Եկեղեցու հետագա հովիվներից եւ հովվապետներից կամ ժողովրդից: Մեր Եկեղեցու ավանդությունների մեծ մասը վերագրվում է Ս. Լուսավորչին: Այսպես են առհասարակ բոլոր տոների հաստատումը, շաբաթապահոց դրությունը, խաչակնքելը եւ Եկեղեցական արարողությունների մեծ մասը:

Իսկ ավանդված առարկաների **նյութը** եթե նկատի ունենանք, ավանդությունը կարող է լինել

ա) **Ավանդություն հավատո,** այսինքն դավանանքի վերաբերյալ ավանդություններ, որոնք չեն հիշվել Ս. Գրոց մեջ, կամ աղոտ կերպով ակնարկված են հայրերի մոտ եւ որ սակայն այսօր լայնորեն ընդունված տեսություններ են. օրինակ՝ Սրբոց բարեխոսությունը, Մի բնության վարդապետությունը եւ այն հավատքը, թե մեր աղոթքները կարող են օգնել ննջեցյալներին, որ նրանք Աստծո գութին եւ ողորմության արժանանան:

բ) **Ավանդություն բարուց,** այսինքն բարոյականի վերաբերյալ օրենքներ եւ կամ բարեպաշտական սովորություններ: Օրինակ՝ կիրակի օրերին Եկեղեցի հաճախելը, մոտիկ ամուսնությանց արգելումը, Ս. Հաղորդությունից առաջ ծոմ պահելը եւն, եւն:

գ) **Ավանդություն ծեսերի,** այսինքն խորհրդակատարությունների այս կամ այն կերպ կատարման սովորությունները, Եկեղեցական պաշտամունքի ժամերը, Զրօրինք, Տեառնընդառաջի մոմավառությունը, Զատկի եւ Ծնունդի ճրագալույցները, եւն, եւն:

Իսկ **ավանդատուների** կողմից եթե դիտվի, ավանդությունը կարող է լինել.

ա) **Ընդհանրական,** այսինքն մի ավանդություն, որը պետք է ընդունվի կամ արդեն իսկ ընդունված է աշխարհի բոլոր հավատացյալներից եւ բոլոր Եկեղեցիներից: Այս կարգից են օրինակ Զատկից առաջ քառասնօրյա պահեցողության սովորությունը, Զատկի, Ծննդյան, Հոգեգալստյան տոնակատարությունները եւն:

բ) **Մասնական,** այսինքն այս կամ այն Եկեղեցու կողմից միայն ընդունված, օրինակ լատին Եկեղեցու օրինյալ ջրի սովորությունը, հույների խմորով հացով պատարագելը, հայոց Պատարագի գինու մեջ ջուր չխառնելը եւն, եւն:

զ) **Տեղական.** Միեւնույն Եկեղեցու զանազան շրջանների կամ թեմերի կամ մեծ Եկեղեցիների մեջ տիրող սովորություններ: Օրինակ Երուսաղեմի մեջ Ս. Ստեփանոսի տոնին մասնավոր տոնախմբությունը, Վարդավառի նախատոնակին Ս. Հակոբա նախատոնակ կատարելը են:

Տեւականության կողմից դիտված ավանդությունները կարող են լինել.

ա) **Մշտնջենական,** այսինքն հիմնված ՔՐԻՍՏՈՍԻՑ եւ գործադրված առաքյալներից այն դիտումով եւ նպատակով, որ ոչ մեկ արտաքին իշխանություն կարող չէ փոխել են: Այս շարքից են հավատի բոլոր կետերը՝ ըստ ձեւի եւ ըստ նյութի: Օրինակ Մկրտության խորհուրդը մշտնջենապէս պիտի կատարվի իբրեւ փրկության միջոց, միշտ կատարվելու է ջրով եւ միշտ կատարվելու է հանուն Հոր եւ Որդվո եւ Հոգվոյն Սրբո:

բ) **Փոփոխական,** որ կարող է փոփոխությունների ենթարկվել՝ ժամանակի եւ պայմանների համաձայն: Օրինակ՝ աղոթասացության ժամերը, ժամապաշտության կերպերը, տոների օրերն ու թվականները են, են:

գ) **Առժամանակյա,** որ կարող է ուժի մեջ լինել որոշ դարերի կամ շրջանների տեւողության ընթացքում եւ գործածությունից դադարիլ մի ուրիշ ժամանակում: Օրինակ՝ ապաշխարողները եւ երեխաները (չմկրտվածները) Ս. Պատարագի Խորհուրդին ընդունիլը կամ չընդունիլը, Ս. Աստվածածնի տոնեն առաջ խաղող ուտելը կամ չուտելը են, են: Ինչպէս նաեւ շաբաթ եւ կիրակի օրերին պահք պահելը կամ չպահելը, օրհնությանց քաղվածքները ասելը կամ չասելը: Վերոհիշյալ բաժանմունքը կարող ենք կոչել նաեւ

ա) **Կարեւոր**

բ) **Ազատ:**

Փոփոխականին խորքը կամ նյութը ընկնում է **կարեւոր-** բաժնում, իսկ ձեւը եւ եղանակը կարող է ընկնել **ազատ-** ի բաժնում:

Ավանդության կարեւորությունը.- Ավանդությունը լրացուցիչ մասն է Աստծու գրավոր հայտնության, այսինքն Աստվածաշունչին: Ավանդությունը կարեւոր է նաեւ իբրեւ առաջնորդ ու ուղեցույց Ս. Գիրքը իբրեւ կրոնական գիրք ընդունելու եւ նրա ինչ-ինչ մասերի ուղիղ հասկացության համար: Ս. Խորհուրդները կանոնավոր կատարելու համար, ծեսերի պահպանության եւ մաքրության համար, եւ այս բոլորը իրենց նախնական պարզության եւ մաքրության մեջ պահելու համար:

Ս. Գիրք եւ Ավանդություն.- Աստվածաշունչը, որ մարդկանց տրվել է իբրեւ աղբյուր աստվածաբանության եւ ուղեցույց կյանքի, նախ պետք է իբրեւ այդ ընդունվի եւ հայտարարվի: Մասնավոր անհատների կարծիքով չէ, որ այս ընդունելությունը պիտի հաստատվի, որովհետեւ հաճախ անհատական կարծիքները ճշմարտության հակառակ են դուրս գալիս: Կիրքեր, անձնական հաշիվներ մեջ մտնելով ճշմարտության ուղուց կարող են շեղել անհատներին: Հետեւաբար Ս. Գրքի վավերականությունը հաստատողը Եկեղեցու ընդունած ավանդությունը պիտի լինի:

Այս սկզբունքը կիրառելի է նաեւ Ս. Գրքի մեկնության պարագային: Ս. Գրքի մեջ քիչ չէ թիվը դժվար հասկացվող կետերի եւ անըմբռնելի խորագոյն ճշմարտությունների: Պետրոս առաքյալ, ակնարկելով Ս. Պողոսի թղթերին, ասում է. «յոր գտանի ինչ ինչ դժուարիմաց, զոր ուսմունքն եւ յողողոք կամակորեն, որպէս եւ զամենայն գիրս, առ իւրեանց անձանց կորուստ» (Բ. Պետ. Գ 16): Ս. Գրոց դժվարիմանալի կետերի վրայից քողը վերացնելու համար անհրաժեշտ է ավանդության օժանդակությունը: Հետեւաբար Ս. Գրքի հետ Ավանդությունը կարեւոր է քրիստոնեական կրոնի ուսման մեջ:

Սակայն որպէսզի Ավանդության մասին կազմված կարծիքը իր ծայրահեղության չտարվի, ոչ էլ ստորագնահատվի նրա արժեքն ու կարեւորությունը, պետք է ասել, որ Աստվածաշունչում մեր փրկության համար հարկավոր բոլոր ճշմարտությունները հայտնված են: Աստվածապաշտության կամ ծիսակատարություններին վերաբերյալ մանրամասնություններն են, որ պակասում են Աստվածաշունչում: Դրանք Ս. Գրքում զանց առնվել են ոչ թե որովհետեւ կարեւոր չէին, այլ որովհետեւ ամեն օր կատարվող եւ գարծադրվող իրողություններ էին առաքելոց կամ նրանց հաջորդների կողմից Եկեղեցիի, այսինքն հավատացյալների ժողովում եւ նրանց աչքի առաջ, հետեւաբար բոլորին ծանոթ լինելով պետք չէ տեսված գրի առնելու: Դրանից բացի, դրանք այսպիսի կետեր էին, որոնք ժամանակի պահանջների եւ պայմանների համաձայն պիտի ենթարկվեին աճման եւ կատարելագործումի: Հետեւաբար նրանք պահվեցին եւ աստիճանաբար մշակվեցին ավանդությամբ:

Բացահայտ ճշմարտություն է, որ թե՛ Ս. Գրոց եւ թե՛ Ավանդությանց միեւնույն Հոգին է, հետեւաբար ավանդությունը չի կարող հակասել Ս. Գրքին, ուր որ հակասություն է նշմարվում Ս. Գրքի եւ Ավանդության միջեւ, այդ կամ այն է, որ սխալ հասկացողություն կա, եւ կամ, եթե իրապես նման մի բան գոյություն ունի, այդ պարագային սխալվողը անպատճառ Ավանդությունն է: Շնորհալին ասում է. «Աւանդութիւն Եկեղեցւոյ մերոյ, զոր ունինք, ի վկայութենէ Աստուածաշունչ Գրոց հաստատեալ են» (Ընդհանրական): Արդարեւ, այս երկուսը՝ Ս. Գիրքը եւ Ավանդությունը կազմում են մի միացյալ ամբողջություն եւ փոխադարձաբար լույս են սփռում իրար վրա:

Պատմություն Քրիստոնեական Ավանդության. Քրիստոնեական Ավանդության սկզբնական աղբյուրը նույնինքն Քրիստոսն է: Իր երկրավոր կյանքի ընթացքում Քրիստոս իր «Ավետարանը», այսինքն հավիտենական երջանկության եւ փրկության զվարթ պատգամը տվեց իր կենդանի խոսքով: Գրավոր ոչինչ չձգեց իր առաքյալներին կամ իր Եկեղեցուն: Նույնը արեցին առաքյալները. նրանցից ոչ ոք չնտածեց «բանավոր» ավանդությունը գրավորի վերածել երկար ժամանակ, ու եթե Պողոս առաքյալ մտածեց իր հիմնած Եկեղեցիներից ոմանց նամակներ գրել, իր նպատակը չէր երբեք բանավոր ավանդությունը, որը նրանց «նախ ավանդած» էր, գրավորի վերածել, այլ իր թուղթերը գրեց իր հիմնած Եկեղեցիների մեջ ծագած ինչ-ինչ խնդիրներ լուծելու կամ հավատացյալները քաջալերելու եւ ամրապնդելու համար նեղությունների ժամանակ, կամ նրանց հանդիմանելու իրենց սայթաքումների համար: Ընդհակառակը՝ իր գրավոր թուղթերի մեջ իսկ նա ակնարկում է, որ «պինդ բռնեն այն ավանդութիւնը, զոր սովորած էին իրանից» (Բ. Թեսլ. Բ 15): «Ով Տիմոթէ, պահեա գաւանդն» (Ա. Տիմթ. 20): Այս Պողոս առաքյալի մեզ ծանոթ վերջին գրավոր խոսքերից մեկն է:

Աստիճանաբար այս բանավոր ավանդության քովն ի վեր աճեց եւ գրավոր ավանդությունը: Այնպես, որ Պողոս առաքյալ հավասար գետնի վրա էր դնում իր բոլոր ուսուցումները, հոգ չէ, թե նրանք կատարված լինեին «բանիւ բերանոյ» կամ գրավոր ձեւով: Ի զուր է փնտրելը Ս. Գրքի մեջ որեւէ ակնարկություն կամ խոսք, որ թելադրե մեզի այն գաղափարը, թե գրավոր ավանդությունը բանավորի վրա ինչ-որ առավելություն ունենա կամ հակադարձաբար: Սկզբնական շրջանում գրավոր եւ անգիր ավանդությունը իրարու խառնված էին՝ կազմելով ճշմարտության միակ վճիտ ու կեդանի ջուր պարունակող մի գետ, որից ընկում էին բոլոր հավատացյալները՝ առանց հետաքրքրվելու, թե իրենց ստացած կյանքի ջուրը գրավոր է, թե՞ անգիր: Սկզբում գրավորը եւ անգիրը երկու տեսակներն էին մեկ եւ նույն «կենաց բանին», երկուսը միասին կազմում էին գլխավոր Ավանդությունը:

Սակայն ստույգ եւ բնական է սա իրողությունը, թե գրվածը ավելի մնայուն նկարագիր էւ ձեւ է ստանում, քան թե բանավոր պատմածը: Հետեւաբար քրիստոնեական ավանդությունները աստիճանաբար գրի առնվեցին եւ այսպես առաջ եկան, բացի Պողոսի թուղթերից, Քրիստոսի կյանքի եւ խոսքերի հավաքածոներ, որոնք հետո վերածվեցին Ավետարանների: Հետո աստիճանաբար կազմվեցին առաքելական կանոնները, ժողովական որոշումները, ժամագրքեր, խորհրդատատրեր, տոնոցույցներ եւ այլն, եւ այլն: Հակառակ գրավոր ավանդության այս մեծ մթերքին, բանավոր ավանդությունը ոչ միայն չդադարեց գոյություն ունենալուց, այլ նաեւ շարունակեց պահել իր կարեւորությունը եւ պիտի շարունակե պահել մինչեւ աշխարհի կատարածը:

ԵԿԵՂԵՑԻ

Քրիստոնյա Եկեղեցու ծագումը, կազմակերպությունը եւ մինչեւ այսօր գոյության պահպանումը մի հրաշալի երեւոյթ է աշխարհի պատմությունում: Ոչ մեկ կրոնական կամ ընկերային շարժում կամ կազմակերպություն կարելի է բաղդատել նրա հետ: Ոչ մեկ մարդկային ընկերություն ենթակա եղած է արտաքին այնքան ծանր հավածանքների եւ նեքին քայքայիչ հարձակումների, որքան ենթարկված է քրիստոնեական Եկեղեցին: Ոչ մեկ կրոնական շարժում այնքան երկար ժամանակ պահել է իր կրոնական կենսունակությունը, առաքելական ոգին, տարածվելու եւ ամբողջ մարդկությունը իր մեջ առնելու իտեալը որքան արել է եւ անում է քրիստոնեական Եկեղեցին:

Արտաքին, այսինքն անհավատների եւ այլակրոնների կողմից քննադատական հարձակումներ, կատարված առհասարակ Քրիստոնեական Եկեղեցու դավանանքին, դեմ են Աստծո գոյության, Ս. Երրորդության վարդապետության, Քրիստոսի Աստվածության դեմ: Իսկ ներսից, այսինքն հերետիկոսներից եւ հերձվածողներից եկած քննադատություններ առ հասարակ Եկեղեցվո ըմբռնումին, վարչակարգին եւ խորհուրդներին դեմ են ուղղված: Հետեւաբար աստվածաբանական ջատագովության նպատակն է մարդիկ հավատքի բերել եւ զանոնք **քրիստոնյաներ** անել, իսկ Եկեղեցու մասին կատարված ջատագովության եւ բացատրությունների նպատակն է ենթական **ուղղափառ** քրիստոնյա անել:

Քրիստոնեական Եկեղեցու պատմության յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է իր հրատապ խնդիրը, որով մասնավորաբար մտագրավվել են Եկեղեցու վարիչներն ու հավատացյալները: Օրինակ Եկեղեցու սկզբնական շրջաններին հրատապ հարց էր, թե հեթանոսությունից դարձած քրիստոնյաները պարտավո՞ր էին պահել հրեական օրենքները, կամ Քրիստոսի մարմինը իրակա՞ն էր, թե՞ երեւութական, ետքի շրջաններին՝ Քրիստոս քանի՞ բնություն ուներ, պատկերները պե՞տք էր հարգվեին, ո՞րն էր նախապատիվ աթոռը քրիստոնեական եկեղեցու մեջ եւ այլն: Ներկա ժամանակների մեծագույն հարցերը եկեղեցագիտական հարցերն են. ի՞նչ է Եկեղեցին, ի՞նչ է նրա կազմությունը, ի՞նչ է նրա իրավասությունը, որտեղի՞ց է ստանում նա իր իրավասությունները եւ այլն, եւ այլն:

Հետեւաբար կարելու է այս նյութին ուսումնասիրությունը, հատկապես Հայաստանյայց Եկեղեցու պաշտոնյաների համար, որովհետեւ Եկեղեցու ըմբռնումը բոլորովին շփոթված է մեր ժամանակներում մեր Եկեղեցու այսպես կոչված «զավակների» մեջ: Այժմյան մեր «Եկեղեցական խնդիր»-ը գրեթե ամբողջությամբ հետեւանք է Եկեղեցու, նրա հորինվածքին, նրա իրավասությանց եւ նպատակների մասին տարածված սխալ տեսակետների: Հետեւաբար Եկեղեցու պաշտոնյայի առաջին եւ ամենակարելու ճանաչելիք նյութը իր Եկեղեցին է, որին ծառայելու եւ պաշտպանելու կանչված է նա:

Ի՞նչ է Եկեղեցին.- Հայերեն «Եկեղեցի» բառը աղավաղյալ տառադարձությունն է հունարեն «էկլեսիա» բառին, որ նշանակում է «կոչումն», ինչպես Եղիշե վարդապետ հաստատում է. «Եկեղեսիա կոչումն անվանի... որպէս ի ցրմանէ ի ժողովումն» (Մեկնթ. Հեսվա): Ուրեմն «Եկեղեցի» պետք է նշանակե առատապես «ժողովումն կոչեցելոց»: Այս իմաստով Պողոս առաքյալ հաճախ քրիստոնյաներին անվանում է «կոչեցեալս»: Այս իմաստով մեր նախնի վարդապետներից ոմանք եկեղեցու շենքը անվանած են «կոչորան»: «Ի սուրբ կոչարանին ընթեռնուլ թուղթն աստուածաքարոզ առաքելոյն Պաւլոսի» (Քոթնավոր): Իր սկզբնական շրջանում եկեղեցի բառը գործածվում էր նշանակելու համար «ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքին համար ի մի համախմբեալ քրիստոնեայ ժողովուրդը»: Իսկ ներկայիս բառը ավելի հատկական իմաստ առել է եւ մասնավորաբար գործածվում է քրիստոնյա կազմակերպյալ ընկերության համար եւ համառոտ կերպով այսպես է սահմանվում. «ժողով հաւատացելոց»: Իսկ ընդարձակ սահմանով՝ «ժողով հաւատացելոց, որոնք մեկ հավատքով եւ մեկ մկրտությունով կապված են Քրիստոսի՝ իրենց Տիրոջ եւ Փրկչին, կպաշտեն մեկ ճշմարիտ Աստուած՝ Ամենասուրբ Երրորդությունը, մեկ հաստատուն յույսով կակնկալեն փրկութեան եւ Աստուծո երանական տեսութեան, եւ մեկ անկեղծ սիրով միացած են իրարու Ս. Հոգիով, ի հաղորդութիւն են նոյն խորհուրդներու, եւ կը կառավարուին նոյն նուիրապետական իշխանութեամբ»:

Մի առ մի մեկնենք այս սահմանումի բառերը:

«ժողով».- ժողով ենթադրում եւ շեշտում է բազմության գաղափարը: Մարդիկ, որոնք ի մի հավաքվում են **մասնավոր նպատակով**:

«Հաւատացելոց».- Հավատացող լինելը առաջին պայմանն է Եկեղեցու մաս կազմել կարենալու համար:

«Մեկ հաւատքով».- Եկեղեցու անդամները ազատ չեն յուրաքանչյուրը ինք իր գլխին իր հավատամքը շինելու, ոչ էլ հավատամքի մեկ մասին հավատալու, եւ մյուս մասին չհավատալու: Եկեղեցու մեջ մեկ հավատք կա, որ Եկեղեցու բոլոր անդամները պարտավոր են ընդունիլ առանց խտրության:

«Մեկ Մկրտութեամբ».- Մկրտությունը մի անդամի վրա միայն մի անգամ է կատարվում: Առանց Մկրտության ոչ ոք կարող չէ Եկեղեցու ամդամ լինել:

«Կապուած Քրիստոսի».- Քրիստոս Եկեղեցու անտեսանելի գլուխն է: Մարմինը կատարյալ եւ ամբողջական կլինի միայն գլխով: Անդամները կարող չեն անկախաբար գոյություն ունենալ, նրանք պետք է մի գլուխ ունեցող մի մարմնի մաս կազմեն: Եկեղեցու

անդամները Քրիստոսից կանչվելով միայն կարող են մասնակից դառնալ Իրանից բխող եւ քրիստոնյան քրիստոնյա դարձնող շնորհներին:

«Իբրեւ Տիրոջ եւ Փրկչի».- Քրիստոսին Տեր ու Փրկիչ դավանելը նախապայման է Եկեղեցու անդամ լինելուն: Այս երկու բառերի մեջ անփոփոխում է նաեւ Քրիստոսի Աստվածությունն ու Մեսիայությունը:

«Կը պաշտեն».- Պաշտամունքը քրիստոնեական Եկեղեցու առաջին պարտականությունն է: Եկեղեցին **կեկեղեցիանա**, այսինքն հավաքաբար ի մի **կժողովի** Աստծուն պաշտելու համար:

«Մեկ Ճշմարիտ Աստուած».- Այս բացատրությունը մեկ կողմ է հալածում որեւէ բազմաստվածության գաղափար կամ սուտ աստվածներ պաշտելու ամբարշտությունը, որը կիրարկում են հեթանոսները:

«Ամենասուրբ Երրորդութիւն».- Մեկ ճշմարիտ Աստվածությունը քրիստոնեության մեջ հայտնվում է երեք դեմքերով՝ Հայր, Որդի եւ Ս. Հոգի: Ս. Երրորդութեան պաշտամունքը հատուկ է լոկ քրիստոնեությանը:

«Հաստատուն Յոյսով».- Եկեղեցու ունեցած հույսը փափագ կամ երագ չէ, այլ հիմնված է հաստատ հավատքի վրա:

«Կակնկալեն փրկութեան».- Երբ Եկեղեցու մի անդամը փրկվում է, այսինքն ազատվում է մեղքի եւ սատանայի կապանքներից, որը մեր հավիտենական ազատագրման առաջին քայլն է, դրան ինքնաբերաբար հաջորդում է Աստծու տեսության արժանանալու կարելիությունը: Այս երեւակայելի գեագոյն երջանկությունն է եւ քրիստոնեական կյանքի վերջնական նպատակը:

«Մեկ անկեղծ սիրով միացած».- Սերը շաղախն է, որ միացնում է քրիստոնեական Եկեղեցու քարերը, անդամները, եւ նրանց վերածում է այն գեղեցիկ, կենդանի եւ հսկայական Տաճարին, որ քրիստոնեական Եկեղեցին իսկ է:

«Ս. Հոգիով».- Եկեղեցում գործող եւ այն միության եւ շնորհների մեջ պահողը Ս. Հոգին է: Ս. Հոգու ազդեցությամբ առաջ եկած սերը մի կողմից իրարու.....?

«Ի հաղորդութեան են նոյն խորհուրդներուն».- Սա տեսանելի փաստն է քրիստոնեական Եկեղեցու միության: Երբ որոշ մի Եկեղեցում մկրտվածը ընդունվում է մի ուրիշ Եկեղեցու կողմից իբրեւ իր անդամ, երբ այլեւայլ տեղական Եկեղեցիների անդամները կարող են մոտենալ իրարու Ս. Սեղաններին Հաղորդության համար, եւ վերջապես մի Եկեղեցու ձեռնադրած քահանան ընդունվում է մի ուրիշի կողմից, գործնականում այդ Եկեղեցիներում միություն կա: Խորհուրդների այս հաղորդությունը ինքնին մի նշան է հավատքի միության:

«Կկառավարուին նոյն նուիրապետական իշխանութեամբ».- Այս հաստատումը Եկեղեցու մեջ ամենից առաջ ենթադրում է **մի իշխանություն**, որը **նվիրապետական** է, այսինքն մի իշխանություն, որը ոչ թե այսպես կոչված «բարոյական» է, այլ աստվածային է եւ տարբեր բոլոր մյուս իշխանություններից, որոնք կամ մարդերից են բխում, կամ էլ օրենքներով ու ժառանգությամբ են ստացվում: Այս իշխանության ակը եւ աղբյուրը **նվիրական** է, Սրբազան է, ուրիշ խոսքով՝ տարբեր է մարդկային իշխանություններից: Եկեղեցին ունի միայն մեկնվիրապետական իշխանություն, եւ հավատացյալները կառավարվում են այդ միակ նվիրապետական իշխանությամբ : Այս սահմանումը չի ժխտում Եկեղեցու մեջ շրջանային կամ ազգային Եկեղեցիների ինքնավարության ու ինքնիշխանության սկզբունքը, բավ է, որ այդ ուրույն եւ ինքնավար իշխանությունները ճանաչված լինին իբրեւ այդ իրարուց եւ Եկեղեցու ամբողջությունից: Տիեզերական ժողովները ճանաչեցին պատրիարքական հինգ աթոռներ: Նրանք էլ ճանաչեցին իրենց շրջանակներում առավել կամ նվազ ինքնավար Եկեղեցիներ: Վարչական միությունը կարելի է Եկեղեցու միության համար:

Մասունք Եկեղեցույ.- Առանց եղծելու Եկեղեցու ամբողջությունը, կարելի է այն բաժանել մի քանի մասերի՝ այն դիտելով տարբեր անկյուններից: Ի գոյություն, եղած Եկեղեցին կարելի է երեք մասի բաժանել:

Ա. Հաղթական Եկեղեցի.- Կոչվում է նաեւ **Անդրանկաց Եկեղեցի**, որը կբաղկանա երկնքում ապրող հրեշտակներից եւ հրեշտակացյալ մարդկանց հոգիներից, այսինքն սրբերից: Ավետարանի բացատրությամբ նրանցից, որոնք դատաստանի պիտի չմտնեն, այլ «փոխեցան ի մահուանէ ի կեանս»:

Բ.- Նրանցից, որոնք թեև մեռած են, բայց հավատում են, որ ի սպառ չեն կորսված, եւ որոնք շնորհիվ Եկեղեցու աղոթքին, կարող են հավիտենական փրկության արժանանալ, անոնք, որոնց համար հոգեհանգիստ ենք անում:

Գ. Զինվորյալ Եկեղեցի.- Այսինքն երկրի վրա ապրող եւ չարության դեմ պայքարող Եկեղեցին:

Զինվորյալ Եկեղեցին բաժանվում է երկուսի:

ա) **Ուսուցանող Եկեղեցի**, այսինքն Եկեղեցու հովիվների ամբողջությունը:

բ) **Ուսանող Եկեղեցի**, այսինքն աշխարհիկ հավատացյալների ամբողջությունը: Հետեւյալ մեջբերումները հայտնաբերում են այս զանազանությունը Եկեղեցում: «Զգոյշ կացէք անձանց» խոսքը ուղղվում է Եկեղեցու երեցներին, «Եւ **հօտիդ**, յորում եդ գծեզ Հոգին Սուրբ տեսուչս (Եպիսկոպոս) հովուել **գժողովուրդ** (ուսանող Եկեղեցի) Տեառն, զոր ապրեցոյց արեամբն իւրով» (Գործք Ի 28):

Աշխարհագրականորեն դիտված կա.

ա) **Ընհանրական Եկեղեցին**, որ տիեզերական Եկեղեցին է ցրված աշխարհի ամեն կողմերը: Այս Եկեղեցին իր միության մեջ դժբախտաբար ներկայիս գոյություն չունի:

բ) **Միասնական Եկեղեցին**, այսինքն ազգային զանազան եկեղեցիները՝ Հունական, Հռոմեական, Հայկական, Ասորական, Կիպրիական եւ այլ Եկեղեցիներ:

գ) **Տեղական Եկեղեցի**, այսինքն Կորնթական, Թեսաղոնիկեի, Երուսաղեմի եւ այլ Եկեղեցիներ:

դ) **Առտնին Եկեղեցի.-** Ժողով հավատացելոց մեկ տան մեջ հավաքված (Հռովմ. ԺՁ 3-5):

ե) **Նյութական Եկեղեցի.-** Այն շենքը, ուր հավաքվում են կենդանի Եկեղեցու անդամները՝ աղոթքի եւ պաշտամունքի համար:

Հորինվածքի տեսակետից դիտելով կան.

ա) **Աներեւույթ Եկեղեցի**, որ նույն ժամանակ կոչվում է **Հոգի Եկեղեցվո**, որ բաղկացած է Եկեղեցու **հոգեւոր** եւ **գերբնական** տարրերից: Դրանք են **սրբարար շնորհքը**, **հավատքը**, **հույսը**, **սերը** եւ այլ նման պարգեւներ՝ Եկեղեցուն բաշխված աներեւութապես՝ Ս. Հոգու միջոցով:

բ) **Երեւելի Եկեղեցի**, այսինքն Եկեղեցու **մարմինը** դրանք են՝ **մարդերը**, որոնցից կազմված է Ան, **խորհուրդները**, **արարողությունները**, **ծեսերը**, **Եկեղեցու** նվիրապետությունը: Այս երկուսը սակայն իրարուց անբաժանելի են, ինչպես հոգին մարմնից: Առաջին մասը շեշտողները այն «հոգեւոր» աղանդավորներն են, որոնք սունկի պես բուսնում են Եկեղեցու ծոցում ու ապա կորսվում՝ աշխարհին կապված մարմին չունենալով: Իսկ երկրորդ մասին վրա միայն շեշտ դնողները վերածվում են ավանդապաշտ եւ «ծիսապաշտ հերձվածողներու, որոնք իրենք իրենց մեջ կքաշուին, տակաւ առ տակաւ կը պզտիկնան եւ ապա կաներեւութանան պատմութենէն, եթե զանոնք պահելու ճիգեր չթափուին իբրեւ միզեական արժեք»:

Անոնք, որ կընդունին թե Եկեղեցին լոկ **հոգի** է առանց արտաքին տարրերի, **աներեւույթ է** առանց տեսանելի մարմնի, Աստուծո միայն ծանոթ է այդ Եկեղեցու գոյությունը եւ անդամների թիվը, սխալվում են եւ վտանգում Եկեղեցու գոյությունը երկրի վրա: Եկեղեցին ստույգ է, որ մի **հոգեւոր** հաստատություն է, բայց **տեսանելի** մի կազմակերպություն է նույն ժամանակ: «Քաղաք (Եկեղեցի) որ ի վերայ լերինն կայցէ ոչ կարէ թաքչիլ»: Ս. Պողոս ասում է. «Հալածէին զԵկեղեցի Աստուծոյ»: Եթե Եկեղեցի կոչվածը լոկ **հոգի** լիներ, Պողոս աներեւույթ ինչի՞ դեմ կըվում էր: Մեր Զաքարիա կաթողիկոս ասում է. «Որպես շուշան երեւի եւ վայելուչ է ի մէջ զանազան խոտոյ, այսպէս սուրբ Եկեղեցի Քրիստոսի հրաշափառ փայլեալ ծագեսցէ ի մէջ ազգաց»:

Պատմականորեն դիտված՝ Եկեղեցին սկսած է մարդկության ստեղծումով. մարդկության այն մասը, որոնց Աստված տակավ առ տակավ իր կամքը հայտնեց, կազմեց Եկեղեցին: Համաձայն զանազան տեսությանց այն անուններ կրեց:

Ըստ այսմ.

ա) **Նախնի Եկեղեցի** ասվեց Ադամից մինչեւ Նոյ, այսինքն ջրհեղեղյան նահապետներով կառավարվող ժողովուրդը:

բ) **Նահապետական Եկեղեցի** կոչվեց Նոյից մինչեւ Մովսես: Մովսեսով օրենք եւ ծեսեր ավանդվեցին Աստուծո ընտրած ժողովրդին եւ դրանից հետո այն կոչվեց **Մովսիսական** կամ **ընդ-օրինական** Եկեղեցի: Իսկ Քրիստոս եկավ եւ Իրանով մի նոր ուխտի հիմքը դրվեց եւ Նրա հաստատած Եկեղեցին կոչվեց **քրիստոնեական** Եկեղեցի:

Նվիրապետություն Եկեղեցու

Եկեղեցու պաշտոնյաների աստվածադիր կարգը կոչվում է **նվիրապետություն**, որի նպատակն է կառավարել, ուսուցանել եւ սրբացնել Եկեղեցու անդամներին: Արդարեւ Եկեղեցու մեջ կան զանազան աստիճաններ իշխանության, որոնցից ոմանք փոքր են, ոմանք միջին եւ ոմանք վերին: Սրանք խմբական կերպով կոչվում են **եկեղեցականներ, հոգեւորականներ** կամ **կղերականներ**:

Քրիստոնեական նվիրապետության հաստատումը սկսում է առաքյալներով: Հիսուս Իր հետեւորդներից 12 հոգի ընտրեց եւ նրանց մասնավոր դաստիարակություն եւ մասնավոր իշխանություն տվեց: Այս աշխարհը թողնելուց առաջ նրանց վրա «փչեց» եւ ասաց. «Առէք Հոգի Սուրբ»: Իսկ Նրա վերջին հրահանգը եղավ. «Որպէս առաքեաց զիս Հայր եւ Ես առաքեմ զձեզ... գնացէք... **աշակերտեցէք** զամենայն հեթանոսս, **մկրտեցէք** զնոսս...»: Պողոս առաքյալ ասում է. « Եւ ոչ եթէ անծամք ոք առնու պատիւ, այլ կոչեցեալքն յԱստուծոյ» (Գործք Ի 28): (Տես նաեւ Տիտ. Ա 5): Պողոս առաքյալը Հիմենեսը ու Աղեքսանդրոսը «Սատանային մատնելով» կիրարկված եղավ նվիրապետական իշխանությանը (Ա Տիմ. Ա 20):

Անապականելիություն Եկեղեցվո. Քրիստոնեական Եկեղեցին օժտված է երկու կարեւոր հատկություններով, սրանցից մեկը Անապականելիությունն է, որ նշանակում է Եկեղեցու տեսականությունը մինչեւ աշխարհի կատարածը: Աստուծո հրեշտակը Եկեղեցու հիմնադրի համար ասել է. «Նա (Քրիստոս) եղիցի Մեծ եւ Որդի Բարձրելոյ կոչեսցի... թագաւորեսցէ յաւիտեան» (Ղուկ. Ա 32): Քրիստոս ասաց. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 20): «Դրունք դժոխսց զնա (Եկեղեցի) մի յաղթահարեսցեն» (Մատթ. ԺԶ 18):

Իսկ Հայրերից Ոսկեբերան ասում է. «Դիրագոյն է արեգական շիջանիլ, քան Եկեղեցւոյ խաւարիլ»: Ջաքարիա կաթողիկոս ասում է. «Դու, Եկեղեցի, տեսել բավես մինչեւ յերեսել Փեսային հայրական իշխանութամբ»: Սահակ կաթողիկոս ասում է. «Եկեղեցի, որ սկիզբն կալավ յերկրի, ոչ անցանէ»:

Քրիստոս արդարեւ հաստատեց Եկեղեցին որպէս զի նրա միջոցով առաջ տարվի եւ շարունակվի Իր առաքելությունը եւ աշխարհ գալու նպատակը, որ էր մարդկանց դէպի փրկություն առաջնորդել: Եթե հնարավոր լինի, որ Եկեղեցին պակասի, այսինքն ջնջվի երկրի երեսից, ինչպէ՞ս պիտի շարունակվի իր առաքելությունը եւ հետագա սերունդները ինչպէ՞ս փրկվելու են, քանի որ Եկեղեցուց դուրս փրկություն չկա:

Անսխալականություն Եկեղեցու. Քրիստոնեական Եկեղեցու մյուս կարեւոր հատկանիշն է **անսխալականությունը**, որ նշանակում է, թե Աստուծո Ս. Հոգու օժանդակությամբ Եկեղեցին զերծ եւ ազատ է մնում մոլորություններից, հատկապէս հավատքի եւ բարոյական սահմանների մեջ: Սա մի անհրաժեշտ հատկություն է, որովհետեւ եթե Եկեղեցին անսխալական չլիներ, հավատացյալները միշտ մոլորության վտանգի մեջ կլինեին եւ չէն կարող վստահ լինել, թե քրիստոնեական ուսմունքը, որը իրենց սովորեցնում էին, որքան ուղիղ կամ սխալ է:

Քրիստոս ասում է. «Աղաչեցից զՀայր եւ այլ մխիթարիչ տացէ ձեզ, զՀոգին ճշմարտության, զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեանս»: Երբ Հոգին ճշմարտության Եկեղեցու մեջ է, այն չի կարող սխալիլ: Ս. Պողոս գրում է. «Գիտացես թե որպէս պարտ լիցի քեզ ի տանն Աստուծոյ շրջել, որ է Եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան» (Ա. Կիմ. Գ 15):

Ոսկեբերան ասում է. «Ոչ ծերանայ Եկեղեցի, ոչ նուաճի, եւ ոչ դիմամարտից յաղթահարի... քանզի Քրիստոս վասն Նորա չարչարեցաւ, դրունք դժոխսց զնա մի յաղթահարեսցեն»: Աբրոսիոս ասում է. «Թէպէտեւ ի մրրկաց յաճախ կոծեալ սակայն չէ եւ չէ հնար Եկեղեցւոյ նաւաբեկիլ»:

Եկեղեցու այս երկու հատկությունները իրարուց անբաժանելի են, Եկեղեցին **անպակասելի** է, որովհետեւ անսխալական է: Եթե Եկեղեցին սխալական չլիներ, կորսնցնելու էր իր Ուղղափառությունը. մի մոլորված Եկեղեցի չէր կարող վայելել Աստուծո հովանավորությունը եւ պիտի կորսվեր, ինչպէս եղած է եւ պիտի լինի վախճանը բոլոր հերոսիկոս եկեղեցիներին: Ուրեմն Եկեղեցու համար անպակասելի ասելը միանգամայն անսխալելի ասել է փոխադարձաբար:

Եթե Եկեղեցին **մարմին է Քրիստոսի** (Եփս. Ա 22-23, Կող. Ա 24), որչափ ժամանակ ինք կենդանի է, մարմինն էլ ողջ առողջ է մնալու իր հետ: Եթե Եկեղեցին **Աստուծո**

թագավորությունն է (Մատթ. ԺԳ 41, Ա. Պետ. Թ 9), որժամանակ Աստծու կամքը թագավորում է Եկեղեցու մեջ, Եկեղեցին մնալու է անսխալ:

Նշանք Եկեղեցվո.- Բացի վերոհիշյալ հատկություններից, որոնք մաս են կազմում իր բնության (ինչպես բանականությունը մարդկային բնության) Եկեղեցին եւս ունի նշաններ, որոնք իր ուղղափառության ցուցիչներն են: Այս նշանները չորսն են եւ հիշվել են Հավատամքում: «Հաւատամք ի մի միայն Ընդհանրական, Առաքելական եւ Սուրբ Եկեղեցի»: Խոսենք այս նշանների վրա մի առ մի:

Միություն Եկեղեցվո.- Մեկ է քրիստոնեական Եկեղեցին եւ միայն կարող է մեկ լինել: Մեկ է նախ իր **գլուխով** եւ սկիզբով, որ է Քրիստոս. Մեկ է իր **վախճանով**, որ է հավիտենական երջանկություն: Մեկ է իր վախճանը հետապնդող **միջոցներով**, դրանք են հավատք, սեր, խորհուրդներ եւ Եկեղեցվո օրենքները. «Մի հավատք, մի մկրտություն» (Եփս. Դ 5). Մեկ է **Հոգիով** « Եթե բաժինք շնորհաց են, այլ Հոգին նոյն է» (Ա Կորնթ. ԺԲ 4): Մեկ է իբրեւ հավաքականություն. «Մի մարմին ենք ի Քրիստոս, այս իւրաքանչիւր միմիանց անդամք ենք» (Հռմ. ԺԲ 5): Մեկ է ըստ **վարչական դրության** (եպիսկոպոսապետ, սպիսկոպոս, քահանա, սարկավագ ու սպասավորք Եկեղեցվո):

Սուրբ Գրքից ապացույցներ. «Մի է աղանի իմ, կատարեալ իմ» (Երգ. Զ 8): Այլաբանական մեկնությամբ Փեսան-Քրիստոս ասում է այս իր հարս-Եկեղեցու մասին. «Եկեղեցին մի հօտ եւ մի հովիւ» (Հովհ. Ժ 14): Առաքյալը ասում է. «Մի մարմին եւ մի հոգի» (Եփ. Դ 4):

Ս. Հայրերից ապացույցներ.- Ս. Աթանաս ասում է. «Ճշմարտ վարդապետաց նշան՝ համաձայնութիւն ամենեցուն ընդ իրեարս, եւ ոչ ընդդիմաբանել միմիանց եւ կամ հարցն իւրեանց վարդապետութեան»: Հովհաննես Իմաստասեր ասում է. «Զի մի քայքայեալ ցրուիցին մերձ ի դժոխս, գեղեցկապես միաւորեալ Քրիստոսի անդամք, այլ ամենեքին միոյ գաւթի, միոյ Քրիստոնեական գաւազանին յարդարեսցին լինիլ հօտ»: Լամբրոնացին ասում է. «Քանզի մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի Եկեղեցի գանազան ազգաց որոշեալ, մի մկրտութեամբն ծնեալ, եւ Քրիստոսի անուանեալ»: Անձեացին ասում է. «Առաքելական Եկեղեցիք թէպէտեւ ընդ բազում տեղիս են, սակայն **Մի** ասի վասն միասնական հաւատոցն»: Իսկ երբ **Եկեղեցի** բառը հոգնակի գործածվի, այդ վերաբերում է միասնական կամ տեղական Եկեղեցիներին. օրինակ՝ «Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապես զարդարեցան»: Ճշմարտությունը մեկ է, իսկ ստությունը՝ շատ, հետեւաբար ճշմարտության ընդունարանը եւ տարածիչը՝ Եկեղեցին, կարող է միայն մեկ լինել:

Ըստ այսմ, միություն Եկեղեցվո ասելով հասկանում ենք նրա դավանության եւ վարդապետության նույնությունը, որ Եկեղեցին ունի Քրիստոսի, Ս. Երրորդության մասին, Եկեղեցու մասին եւ Ս. Գրոց մասին: Բոլոր ճշմարիտ քրիստոնյաները, որոնք Սուրբ Գրքով եւ ավանդությամբ մեզ տրված հավատքով եւ պատվիրանապահությունով եւ իրենց հովիվների հետ միացած, շաղկապված են Քրիստոսի միջոցով, Եկեղեցու այս միության մեջ են, Եկեղեցվո լրության ամբողջացուցիչ մասերն են, որոնց ամբողջությունը կազմում է Քրիստոսի **մի միայն** ճշմարիտ Եկեղեցին: Այս գաղափարը սքանչելի եւ հստակ կերպով պարզում է Պողոս առաքյալ Եփեսացվոց Թուղթի Դ գլխի 1-16 համարներում, որոնք արժե առաջ բերել իրենց կարեւորության պատճառով:

«Աղաչեմ զձեզ... արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք, ամենայն խոնարհութեամբ եւ հեզութեամբ եւ երկայնամտութեամբ անսալ միմիանց սիրով: Փութալ պահել **զմիաբանութիւն** հոգւոյն յօղիլ խաղաղութեան: **Մի մարմին** եւ **մի հոգի**, որպէս եւ կոչեցարուք ի **մի յոյս** կոչման ձերոյ: **Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի Աստուած եւ Հայր ամենեցուն**, որ ի վերայ ամենեցուն, որ ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին եւ յամենեսին ի մեզ: Այլ իւրաքանչիւր ումեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի... եւ Նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, հովիւս եւ վարդապետս ի հաստատութիւն սրբոց, ի գործս պաշտաման, ի շինուծ մարմնոյն Քրիստոսի մինչեւ հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց եւ ի գիտութիւն որդւոյն Աստուծոյ, յայր կատարեալի չափ հասակի կատարման Քրիստոսի: Զի մի յայսմիտեւ իցեմք տղայք խռովեալք եւ տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան խաբեութեամբ մարդկան, խորամանկութեամբ ի խաբեութիւն մոլորութեան, այլ ճշմարտեալք սիրով աճեսցուք ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս, ուստի ամենայն մարմին յօղեալ եւ պատշաճեալ ամենայն խաղալեօք տարաբերութեան ըստ ազդեցութեան չափով ըստ իւրաքանչիւր մասին զաճումն մարմնոյ գործէ ի շինած անձին իւրոյ սիրով»:

Այս միության արգելք չեն ոչ ազգերի եւ ոչ լեզուների տարբերությունները եւ ոչ էլ Եկեղեցիների աշխարհագրականորեն իրարուց հեռու ապրելը եւ ոչ էլ ծեսերի եւ սովորությունների արարողական տարբերությունները: Աշխարհի որ անկյունն էլ լինեն ճշմարիտ քրիստոնյաները, բոլորն էլ մեկ եւ նույն Հիսուսի, մեկ նույն մարմնի մասերը կամ անդամներն են կազմում՝ միեւնույն հավատքի միաբանությամբ: Լամբրոնացին վերելի մեջբերումը շարունակելով ասում է. «Չէ բաժանեալ Քրիստոսս ի Պողոսս եւ յԱպողոսս, եւ ոչ Եկեղեցի Նորա ի հայս եւ ի հռոմս կամ ի ֆրանկ, թէպէտեւ տկարացան կարծիք այսմ ծառայէ, զի բաժանեալ էաք, թէ առ այլ աստուած յոյս ունէաք իւրաքանչիւր... Իսկ որ համարի զինքն քրիստոնէայ եւ ի համանուն քրիստոնէէ վասն տարալեզուութեան խորշի, յայտ է թէ կամաւ զինքն ի գլխոյն քրիստոսէ որոշէ եւ ի նորա անդամոց» (Ի մենկթ. Պատարագի):

Քրիստոսի Եկեղեցու դավանության հարկավոր միությունից չի հետեւում, թե վարչական միություն էլ պետք է ունենան բոլոր քրիստոնյա ազգեր եւ Եկեղեցիներ՝ մեկ ընդհանրական եպիսկոպոսապետի իշխանության ներքեւ կառավարվելով, ինչպես պահանջում են Հռովմի եպիսկոպոսները: «Մի հօտ եւ մի հովիւ» ավետարանական բանաձեւը պատշաճում է Քրիստոսի, իբրեւ Եկեղեցու հավիտենական հովվապետին եւ ոչ թե մի մասնավոր եպիսկոպոսի՝ ով էլ լինի այն:

Ընդհանրականություն Եկեղեցվո՝ Ընդհանրական եզին համապատասխան հունարենն է «**քաթոլիկ**», որի հայացված ձեւն է **Կաթողիկե**, որ նշանակում է «**ընդհանուրն տարածեալ**»: Սրանից է մեր **կաթողիկոս** բառը, որը նշանակում է ընդհանրական գլուխ միասնական Եկեղեցվո: Եկեղեցին **ընդհանրական** է.

ա) **ըստ տեսողության**, այսինքն կա ու մնալու է սկզբից մինչեւ վերջ՝ բոլոր դարերում:

բ) **ըստ վարդապետության**, այսինքն իր ուսմունքը ամենքի համար եւ բոլոր ժամանակների եւ բոլոր սերունդների համար է:

գ) **ըստ անձանց եւ ըստ ազգաց**, այսինքն որոշ մի դասակարգի կամ ազգի համար չէ Եկեղեցին, այլ բոլոր մարդկանց եւ բոլոր ազգերի եւ ցեղերի համար է:

դ) **ըստ տեղի**, այսինքն չէ սահմանափակված աշխարհագրական այս կամ այն երկրամասում, այլ տարածվում է եւ սահմանված է տարածվելու տիեզերքի բոլոր կողմերը: «Ընդամենայն աշխարհ աճէ (Ավետարանն) եւ պտղաբերէ» (Կողոս. Ա 6): «Երթայք յաշխարհ ամենայն եւ քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց» (Մրկ. ԺԶ 15): Տես նաեւ Մատթ. ԻԶ 10:

Եկեղեցվո հայրերից Ս. Կյուրեղ Երուսաղեացի ասում է. «Եկեղեցի կաթողիկե անուանեալ է, զի ընդ ամենայն տիեզերս, ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի է»: Խոսքով Անձեւացին ասում է. «Զի՞նչ է **կաթողիկէն**, տիեզերական, զի ամենայն Եկեղեցիք ուղղափառաց որ ընդ տիեզերս՝ մի են»: Մանանելի հատիկին առակն էլ բացահայտում է Եկեղեցու ընդհանրականությունը (Մատթ. ԺԳ 31):

Առաքելականություն Եկեղեցվո՝ Եկեղեցին առաքելական է, որովհետեւ նույնն է ըստ ամենայնի այն Եկեղեցու հետ, որը Քրիստոս հաստատեց «ի վերայ հիման Առաքելոց»: «Շինեալք ի վերայ հիման Առաքելոց: (Եփս. Բ 20): Ուրեմն Եկեղեցին առաքելական է.

ա) **ըստ ծագման**

բ) **ըստ վարդապետության**, որովհետեւ պահում է առաքյալների քարոզած հավատքը.

գ) **ըստ հաջորդականության**, այսինքն իր նվիրապետությունը անընդհատ գծով եւ օրինավոր կերպով իջնում է առաքյալներից:

Սրբություն Եկեղեցվո՝ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին **սուրբ** է

ա) **ըստ հիմնադիրն** եւ տեսանելի է եւ հավիտենական գլխոյն, որ է Սրբություն Սրբոց Քրիստոս:

բ) **ըստ վախճանին**, որ է սրբանալ եւ սուրբ դարձնել իր (Եկեղեցու) անդամներին.

գ) **ըստ միջոցների**, այսինքն սրբության իր նպատակը հետապնդելու եւ իրագործելու համար գործածած միջոցները սուրբ են: Դրանք են իր (Եկեղեցու) վարդապետությունը եւ Ս. խորհուրդները:

դ) **ըստ բնության**, որովհետեւ Եկեղեցին իր բնությամբ, իր էությանբ սուրբ է, այսինքն անարատ, անբիծ առաջի Աստուծո եւ անջատյալ աշխարհի մյուս ընկերություններից:

Սրբությունը կրկնակի իմաստ ունի.

ա) աղտոտությունից եւ պղծությունից ազատ լինել

բ) իր բոլոր տեսակների միջից ընտրվել եւ հատկացվիլ աստվածային մի նպատակի:

Եկեղեցին այս երկու տեսակի սրբություններն էլ ունի: Ստույգ է, որ Եկեղեցու բոլոր անդամներն էլ հավասար չափով սուրբ չեն, սակայն որովհետեւ իր կետ նպատակին սուրբ է եւ իր մեջ գործում են սրբարար շնորհները եւ խորհուրդները, հետեւաբար իբրեւ ամբողջություն, սուրբ է Եկեղեցին: Սրանից բացի, որովհետեւ մյուս բոլոր մարդկային ընկերություններից զատված ու աստվածային սուրբ նպատակի է նվիրված Եկեղեցին, դրանով իսկ սրբացված է Եկեղեցին՝ բառին երկրորդ իմաստով:

Եկեղեցին սուրբ է իր **գործունեությամբ**, որովհետեւ անընդհատ փոյթ ու ջանք է թափում իր անդամների սրբացման համար՝ իր ուսուցմամբ, խորհուրդների կիրառությամբ եւ վարչությամբ: Չենք կարող ակնկալել, որ Եկեղեցու բոլոր անդամներն էլ հասնին սրբության կատարյալ աստիճանին այս աշխարհում: Սակայն մի շարք անդամների անսրբությունը որեւէ ձեւով չի ազդում Եկեղեցու ընդհանրական սրբության վրա: Որովհետեւ խորքում Եկեղեցու **բուն** անդամները սրբության շնորհի մեջ եղածներն են, իսկ մյուսները կամ չորացած եւ մեռյալ անդամներն են, եւ կամ էլ անդամ լինելու թեկնածուներ են, ուրիշ խոսքով **ծեական** կամ **անվանական** անդամներ են, եւ հետեւաբար նրանց սրբությունը չի ազդում երբեք Եկեղեցու սրբության վրա:

Բացի սա, երբ Եկեղեցու անդամների սրբության մասին խոսվում է, անշուշտ չի ակնարկվում այն կատարյալ սրբության, որ միայն ոմանց է մատչելի, այլ հնարավոր **սրբության**, որին կարող ենք հասնիլ մեր մարդկային տկար բնությամբ, ուրիշ խոսքով «երեխա-չմկրտված», «ապաշխարող», «անմաքուր» չլինելը ինքնին բավական է Եկեղեցու սրբության շրջանակում լինելու:

Եկեղեցին սուրբ է **ներգործաբար**. «Աստուած ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս... **ի հաստատութիւն սրբոց**» (Եփս. Դ 11): Արդարեւ Քրիստոս Եկեղեցու մեջ նվիրապետություն հաստատեց, Ս. խորհուրդներ եւ սրբարար շնորհներ տվեց ոչ թե զարդի կամ փառքի համար, այլ իր անդամներին սրբացնելու :

Եկեղեցին սուրբ է **կրավորաբար**. «Դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ», - ասում է Պողոս առաքյալ՝ խոսքն ուղղելով Եկեղեցուն (Ա Կաթ. Ա 8): Ս. Պողոս ասում է.- «Քրիստոս սիրեաց Եկեղեցի, եւ մատնեաց զանձն իւր վասն նորա, զի զնա **սրբեսցէ** սրբութեամբ աւազանին բանիւ, զի կացուսցէ զանձն իւր յանդիման փառաւոր զԵկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ, կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայպիսեաց, այլ զի իցէ **սուրբ** եւ անարատ» (Եփս. Ե 25): Երգ Երգոցի մեջ այլաբանորեն ակնարկելով Եկեղեցուն ասվել է. «Ամենեւին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, եւ արատ ինչ որ գոյ ի քեզ» (Երգ Դ 7): Մեր շարականները լեցուն են Եկեղեցու սրբության գովքերով. «Ուրախ լեր սուրբ Եկեղեցի», «Խորան սրբութեան կանգնեցաւ սուրբ Եկեղեցի»:

Սուրբ է Եկեղեցին **կոչմամբ**, վասնզի սրբության կանչված են անոր բոլոր անդամները. «Ըստ սրբոյն որ կոչեաց զձեզ, ու դուք սուրբ յամենայն զնացս ձեր լինիջիք» (Ա Պետ. Ա 15): «Ընտրեաց զմեզ (Աստուած նովաւ՝ Քրիստոսով) յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբ եւ անարատ առաջի նորա սիրով» (Եփս. Ա 4):

Ընդհանրական Եկեղեցու այս նշանները կիրարկելով Հայաստանյայց Եկեղեցու համար անում ենք հետեւյալ հավաստումները.

ա) Սուրբ է Հայաստանյայց Եկեղեցին, որովհետեւ հողեալ է ամենասուրբ գլուխին Քրիստոսի: Վասնզի մկրտությամբ սրբված է, Ս. Գրոց ուսուցումը լայնորեն տրամադրած է Եկեղեցուն: Ղատապարտում է ամեն անմաքրություն, բարոյական արատ կամ բիծ: Անպարտ չի արձակում անգիտության, ակամայության մեղքերն իսկ: Ապաշխարության է ենթարկում մեղավորին:

Սակայն Հայաստանյայց Եկեղեցին իր սրբության հատկանիշին դեմ կգործի, եթե անհավատ եւ անբարոյական մարդիկ հրավիրում է իր վարչական գործերի մեջ: Եթե հաստատված է մի մարդու անհավատությունը, հերետիկոսական կամ հերձվածողական գաղափարներ ունենալը, կամ Եկեղեցու օրենքներին հակառակ ընկերային կենցաղ ունենալը (օրինակ եկեղեցական պսակ չունենալը կամ **լոկ քաղաքային** ամուսնությամբ ընտանիք կազմած լինելը, չենք հիշում այլեւս առանց **որեւէ** ամուսնական օրենքի կյանքի ընկեր ունենալը եւ այլն), այդպիսիները ոչ միայն Եկեղեցու վարչության մեջ պետք չէ մտնեն, այլ մինչեւ իսկ Եկեղեցիի հաղորդությունից պետք է զրկել նրանց:

Հայաստանյայց Եկեղեցին իր սրբության դեմ գործած կլինի, եթե ինք իրեն նույնացնի «ազգ»-ի հետ: Ստույգ է, որ ինն ժամանակ «Հայ ազգ» եւ «հայ քրիստոնյա» իրարու հոմանիշ էին: Քրիստոնեությունը հաջողած էր հայ ազգը ամբողջ Եկեղեցու վերածել՝ առանց եղծելու նրա ազգային դիմագիծը եւ հատկանիշները, ինչպես դժբախտաբար անում է լատին

Եկեղեցին՝ մեջտեղ բերելով «լատին համայնքներ», որոնց ինչ ազգի պատկանիլը անորոշ եւ անստույգ է: Ընդհակառակը, Հայաստանյայց եկեղեցին իր ազգին ինչ-ինչ հատկանիշները ավելի մշակած եւ ավելի ազնվացուցած է: Սակայն ներկայիս դժբախտաբար «Հայ ազգ» եւ «Հայաստանյայց Եկեղեցի» իրարու հոմանիշ չեն ոչ միայն Հայաստանում, ուր հակակրոն մի վարչակարգ է տիրում, որ մերժելով մերժում է հայ ժողովրդի քրիստոնյա լինելը, այլ նաեւ արտասահմանի մեջ, ուր մեր ժողովուրդի եթե ոչ կեսը, գեթ կարելու մեկ մասը, հոգեպես եւ ֆիզիքապես ոչ մեկ կապ ունի Հայաստանյայց Եկեղեցու հետ: Մեր ազգին կարելու մեկ տոկոսը կաթոլիկ եւ բողոքական լինելով, արդեն իսկ պաշտոնապես բաժանված են նրանից: Իսկ մեկ ուրիշ կարելու մաս էլ պաշտոնապես **չի հավատում** ոչ Եկեղեցուն, եւ ոչ էլ նրա վարդապետությանը: Մեր ժողովրդի կարելու ուրիշ մի մասն էլ անպաշտոն կերպով մեկուսացած է իր Եկեղեցուց եւ անտարբերությամբ, տգիտությամբ եւ մեղքերի մեջ անկանգնելի կերպով թավալվում է: Հետեւաբար այս վերջին երեք դասակարգերի մարդկանց **լոկ** հայ լինելը պայման չէ, որ նրանք նաեւ Հայաստանյայց Եկեղեցու անդամ լինեն:

Եկեղեցին իր սրբության դեմ է գործում, երբ իրեն համար արդեն իսկ դրված նպատակներից **տարբեր** նպատակների կծառայե, հոգ չէ, թե նրանք որչափ անմեղ կամ օգտակար նպատակներ լինեն: Եկեղեցին կա **լոկ մարդերը սրբացնելու** եւ զանոնք հավիտենական կյանքի եւ փրկության առաջնորդելու համար: Այս հիմնական հավիտենական նպատակից եթե Եկեղեցին շեղվում է եւ ուրիշ նպատակների համար պահի իր գոյությունը, նա դադարում է **Սուրբ Եկեղեցի** լինելուց, կարող է լինել ուրիշ ինչ-որ բան: Հետեւաբար Եկեղեցու **նպատակը** ոչ «ազգապահպանությունն է», ոչ էլ հայ մշակույթի ծառայելը: Նման նպատակներ հետապնդելը նշանակում է թողնել իրականությունը եւ սովորի ետեւից վազել: Եթե Հայաստանյայց առաքելական Եկեղեցին իր իսկական նպատակին ծառայե, արդեն իսկ անպակասելի է, այսինքն տեւական եւ հավիտենական է: Եվ որովհետեւ **Հայաստանյայց Եկեղեցու** անդամները միշտ **հայերից** բաղկացած պիտի լինեն, եւ իր պաշտամունքները հայերենով պիտի կատարվին, հետեւաբար հայ ազգն էլ ինքնաբերաբար պիտի «պահպանվի» իրմով, այսինքն Եկեղեցիով:

Սրանից բացի իր հավատքը եւ բոլոր ուսուցումները տարածելու եւ սովորեցնելու է հավատացյալներին ոչ միայն խոսքով եւ **հայ գիրով** եւ **հայ գրականությամբ**: Իր **եկեղեցական երաժշտությունը** մշակելու եւ պահելու է հայու հատուկ ծայներով եւ օրենքներով: Հայ եկեղեցիները շինելու է **հայկական ոճով** եւ **ճարտարապետությամբ**: Պահելու է **հայ դպրոցներ** եւ իր պաշտոնյաները շարունակ **կարդալու** եւ **մշակելու են հայ մատենագրությունը**, բայց հայ մշակույթի տարրերը գործածելու է իբրեւ միջոց իր սուրբ նպատակին, եւ ոչ թե իբրեւ նպատակ:

Եկեղեցին իր սրբության հատկանիշին դեմ գործած կլինի, եթե ենթարկվի կամ գործիք լինի քաղաքային կամ այլ տեսակի իշխանության ձեռքը: Եկեղեցին պահելու է իր բացարձակ անկախությունը եւ երբեք ինք իրեն պետք չէ նույնացնե այս կամ այն քաղաքային իշխանության հետ, պաշտոնապես պետք չէ մասնակցի այս կամ այն հոսանքի ցույցերին կամ ձեռնարկներին: Եկեղեցականները պետք չէ պատկանին այս կամ այն կուսակցական գաղտնի ընկերության, որովհետեւ նրանք կվտանգեն եկեղեցականի անկախությունը եւ եկեղեցու սրբությունը:

Վերոհիշյալ այս կետերի մասին ավելի ընդարձակ գրեցինք, որովհետեւ ներկայիս մեր Եկեղեցուն սպառնացող եւ այն իր առաքելությունից եւ նպատակից շեղող պատճառները նրանք են: Ժամանակները եւ մտայնությունները փոխվել են, եկեղեցական իշխանությունը արթուն պահելու է, որպեսզի չընկնի սատանայի թակարդների մեջ, որոնք անզգալիորեն լարվում են հայոց Եկեղեցու մեջ եւ որին զոհ են եղել դժբախտաբար մի շարք մինչեւ իսկ բարձրաստիճան եկեղեցականներ եւ Աստուծո թագավորությունը եւ Քրիստոսի մարմինը՝ Եկեղեցին, խաղալիք են դարձրել արտաքին եւ աշխարհիկ ուժերի ձեռքում: Պետք է ազատագրել Եկեղեցին այս ահավոր վտանգից, այլապես Եկեղեցին պիտի կորցնէ իր հիմնական հատկանիշները եւ պիտի դադարի ինքնիրենը լինելուց, ուրիշ խոսքով, պիտի մեռնի իբրեւ Եկեղեցի, եթե իսկ անվանապես գոյությունը շարունակե:

Հայոց Եկեղեցին ընդհանրական է, որովհետեւ քրիստոնեական Եկեղեցու ընդհանրական հավատք ու վարդապետությունն ունի: Առաքելական է հայոց Եկեղեցին իր կարգով ու սարքով եւ առաքելական հաջորդականությամբ, սկսյալ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալներից, եւ վերանորոգյալ Ս. Գրիգոր առաքելաշավիղ Լուսավորչով:

Այն Եկեղեցին, որ այս չորս նշանները լիովին եւ անաղարտ կերպով ունի, **Ուղղափառ Եկեղեցի է**։

Պետք է գիտենալ, որ քրիստոնեական Եկեղեցին պատմական հավատքով կամ տեսական ուսմունքով եւ կամ մատենագրական ուղղափառությամբ չի փրկվում, որովհետեւ տեսականը կամ պատմականը մեռյալ հավատք է։ «Աբրահամու Որդի» լինելը, այսինքն ուղղափառ եւ հավատավոր նախնիներ ունենալը ժամանակակից սերնդին չի ազատում «կտրեա զդա, ընդէ՞ր զերկիրդ խափանէ» վճռից, եթե զինվորյալ եւ ժամանակակից Եկեղեցին ինքը բարի պտուղ չի տալիս։ Այնպես որ Եկեղեցու անդամ պետք չէ նկատել նրանց, ովքեր հայտնի կերպով հայտարարում են կամ իրենց գործով հաստատում են, թե անհավատ են իրենք, հայիոյիչ են (այսինքն Եկեղեցու սրբությունները ծաղրում եւ արհամարհում են), նրանք, ովքեր պղծագործ են եւ գերի են դարձել այսպանելի մոլությունների (խաղամոլություն, գինեմոլություն, զոդություն եւ այլն), անոնք, որոնք ուրացող են եւ հայտնապես դիրք են բռնում Եկեղեցու շահերի դեմ եւ արգելք են հանդիսանում նրա բարգավաճման։ Անոնք, որոնք հերետիկոսական գաղափարներ են արտահայտում, եւ նրանք, ովքեր կամակոր համառությամբ ընդդիմանում են Եկեղեցու իշխանության դեմ, նրանք, ովքեր առ ոչինչ են գրում նրա հրահանգները, նրա օրենքները եւ կարգապահական կանոնները։ Նրանք, ովքեր Եկեղեցու բարձրագույն իշխանության հետ իրենց հարաբերությունները խզում են, նոր Եկեղեցի, նոր համայնքներ կազմում են ի կորուստ իրենց եւ իրենց հետ միաբանածներին։ Եթե սրանք համառ են մնան իրենց մոլար տեսկետների վրա եւ չանսան Եկեղեցու իշխանությանը, նրանց համար փրկություն չկա ոչ աստ եւ ոչ ալ հանդերձյալի մեջ (Բ Պետ. Բ 1-22, Բ ՏԻՍ. 1-18)։

Անդամք Եկեղեցվո.- Այս մասին թեւս վերելում ակնարկություններ եղան, այսուհանդե՛մ այդ մի կարելոր հարց լինելուն պատճառով, արժե այն ավելի հանգամանորեն նկատի առնել։ Ովքե՞ր են Եկեղեցու անդամները։ Նախ բացահայտ, է թե Եկեղեցու անդամ նկատվածները բոլորն էլ **հավասար աստիճանի** անդամներ չեն, այլ մեկն ավելի, իսկ մյուսը նվազ կատարելությամբ։ Սրանից ծագում է Եկեղեցու անդամներին երկու խմբի բաժանելու սովորությունը. դրանք են կենդանի **անդամներ եւ մեռյալ անդամներ**։ Կենդանի անդամներ են նրանք, որ մկրտված լինելով **պահել են** իրենց որդեգրության շնորհքը եւ կենդանի հաղորդակցության մեջ են Եկեղեցու հավիտենական **գլխի՝ Քրիստոսի** հետ, Ս. Հաղորդությամբ, աղոթասիրությամբ, բարեպաշտությամբ, աստվածապաշտությամբ եւ ընկերասիրությամբ։ Սրանք ընդհանուր իմաստով կամ ավետարանական բացատրությամբ **սուրբեր** եւ արդարացած հոգիներ են, որոնք եթե մինչեւ իսկ անակնկալ կերպով մեղքի կամ փորձության մեջ են ընկնում, անմիջապես բարձրանում են նրանից զղջումով եւ ապաշխարությամբ։ Իսկ **մեռյալ** են կոչվում Եկեղեցու այն անդամները, որոնք թեւս մկրտված են եւ Եկեղեցու պաշտոնական հավատքն էլ ունեն, սակայն մեղքով եւ անտարբերությամբ մերկացել են սրբարար շնորհքից եւ հետեւաբար կենդանի եւ մնայուն հաղորդակցության մեջ չեն Քրիստոսի հետ աստվածասիրությամբ եւ եղբայրասիրությամբ։ Նրանք թեւս մեռյալ եւ չորացած ձյուղեր են Եկեղեցու ծառի վրա, որչափ ժամանակ որ չեն կտրված եւ դեն զցված, մնում են Եկեղեցու մարմնի վրա եւ կազմում են նրա մասը։ Իսկ եթե պաշտոնապես արտաքսվեն կամ բանադրվեն, այն ժամանակ միայն դադարում են Եկեղեցու անդամությունից։ Ի հնումն կային եւ ներկայիս էլ կան աղանդավորներ, որոնք պնդում են թե **միայն արդարներն են** Եկեղեցու անդամները։ Հոգեւոր մարզի մեջ նման մի հավաստում անելը ճիշտ է, սակայն տեսանելի Եկեղեցու համար նման մի հավաստում անելը ուղիղ չէ, զի «Աստուած ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալն նորա ի չար ճանապարհէն եւ զկեալն»։ Հետեւաբար Եկեղեցին էլ համբերող է լինում եւ բոլոր մեղավորներին իր փարախից դուրս չի զցում, այլ աշխատում է նրանց դարձի բերել։ Այս իմաստով Պողոս առաքյալ ասում է. «Եղբարք, եթե յանկարծ ըմբռնեսցի ոք ի ձեռն յինչ եւ իցէ յանցանս, դուք որ հոգեւոր էք, հաստատեցէք զայնախիսն հոգւով հեզութեան» (Գաղատ. 2 1)։ Մեր Տերն ասում է. «Եթե մեղիցէ քեզ **եղբայր** քո, երթ յանդիմանեա զնա, յորժամ դու եւ նա միայն իցէք... ապա թէ ոչ լուիցէ, ասասջիր յեկեղեցւոջ, ապա եթէ յեկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր»։ Այս նշնակում է, որ հավատացյալ մեղավորներ էլ կան Եկեղեցում, եւ նրանք մեր եղբայրներն են այնքան ժամանակ, որքան նրանք հերետիկոսական գաղափարներ չեն տարածում կամ հերձվածողական միտումներից տարված չեն, այնչափ ժամանակ, որքան նրանք Եկեղեցու դեմ բացարձակ ըմբոստության մեջ չեն գտնվել եւ իրենք իրենց Եկեղեցուց դուրս չեն հռչակել եւ որչափ ժամանակ որ նրանք անբարոյական կյանքով զայթակղության պատճառ չեն դարձել հավատացյալներին։ Եկեղեցին նման մարդկանց իր փարախից

արտաքսելու համար, նախ նրանք մեղավոր վիճակում անդամ պետք է լինեն Եկեղեցուն, որպես զի նրանց նկատմամբ իր վճիռը ի գորու լինի: Ս. Օգոստինոս ասում է. «Ընդունում ենք, որ Եկեղեցու մեջ չարեր եւ բարիներ կան. յարդ՝ եթե չար են, ցորեան՝ եթե բարի են»: Լամբրոնացին ասում է. «Եթե մինչեւ իսկ նեխեալ ես եւ փտեալ, իմոյ Գլխոյն ես անդամ»: Ապաշխարության խորհուրդը հաստատվեց **Եկեղեցու անդամների** համար: Եթե Եկեղեցու անդամները լոկ արդարներից բաղկացած լինեին, իզուր էր եւ անօգուտ մնան մի խորհուրդ հաստատելը: Ցորենի եւ որոմի առակն էլ հաստատում է այս գաղաղարը, թե Եկեղեցու մեջ արդարներն ու մեղավորները միասին են աճում, մինչեւ «հունձքի ժամանակը», այսինքն մինչեւ վերջին դատաստանը, երբ վերջնականապես արդարները բաժանվում են մեղավորներից: Նույն գաղափարը հայտնում է նաեւ Ուռկանի առակը՝ «զոր իբրեւ լցաւ, հանեալ ի ցամաք, եւ նստեալ ժողովեցին **զբարի բարին** յամանս եւ **զխտտան** ի բաց ընկեցին» (Մատթ. ԺԲ 47): Նույն ճշմարտությունը արտահայտում է նաեւ ավետարանական այս խոսքը. «Բազում են կոչեցեալք յեկեղեցի Աստուծոյ, եւ սակաւ են ընտրեալք» (Մատթ. Ի 16): **Հերձվածներ եւ հերետիկոսներ**, որոնք կամովին ընկնում են հերձվածի եւ հերետիկոսության մեջ, Եկեղեցու անդամ չեն: Նախ զանազան ենք եւ հստակեցնենք, որ այս երկու բառերը թեւ նույն իմաստով են գործածվել մեր դասական մատենագրության մեջ, սակայն շատ որոշ տարբերություններ ունեն իրարուց: **Հերձվածող** բառին հունարենն է **սխիսմադիկոս**, որ Եկեղեցու միաբանությունից բաժանված է, սա վարչական բաժանում է: **Հերետիկոս** բառին հունարենը նույնն է՝ **եռեդիկոս** եւ նշանակում է Եկեղեցու վարդապետությունից բաժանվածը, որ մոլորված է եւ Եկեղեցու **պաշտոնական դավա.....?** Ձեւապես հերձվածող մը կրնա ուղղափառ լինել, եւ հերետիկոս մը Եկեղեցու միության մեջ մնալ, սակայն իրականում, հերձվածողները անխուսափելիորեն ընկնում են հերետիկոսության մեջ, եթե համառին մնալ իրենց հերձվածողի դիրքում, իսկ հերետիկոսները եթե շարունակեն մնալ իրենց մոլոր հավատքին մեջ, անպատճառ անջատվելու են Եկեղեցու ամբողջությունից, նման չորացած ճյուղին, որ ի վերջո կոծվելով հովերից, բաժանվելու է մայր ճյուղից եւ ընկնելու է ցած:

Հաճախ ինքը Եկեղեցին **բանադրում եւ նզովում** է իր հանցավոր անդամներին: Բանադրանքը եկեղեցական պատիժ է, որ տրվում է ենթակային ուղղության բերելու համար: Իսկ նզովքը կարդացվում է անուղղա եւ անհույս հերետիկոսների վրա: Թե Եկեղեցին իրավունք ունի իր անդամներին պատժելու, բանադրելու եւ նզովելու, բացահայտ է Նոր Կտակարանից: Նախ Քրիստոս բացարձակորեն առաքյալներին **կապելու եւ արձակելու** իշխանություն տվեց: «Ամեն ասեմ ձեզ, զոր միանգամ կապեսջիք յերկրի, եղիցի կապեալ յերկինս, եւ զոր ինչ արձակեսջիք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս» (Մատթ. ԺԸ 18): Պողոս առաքյալ գործնականապես հաստատում է այն, սատանային մատնելով Հոմենեսիսն եւ Աղեքսանդրոսին: Եկեղեցու կանոնները իրենց մեջ պարունակում են բանադրանքի բազմաթիվ պարագաներ: Եկեղեցու հայրերը բանադրված անձերին համարում էին Եկեղեցու հաղորդությունից կտրված անձեր, որոնք Եկեղեցուց արտաքսվում են իբրեւ վարակիչ հիվանդություն ունեցողներ, ինչպես հին ժամանակ բորոտները մեկուսացվում էին ընկերությունից, մինչեւ իրենց առողջանալը: Ս. Օգոստինոս ասում է. «Ինչ որ Հին Օրենքի մեջ մահվան պատիժը, նույնն է բանադրանքը Նոր Օրենքում»:

Հերետիկոսության մեջ դատապարտելին ոչ այնքան մոլորությունն է, որքան համառությունը: Մարդ կարող է մոլորվիլ իր տեսակետների եւ հավատալիքների մեջ, այդ չի նշանակում, որ անպատճառ մի հերետիկոս է: Հերետիկոս կլինի այն ժամանակ, երբ Եկեղեցու օրինական իշխանությունը մատնանիչ է անում ենթակային մոլորությունը, սակայն այն ոչնչի տեղ է դնում իրեն եղած ազդարարությունը եւ լուսաբանությունները եւ շարունակում է եւ մնում է համառ իր մոլորություններում: Շնորհալին ասում է. «Այն, որ համառությամբ իր մոլար տեսակետին վրա կմնա, այնպիսի թող զատվի Եկեղեցիեն՝ իբրեւ հերետիկոս»: Ս. Պողոս ասում է. «Յառնէ հերձուածողէ (հունարենում հերետիկոսէ) յետ միանգամ եւ երկիցս խրատելոյ հրաժարեսջիր, զիտասջիր զի թիւրեալ է այնպիսին եւ մեղանչէ, անձամբ զանձն դատապարտեալ», (Տիտ. Դ. 10):

Հայտնի հերձվածողներ եւ հերետիկոսներ զուրկ են Եկեղեցական իրավասությունից եւ չեն կարող հովիվ կամ գլուխ լինել Եկեղեցում, որին անդամ լինելուց դադարել են իրենց գաղափարների պատճառով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Քրիստոնեական Եկեղեցին առաջին իսկ օրից որդեգրել է իր կարելու եւ հիմնական խնդիրները ժողովով լուծելու սկզբունքը: Սրա առաջին օրինակը տրվեց Երուսաղեմի անդարնիկ Եկեղեցում առաքյալների օրով: Քրիստոնեական առաջին ժողովի պատմությունը ներկայացված է Գործք Առաքելոցի ԺԵ գլխում: Մի շարք հրյա քրիստոնյաներ սկսեցին քարոզել հեթանոսությունից դարձած քրիստոնյաների մեջ որ «եթէ ոչ թլփատիցիք ըստ օրինացն Մովսիսի, ոչ կարաք ապրել»: Սրանից ծնունդ տվեց բավական մեծ հակառակություն եւ խնդիր ընդ մեջ աս հրեամիտ քարոզիչների մեկ կողմից ու Պողոսի ու Բառնաբասի մյուս կողմից: Այն ժամանակ հարցը լուծելու համար որոշեցին «Ելանել Պաղոսի եւ Բառնաբայ եւ ոմանց ի նոցանէ (թլփատություն քարոզողներից) առ առաքեալսն եւ յերիցունս յԵրուսաղեմ վասն խնդրոյն այնորիկ»: Այն ժամանակ «ժողովեցան **առաքեալքն եւ երիցունք** տեսանել վասն բանիս այսորիկ»: Հարցը անկաշկանդ խորհրդակցության նյութ դարձրին եւ Ս.Գրոց տվյալների ու պատահած իրողությանց վրա հիմնվելով, տվեցին իրենց վճիռը: Իր ամբողջության մեջ մի օրինակելի ժողով էր սա, եւ քրիստոնյա Եկեղեցիներ դարերի ընթացքում հեկեղեցին նրա օրինակին:

Ըստ այսմ Եկեղեցական ժողովը կարելի է սահմանել այսպես, համախմբություն հոգեւոր առաջնորդների (ըստ Գործք առաքելոցի բացատրության «առաքեալք եւ երիցունք») խորհրդակցելու եւ որոշում տալու համար Եկեղեցական ամեն տեսակ խնդիրների մասին. հատկապես հավատքի եւ բարեկարգության հարցերի վերաբերյալ:

Ներին պետք է նախագահի Հռոմի պատրիարքը կամ նրա մեկ ներկայացուցիչը: Սակայն նման պահանջներ եւ տեսակետներ հիմնված են Հռոմի Եկեղեցու այն հավակնության ու հավատքի վրա թե Հռոմի եպիսկոպոսը ոչ միայն Արեւմուտքի Եկեղեցու պատրիարքն է այլ նաեւ Ընդհանրական Եկեղեցու քահանայապետն է: Մի տեսություն որը մերժված է նաեւ Տիեզերական ժողովներ կանչելու եւ նրանց նախագահելու իր պահանջները: Տրված պայմանների տակ, այսինքն նակտի ունենալով, որ Ընդհանրական Եկեղեցին գրեթե անդարմանելի կերպով բաժանված է մասնակի Եկեղեցիների, թվում է թե Տիեզերական ժողովներ ունենալու կարելիությունը վերցված է քրիստոնեական Եկեղեցուց: Հունա-հռոմեական Եկեղեցին մեր ընդունած երեքից բացի, միասնաբար ընդունում են չորս այլ «Տիեզերական» ժողովներ, որոնցից չորրորդը **միայն** մեր Եկեղեցուց մերժված է պաշտոնապես իսկ մնացյալ երեքի մասին պաշտոնական ոչինչ չի ասվել: Լատին Եկեղեցին հունաց ընդունած յոթից բացի, շարունակած է ինքը առանձինն ժողովներ ունենալ եւ նրանց կոչել «Տիեզերական»:

Մեր Եկեղեցու օրենքով մեր Ազգային Եկեղեցական ժողովները հրավիրվում են Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից միայն, եւ ինքը իրավասու է նախագահելու նրանց: Առանց իր հրավերին եւ նախագահության Ազգային-Եկեղեցական ժողովը օրինավոր նկատել կարելի չէ եւ հեկեղաբար այդ ժողովի որոշումները չեն կարող ծառայել որպես աղբյուր աստվածաբանության:

Որպես կարելու ծանոթություն պետք է ավելացնել, որ Տիեզերական ժողովները բաղկացած են միայն **եպիսկոպոսներից**, հեկեղաբար նրանք խորքում Ընդհանրական Եկեղեցու **եպիսկոպոսական** ժողովներն են: Մեր մեջ տիեզերական այդ ժողովներուն համապատասխանող ու նրանց դերն ու պաշտոնը շարունակող ժողովներն էլ պետք է լինեն **Հայաստանյայց Եկեղեցու եպիսկոպոսական ժողովները**: Անցյալում մեր բոլոր այսպես կոչված «ազգային Եկեղեցական» ժողովները իրականում եւ գործնականում եղել են եպիսկոպոսական ժողովներ, թեւ աշխարհականներ էլ ներկա եղել են, բայց այդ երբեք չի նշանակում, որ նրանք էլ մասնակցել են ժողովի որոշումներին: Աշխարհիկ իշխանավորների ներկայությունը բացատրելի է նրանով, որ գործնականում ժողովական որոշումները աշխարհիկ իշխաններն են որ գործադրելու են, դրա համար իսկ նրանց ներկայությունը կարելու էր ժողովներին: Երբեք չի կարելի մոռանալ, որ առաջին քրիստոնեական ժողովը, որը հիմք, օրինակ եւ տիպար պետք է ծառայի բոլոր Եկեղեցական ժողովներին, կազմված էր լոկ «առաքեալներէ եւ երեցներէ»:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՈՒՆԱԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Թեև նախապես ասել էինք, որ ժողովների մասին խոսելը Եկեղեցական պատմության իրավունքն է, սակայն որպեսզի մի գաղափար կարելի լինի կազմել նրանց մասին, նրանք թվենք մի առ մի կցելով նրանց համառոտ տեղեկություններ:

Ա.- Երեք Տիեզերական ժողովներ.- Առաջինն է Նիկիո ժողովը, գումարված 325 թվին, Մեծն Կոստանդիանոս կայսեր հրամանով, Արիոսի աղանդին վերջ տալու համար: Ներկա էին 318 հայրապետներ, ընդ որս մեր Արիստակես հայրապետը: Ժողովը դատապարտեց Արիոսին, որը քարոզում էր թե Որդին հավասար չէր Հորը, այլ արարած սահմանեց 20 կանոն եւ կազմեց հավատո հանգանակը:

Երկրորդ՝ **Կոստանդնուպոլսո ժողովն** էր, գումարված 381 թվին, Մեծն Թեոդոսի հրավերով: Ներկա էին 150 հայրապետներ: Ժողովը նզովեց Մակեդոնին, որը ուրանում էր Ս. Հոգու Հոր հետ համագոյակից լինելը: Սահմանեց 7 կանոններ եւ կազմեց հավատո դավանանք:

Մեր Եկեղեցու ընդունած երրորդ եւ վերջին Տիեզերական ժողովն է **Եփեսոսինը**, գումարված 432 թվին, Թեոդոս կրտսեր կայսեր հրամանով, քննելու համար Նեստորի աղանդը: Ներկա էին 200 հայրապետներ: Բանադրեցին Նեստորին եւ սահմանեցին 6 կանոններ:

Վեց արտաքին տեղական ժողովներ.- Բացի այս երեք Տիեզերական ժողովներից Հայաստանյայց Եկեղեցին ընդունում է նաեւ վեց տեղական, ոչ-հայկական ժողովներ, որոնք զանազան Եկեղեցական կարգեր հաստատած են եւ մերժել են մի շարք հերձվածներ: Դրանք ընդունված են նաեւ մյուս պատմական Եկեղեցիներու կողմից: Այդ ժողովներն են.

ա. **Անկյուրայի** ժողովը՝ գումարված 313 թվին, Անտիոքի պատրիարքի նախագահությամբ եւ մասնակցությամբ 18 եպիսկոպոսների: Սահմանած է 25 կանոն, առ հասարակ հավատուրացների մասին, որոնք զղջալով ուզում էին վերադառնալ Եկեղեցու ծոցը:

բ. **Նեոկեսարիո** ժողովը (Պանտոսում), գումարված 314 թվին, նույն Անտիոքի պատրիարքի նախագահությամբ եւ սահմանեցին 15 կանոն հոգեւորականների բարոյական կարգապահության եւ այլ հարցերի մասին:

գ. **Անտիոքի** ժողովը, գումարված 341 թվին, մասնակցությամբ շուրջ 100 եպիսկոպոսների, որոնք եկել էին Անտիոքի թեմերի զանազան մասերից օժելու համար Մեծն Կոստանդիանոսի հիմնադրած Եկեղեցին, որը այն տարին ավարտված էր: Սահմանված են 25 բարեկարգական կանոններ: դ. **Էառոփկայի** (Փոքր Ասիա) ժողով, գումարված 365 թվին: Սահմանած են 60 կանոն, զանազան խնդիրների շուրջ, առհասարակ բարոյականի վերաբերյալ կանոններ: ե. **Սարդիկայի** ժողով, Սարդիկան գտնվում էր հիմակվա Հարավսլավիայում, հռոմեական կայսրության արեւելյան եւ արեւմտյան բաժանումների սահմանագլուխների վրա, ժողովը գումարվեց 344 թվին, արիոսամի եւ հակաարիոսական տարրերի միջեւ հասկացողության գալու նպատակով: Ժողովի ընթացքում արիոսականները (մեծ մասով արեւելյան եպիսկոպոսներ) ժողովից հեռացան: Մնացին արեւմտյան եպիսկոպոսներ եւ մի քանի արեւելյան եպիսկոպոսներ, եւ այսպես այս ժողովը, որ իբրեւ տիեզերական ժողով հրավիրված էր վերածվեց տեղականի: Ժողովը հաստատեց Նիկիո հանգանակը, նզովեց այն չընդունողներին եւ սահմանեց 20 կանոն:

զ. **Գանգրի** ժողովը (Փոքր Ասիա), գումարված 350-ական թվականներին, ընդդեմ աղանդավորների, որոնք անգոսնում էին ամուսնական կյանքը եւ կուսակրոնության անվան տակ ընկնում էին հակառակ ծայրահեղության մեջ: Այս ժողովը սահմանած է 21 կանոն:

Ազգային Եկեղեցական ժողովներ. Տիեզերական ժողովներով հարցերը լուծելու սկզբունքը շարունակվեց առաքելական դարերից հետո մեր Եկեղեցում: Սկզբնական շրջանից, նկատի ունենալով Ս. Լուսավորչի եւ նրա անմիջական հաջորդների վայելած հեղինակությունը եւ սրբության համբավը, նկատի ունենալով նաեւ այն իրողությունը, որ հրատապ խնդիրներ չեն ծագած երկրում, չի կիրարկված այս սկզբունքը: Սակայն երբ Մեծն Ներսես ձեռնարկեց ընդարձակ բարեկարգական աշխատանքի, պետք տեսավ իր նպատակները իրագործել ոչ միայն իր անձնական հեղինակությամբ եւ հմայքով, այլ նաեւ ժողովական որոշումներով: Հեկեղաբար Հայաստանյայց Եկեղեցու հատուկ **առաջին տեղական** պաշտոնական ժողովը տեղի ունեցավ **Աշտիշատի** մեջ 365 թվին, Մեծն Ներսեսի հրավերով եւ նախագահությամբ:

Այս ժողովում ներկա էին **Եպիսկոպոսներ** եւ **աշխարհականներ**, ոմանք սա նկատում են «փառավոր սկզբունք» որ «իբրեւ հիմնական կետ» շարունակվել է հետագա դարերի բոլոր ժողովներում: «Փառավոր սկզբունք» է արդարեւ երբ ժողովին ներկա «աշխարհականներ» մասնակցում են նախ իբրեւ **հավատավոր եւ գիտակից** անդամներ, երկրորդ իբրեւ **քաղաքային իշխանության ներկայացուցիչներ**, որոնց պարտականությունն է **գործադրել** տրված որոշումները, ի հարկին պատժելով անաստողներին: Այլապես եթե մասնակցող աշխարհականները հավատքից պարտված մարդիկ են, ու մանավանդ եթե անդամներ են կամ ղեկավարներ Եկեղեցու թշնամի կամ հակադիր կազմակերպությունների, իրենց ներկայությունը նման ժողովների մեջ ոչ միայն «փառք» չի լինում, այլ իրականում կլինի **«փորձանք»** Եկեղեցու գլխին: Այս փորձանքը կրում է Հայաստանյայց Եկեղեցին ավելի քան կես դարուց ի վեր: Մեր այսօրվա Եկեղեցական կնճռոտությանց մեծագույն մասը առաջ են գալիս այս ոչ-հավատավոր եւ այլ կազմակերպությանց ղեկավար տարրերի մասնակցությունից մեր Եկեղեցական ժողովներին, լինեն նրանք հոգաբարձուական, թեմական թե ազգային:

Սրանից բացի, հին ժամանակներում աշխարհականների մասնակցությունը արդարանում էր նրանով, որ մասնակցողները միշտ **իշխաններ** էին լինում եւ ոչ թե հասարակ աշխարհականներ: Երբ հայոց թագավորը քրիստոնեությունը **պետական կրոն** հռչակեց, այդ կրոնին տվեց քաղաքացիական եւ պետական մի նոր հանգամանք: Պետությունը ոչ միայն հովանավորում էր նոր կրոնը, այլ նաեւ Եկեղեցական կանոնները պարտադիր էր դարձնում իր բոլոր հպատակների համար իբրեւ քաղաքացիական օրենքներ: Հեկեղաբար քաղաքացիական իշխանության ներկայացուցիչների մասնակցությունը կարելու էր նման ժողովներում իբրեւ գործադիր իշխանություն:

Եկեղեցական հարցերի մեջ աշխարհականի կամ կղերականի խնդիր հարուցանել անտեղի է եւ ենթադրում է դասակարգային խտիր, ինչ որ գոյություն չունի եւ պետք չէ որ ունենա Եկեղեցու մեջ: Հոգեւորականը արդեն իսկ բոլոր հավատացյալների ներկայացուցիչն է, լիազորված որոշ իշխանությամբ եւ պատրաստված ու դաստիարակված կրոնական գործերի վարչության համար: Ուր որ աշխարհիկ ներկայա-

հավատացյալների ներկայությունը եւ գործակցությունը անհրաժեշտ է. Եկեղեցու վարիչները եւ առաջնորդները հրավիրում են կամ նշանակում նրանց այդ որոշ գործերի համար: Եկեղեցու մեջ կատարված **բոլոր** գործերը Եկեղեցու գործերն են, կարելու է նրանց կատարյալ կերպով գործադրվելն է, եւ ոչ թե ում կողմից գործադրվել:

Վերելում ասվածները միջանկյալ էին, ու շոշափում են կարելու սկզբունքներ եւ այժմեական հարցեր: Վերադառնալով Աշտիշատի ժողովին պետք է ասել, որ այս ժողովի կանոնները որոշ հողվածների բաժանված ձեւով չեն հասել մեզ, այլ որպէս պատմական տեղեկություններ ժամանակակից պատմիչների կողմից: Հետագայում դրանք վերածվել են վեց հողվածներից բաղկացած մի կանոնախմբի:

Բ. Երկրորդ հայ Եկեղեցական ժողովը գումարված է Շահապիվանի մեջ 447 թվին հրավերով եւ նախագահությամբ Հովսեփ կաթողիկոսի: Առաջին կանոնավոր ժողովն է, որի որոշումները գլխակարգված ձեւի տակ ունենք: Ներկա են «40 եպիսկոպոս, շատ երեցներ, սարկավագներ եւ համորեն ուխտ Եկեղեցվո, իշխաններ, գավառապետներ, եւ այլն: Իրապես փառավոր ժողով է սա ամեն կողմից, թե պատմությամբ եւ թե որոշած կանոններով, որոնց թիվն է 20: Նախկին ժողովների անաստողները նգովքի, բանադրանքի եւ ապաշխարության էին ենթարկվում, իսկ այս ժողովի կանոնների դեմ անաստողներին տուգանք է սահմանվում եվ մարմնական պատիժներ, ինչ որ նշանակում է թե ժողովի կանոնները ստանում են քաղաքացիական օրենքի պարտադիր ուժ: Բարոյական եւ բարեկարգական կանոններ են սրանք:

Գ. **Դվինի Ա. ժողով.**- Գումարված 507 թվին, Բաբգեն կաթողիկոսի հրավերով ու նախագահությամբ. զբաղված է դավանական հարցերով: Ներկա են նաեւ վրաց եւ աղվանից եպիսկոպոսները: Մերժում են նեստորականությունը եւ ընդունում են լոկ առաջին երեք Տիեզերական ժողովները. ինչ որ անուղղակի մերժումն էր Քաղկեդոնի: Այս ժողովը կանոններ չի սահմանած:

Դ.- **Դվին Բ. ժողով.**- Գումարված 555 թվին Ներսես Բ. կաթողիկոսի հրավերով եւ նախագահությամբ: Սահմանված են 37 կանոններ:

Ե.- **Դվին Գ. ժողով.**- Գումարված 610 թվին Աբրահամ կաթողիկոսի եւ վրաց Եկեղեցու քաղկեդոնականությունը ընդունելու կապակցությամբ մերժելով նրանց հաղորդակցությունից: Կանոն չէ սահմանած:

Ձ.- **Դվին Դ. Ժողով.**- Ներսես Գ. Շինողի նախագահությամբ, 648 թվին: Կազմեց պատճառաբանյալ դավանաբանական ձեռնարկ «մի բնութիւն» բանաձեւի մասին եւ սահմանեց 12 կանոն Եկեղեցականների նյութական ապահովության եւ բարոյական բարվոքման մասին:

Է.- **Դվին Ե. Ժողով.**- Գումարվեց Հովհան օձնեցու հրավերով, 710 թվին: Սահմանեց 32 կանոններ:

Ը.- **Պարտավի Ժողով.**- Գումարված 771 թվին, Սիոն կաթողիկոսի հրամանով: Պարտավ Աղվանից մայրաքաղաքն էր. մասնակցեց նաեւ աղվանից կաթողիկոսը իր եպիսկոպոսներով. սահմանեցին 24 կանոններ:

Թ.- **Երջնակի Ժողով.**- 842թվին: Որովհետեղհանիրավի գահից հեռացված մի կաթողիկոսի (Հովհաննես Ե.Ովայեցի) մասին էր խնդիրը, ուստի ժողովի հրավերը Սմբատ սպարապետի եւ Գրիգոր Սյունյաց իշխանի կողմից եղավ: Կանոն չեն նշանակած լոկ կաթողիկոսը արդարացրած ու կրկին պաշտոնի հրավիրած են:

Ժ.- **Անիի Ժողով.**- 970 թվին, Աշոտ թագավորի հրավերով գումարված ամբաստանելու եւ գահընկեց անելու համար Վահան Սյունեցի կաթողիկոսին, որը «միաբանության թուղթ» ստորագրած էր քաղկեդոնականների հետ, այսինքն իր դավանանքը փոխած էր:

ԺԱ.- **Հարքի Ժողով.**- Գումարված 1002 թվին, Սարգիս կաթողիկոսի հրամանով, նգովելու համար թոնդրակացվոց աղանդը. կանոն չէ սահմանած:

ԺԲ.- **Անիի Ժողով.**- Գումարված 1030 թվին եւ Պետրոս Գետադարձ եւ Դիոսկուրոս կաթողիկոսների հարցը կարգադրելով: Դիոսկուրոսը աքսորեցին եւ Պետրոսը իր պաշտոնին մեջ վերահաստատեցին: Ժողովը հրավիրեց եւ նախագահեց աղվանից կաթողիկոսը:

ԺԳ.- **Հռոմկլայի Ժողով.**- Գրիգոր Տղա կաթողիկոսի հրավերով, 1179 թվին, պատրաստեցին հունաց ուղարկվելիք դավանաբանական թուղթը:

ԺԴ.- **Սսի Ժողով.**- Գումարվեց 1243 թվին, Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի հրավերով. սահմանեցին 23 կանոն բարեկարգական նկարագրով:

ԺԵ.- **Սսի Բ. Ժողով.**- 1361 թվին գումարված Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսի նախագահությամբ, որ մերժեց լատինասեր կաթողիկոսների եւ թագավորների մտցուցած փոփոխությունները:

ԺԶ.- **Երուսաղեմի Ժողով.**- Գումարված 1651 թվին Փիլիպպոս կաթողիկոսի նախագահությամբ եւ իր Երուսաղեմ այցելության ընթացքին: Ժողովին մասնակցեցին Սսի Ներսես կաթողիկոսը եւ Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքը: Սահմանեցին 13 կանոններ:

Ուրեմն արեւելյան Եկեղեցիների հասկացողությամբ Եկեղեցական բարձրագույն իշխանությունը եւ հեղինակությունը արտահայտվում է Ընդհանրական Եկեղեցու պարագային Տիեզերական ժողովներով, իսկ մասնակի ժողովների պարագային մասնակի կամ ազգային ժողովներով: Հավատքի կամ կարգի վերաբերյալ անսխալ վարդապետությունը պատկանում է այս ժողովներին:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Քրիստոնեական կրոնի հնագույն եւ հիմնական հասկացողությամբ երբ Եկեղեցի բառը հոգնակի գործածենք նրանով հասկանում ենք լոկ տեղական Եկեղեցիները, այսինքն աշխարհագրականորեն տարբեր վայրերի մեջ ապրող Եկեղեցիները որոնք ծեսով կարող են իրարուց տարբեր լինել: Այլապես քրիստոնեական Եկեղեցին մեկ է եւ կարող է միայն մեկ լինել: Դժբախտաբար այժմ ոչ միայն աշխարհագրականորեն եւ ազգայնապես ու ծեսով բաժանված Եկեղեցիներ կան կան այլ նաեւ դավանանքով: Ըստ այսմ Քրիստոնեական մեկ ԵԿԵՂԵՑԻՆ ներկայիս բազում Եկեղեցիների բաժանված է:

Քրիստոնեությունը երկու խումբերի կարելի է բաժանել.

Ա. Պատմական Առաքելական Եկեղեցիներ.

Բ. Բողոքական աղանդներ.

1.- Առաջինը շեշտում է ավանդությունը եւ ծիսական բարեպաշտությունը, իսկ երկրորդը՝ Սուրբ Գրոց ընթերցասիրությունը եւ այսպես կոչված մաքրակրոնությունը:

2.- Առաջինը կարեւորություն է ընծայում ծեսին եւ հեկեղաբար քահանային, երկրորդը՝ քարոզին, հեկեղաբար քարոզչին:

3.- Առաջինի մեջ Եկեղեցական նվիրապետությամբ, երկրորդին՝ ժողովրդով:

4.- Առաջինը Սուրբ խորհուրդներով եւ Եկեղեցասիրությամբ հետապնդում է իր փրկությունը, երկրորդը՝ բարի գործերով եւ Սուրբ Գրոց պատվիրանապահությամբ:

Բողոքականությունը քանի որ մերժում է կենտրոնացյալ իշխանության սկզբունքը, հեկեղաբար բաժանված է բազմաթիվ մասերի եւ եթե ուզի կարող է հանիունս բաժանվել: Հակառակ սրան սակայն նրանց մեջ կան մի քանի մեծ եւ կարեւոր խմբեր, որոնք միլիոնավոր անդամներ են հաշվում իրենց մեջ, հատկապես Ամերիկայում: Գլխավորներն են. Անգլիկաններ կամ եպիսկոպոսականներ, որոնք առաքելական Եկեղեցիների մերձավորագույն խմբակն են, ունենալով եպիսկոպոսական դրություն, պատարագ եւ այլն: Լուտերականներ, Երիցականներ, Նեթոտականներ, Մկրտչականներ, ժողովականներ եւ այլն: Իսկ նրանցից ոմանք, օրինակ Քրիսչըն Սայընթիստներ, Սորմոններ, Յունիթերյաններ, Յեհովայի վկաներ եւ այլն հազիվ թե կարելի է **քրիստոնեական** աղանդ կոչել, քանի որ իրենց մեջ ոչ-քրիստոնեական շատ տարրեր կան մտած:

Իսկ առաքելական Եկեղեցիները կարելի է նախ երկու խմբի բաժանել. Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիներ

Հռոմեական կաթոլիկ Եկեղեցի:

Երկուսի միջեւ հիմնական տարբերությունը Եկեղեցական գերագույն իշխանության հասկացողության մեջ է: Արեւելյանները քաղաքային կամ ազգային կեդրոնացյալ կրոնական իշխանության սկզբունքը որդեգրած են, իսկ երկրորդը ընդհանրական, **մեկ** եւ կենտրոնացյալ իշխանության սկզբունքին է հավատում եւ այն կիրարկում: Դավանանքի եւ ծիսական տարբերությունները քիչ են եւ աննշան եւ հեկեղաբար չեն արդարացնում դարավոր այս բաժանումը:

Հռոմեական Եկեղեցին իշխանությամբ եւ դավանանքով ամենուրեք մեկ է, իսկ ծեսով այլազան: Տիրականը բնականաբար **լատին** ծեսն է, որ պաշտոնապես կրարկվում է Եվրոպայի եւ Ամերիկայի **բոլոր** կաթոլիկ երկրների մեջ: Իսկ արեւելյան գրեթե բոլոր Եկեղեցիներից հատվածներ բաժանված են իրենց մայրենի Եկեղեցիներից եւ միացած են Հռոմի Եկեղեցուն: Սրանք արտոնված են պահել իրենց մայր Եկեղեցու ծեսը տոնական եւ նվիրապետական դրությունը ինչ-ինչ փոփոխություններով: Բոլորն էլ իրենց մասնավոր տեղական հոգեւոր պետերն ունենալով հանդերձ հպատակվում են Հռոմի պատրիարքի գերագույն իշխանության:

Իսկ արեւելյան Եկեղեցիները բաժանվում են երկու խմբի, Հունադավան Եկեղեցիներ եւ արեւելյան ազգային Եկեղեցիներ: Այս երկու խմբերի մեջ հիմնական տարբերությունը Քաղկեդոնի ժողովն ընդունելուն կամ չընդունելուն մեջ է կայանում: Ուրիշ խոսքով Քրիստոսի անձին մեջ **մեկ** կամ **երկու** բնություն դավանելու մեջ:

Հունադավանները ընդունում են Քաղկեդոնը՝ հետեւաբար Քրիստոսի անձին մեջ **երկու** բնություն են դավանում: Սյուս Եկեղեցիները մերժում են Քաղկեդոնը հետեւաբար Քրիստոսի մեջ մեկ բնություն են դավանում:

Հունադավանները բաժանվում են 15-16 ինքնավար Եկեղեցիների իրենց պատրիարքներով կամ Եկզարքներով: Դավանանքով եւ ծեսով մեկ են, տարբեր են լեզվով եւ այլ մանր ծիսական խնդիրների մեջ: Դրանք են.

ա. Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարքություն

բ. Աղեքսանդրիոն պատրիարքություն

գ. Անտիոքոն պատրիարքություն

դ. Երուսաղեմի պատրիարքություն

ե. Կիպրոսի Եկեղեցի

զ. Սինայի Եկեղեցի

է. Ռուսիոն Եկեղեցի

ը. Սերպիոն (Հարավսլավիա) Եկեղեցի

թ. Ռումինիայի Եկեղեցի

ժ. Բուլղարիայի Եկեղեցի

ժա. Ալպանիայի Եկեղեցի

ժբ. Վրաստանի Եկեղեցի՝ իրենց պատրիարքով

ժգ. Հունաստանի Եկեղեցի

ժդ. Լեհաստանի Եկեղեցի

ժե. Ֆինլանդիայի Եկեղեցի իրենց արքեպիսկոպոսներով:

Իսկ արեւելյան այսպես կոչված ազգային Եկեղեցիներն են.

ա. Դպտական Եկեղեցի

- բ. Հայկական Եկեղեցի
- գ. Ասորական Եկեղեցի
- դ. Հնդկական Մալապար Եկեղեցի
- ե. Եթովպական Եկեղեցի:

Սրանք դավանանքով համարյա մեկ են. իսկ տարբեր՝ ծիսական, տոնական եւ վարչական դրությամբ:

Հայաստանյայց Եկեղեցի.- Սա այն Եկեղեցին է որ սկիզբն առեց Հայաստանում առաքելական քարոզությամբ եւ հաստատվեց որպես հայոց պետական կրոնք Ս. Լուսավորչի առաքելական աշխատանքով: Հայոց Եկեղեցին սկզբնական շրջանում սերտորեն կապված էր Եդեսիո Եկեղեցուն (Ասորական) մեկ կողմից եւ կապադովկիո Եկեղեցուն (հունական) մյուս կողմից: Սրանցից ընդունած է քարոզիչներ եւ ծիսական ու նվիրապետական իր դրությունը: Հայերը այս երկու Եկեղեցիների ծեսերը, նրանց իսկ լեզվով, գործածել են մինչեւ իրենց հատուկ գրական լեզու ունենալը: Ս. Լուսավորիչ իր առաքելական հաջողության նվիրապետական կարգը ստացավ Կեսարիո հունական մետրոպոլիտից եւ Հայաստանյայց Եկեղեցու պետ եւ գլուխ եղավ իբրեւ հաջորդ Թադեոսի եւ Բարդուղիմեոսի, եւ իբրեւ եպիսկոպոս «Հայոց Մեծաց» Ս. Լուսավորիչ Կեսարիա գնաց ձեռնադրվելու, որովհետեւ երկրում եպիսկոպոս չկար նրան ձեռնադրելու համար: Հուսիկ եւ Ներսես նույնպես Կեսարիա գնացին, որովհետեւ աշխարհական էին երբ կաթողիկոս ընտրվեցին: Իսկ նրանք ովքեր արդեն իսկ եպիսկոպոս էին իրենց կաթողիկոս ընտրված ժամանակ (Արիստակես, Կրթանես եւ Շահակ) չգնացին Կեսարիա: Հայոց Եկեղեցին **ինքնագլուխ** եղած է ի սկզբանե անտի, եւ որեւէ ուրիշ Եկեղեցու ենթարկյալ չէ եղած: Իր պետերը ի սկզբանե անտի գործածած են «կաթողիկոս» մակդիրը: Իսկ հայերենով հոչված են **Հայրապետ**, որ հունարեն **պատրիարք** բառին տառական թարգմանությունն է: Պատմական պարագաների ծնունդ են Երուսաղեմի ու Կոստանանդուպոլսի պատրիարքությունները եւ Սսի ու Ախթամարի կաթողիկոսությունները, որոնք ենթակա են, կամ պետք է լինեն **«Ամենայն Հայոց»** կաթողիկոսին, որպեսզի հայոց Եկեղեցին մեկ լինի, այլապես կլինի մեկից ավելի: «Ամենայն Հայոց» տիտղոսը առել է զանազանելու համար վերոհիշյալ տեղական եւ արվեստական պատրիարքություններից եւ կաթողիկոսություններից, ինչպես այդ ցույց է տալիս իր «Ճայրագույն պատրիարք» տիտղոսը:

Հայոց Եկեղեցու իշխանության սահմանը.- Հին ժամանակ երբ Եկեղեցին դեռ մեկ հավատք ուներ, ընդունված օրենք էր, որ մեն մի գավառ մեկ եպիսկոպոս միայն ունենար եւ այդ գավառում ապրող բոլոր քրիստոնյաները անխտիր, հոգ չէ թե ինչ ցեղի կամ երկրի պատկանեին, հոգ չէ թո ինչ լեզու խոսեին, ենթակա պետք է լինեին այդ միակ եպիսկոպոսին թե հավատքի եւ թե պաշտամունքի տեսակետից: Բայց դարեր վերջ, երբ վեճեր ծագեցին պատրիարքական աթոռների միջեւ, բաժանումներ հառաջ եկան նրանց մեջ, սկսեցին իրար նզովել եւ իրարուց **չհաղորդվել**: Իսկ այս պատճառով երբ մի գավառում տարբեր ծեսի եւ տարբեր դավանանքի քրիստոնյաներ բազմացան նրանք իրավունք զգացին ունենալու իրենց քահանան, կամ մինչեւ իսկ եպիսկոպոսը, եւ այսպես նույն թեմում գոյություն առան մեկից ավելի եպիսկոպոսներ, նույն պատրիարքության համար ծագում առան մեկից ավելի պատրիարքներ: Խաչակիրները մանավանդ հաստատ ծես տվեցին այց խտրականության Արեւելքի մեջ հաստատելով իրենց Եկեղեցիները եւ եպիսկոպոսությունները:

(վախճանյալ 407 թվին).

6. Կյուրեղ հայրապետ Երուսաղեմի (վախճանյալ 386 թվին).

7. Կյուրեղ պատրիարք Աղեքսանդրիո (վախճանյալ 444 թվին) որ վարիչ անձնավորությունն էր Եփեսոսի Տիեզերական ժողովում (431):

Սրանք բոլորն էլ Արեւելյան Եկեղեցու հայերն են ու թեւ ընդունված են իբրեւ մեծ հեղինակություն նաեւ Արեւմուտքի մեջ, բայց Հռոմի Եկեղեցին առավել կարեւորություն ընծայում է «Չորս Մեծերուն» որոնք նախապես կազմում էին լատին Եկեղեցու «վարդապետները»:

1. Ամբրոսիոս՝ եպիսկոպոս Միլանի (վախճանյալ 397 թվին).

2. Հերոնիմոս՝ թարգմանիչ լատիներեն Աստվածաշնչի (վախճանյալ 420 թվին).

3. Օգոստինոս՝ եպիսկոպոս Հյուսիսային Ափրիկեյի (վախճանյալ 430 թվին).

4. Գրիգոր Ա. պապ (վախճանյալ 604 թվին): Դիտելի է որ սրանցից ոչ մեկն էլ իբր սուրբ չի ճանաչվել Հայաստանյայց Եկեղեցու կողմից եւ հետեւաբար չեն մտել մեր

տոնացույցի մեջ: Այս «չորս»երուն վրա Հռոմի Եկեղեցին ավելացրեց պաշտոնապես «Եօթը Արեւելքցիները»՝ Նյուսացին փոխանակելով Հովհաննես Ղամասկացու հետ (վախճանյալ 754 թվին): Եւ այլ 12 արեւմտյան աստվածաբաններ որոնցից ամենից նշանավորն է Թովմա Ագուինացին (վախճանյալ 1274 թվին) Եւ վերջինը, եթէ չենք սխալվում Ալֆոնս Լիկորի (վախճանյալ 1787 թվին): Ուրեմն լատին Եկեղեցին ունի պապական վճիռներով հաստատված 23 «Եկեղեցւոյ վարդապետներ»:

Հունական կամ օրթոդոքս Եկեղեցին, որչափ գիտենք, չունի պաշտոնական մի ցուցակ իր Եկեղեցու «վարդապետների»: Բայց նրանց մոտ առաջին գծին կուգան Կապադովկյան հայրերը Եւ Ս.Հովհան Ոսկեբերան: Ասորական Եկեղեցու մեջ Եփրեմ Խուրի:

ՎԱՐԴԱՊԵՏՔ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ

Մեզ հանար կարեւորագոյն հարցը այն է թե որո՞նք են «Հայաստանյայց Եկեղեցու վարդապետները» որոնց գրվածքները դառնան անառարկելի աստվածաբանական հարցերում: Այս հարցին որպէս պատասխան բացահայտ Եւ պաշտոնական ոչ մեկ ցուցմունք չունինք, հետեւաբար հարկադրվում ենք դիմելու անուղղակի աղբյուրների այդ մասին եզրակացություն հանելու համար: Նախքան այդ աշխատանքին ձեռնարկելը մի փորձ անենք գտնելու համար թե որոնք են այն չափանիշները որոնք այս կամ այն Եկեղեցական դեմքերին «վարդապետ Եկեղեցւոյ» դարձնում են: Նմանօրինակ մի փորձ երբ անում ենք, տեսնում ենք, որ մի շարք հասարակաց հատկանիշներ հասարակաց են վերոհիշյալ մակդիրով ճանաչված բոլոր Եկեղեցական հայրերին: 1. Գրեթե բոլորն էլ, ժամանակի չափանիշներով, բարձր ուսմունք ունեն Եւ մշակված մտքեր են.

2. Իրենց վարքով սրբակյաց անձնավորություններ են. հետեւաբար՝ 7.

3. Տոնելի սրբեր են.

4. Եկեղեցու բարձր Եւ պատասխանատու պաշտոնատարներ են.

5. Եկեղեցու պաշտպաններ Եւ ջատագովներ են ընդդէմ հերետիկոսների 6. հետեւաբար՝ Ուղղափառ հայրեր են, որպէս վերջին Եւ կարեւորագոյն հատկանիշ.

7. Աստվածաբանական հարցերի շուրջ գրվածքներ ունեն, զորս կարելի է օգտագործել բոլոր ժամանակների մեջ:

Այս գյուտից հետո պետք է փնտրենք մեր մատենագրության Եւ ժամապաշտպան գրքերում ցուցմունքներ, որոնք կարենանք կիրարկել վերոհիշյալ չափանիշները: Այս ուղղությամբ առաջին ցուցմունքը մեզ ընծայում է մեր տոնացույցը: Նրանում ունենք մի տոն «Երկոտասան վարդապետաց» ուր ի մի խմբված են ընդհանրական Եկեղեցու հատուկ հայրերի հոյակապ մի հույլ: Բնական է որ խորհինք թե այս համախումբը կատարվել է մի հատուկ նպատակով, քանի որ այնտեղ հիշված դեմքերից բոլորն էլ, բացի առաջինից թերեւս, արդեն իսկ ունեն իրենց առանձին կամ ընկերովի տոները, հետեւաբար նրանց վերոհիշյալ հատկանշական ու խմբական անունով համադրվելը չունի ուրիշ անուն ու նշանակություն բայց եթէ մատնանշել թե նրանք են «հայոց Եկեղեցւոյ (ոչ-հայ) վարդապետները»: Անուններն են Տոնացույցի կարգով.

1. Լեթեսու Աթենացի

2. Դիոնիսեիոս Արիսպագացի (երկուսն էլ առաքելական դարի դեմքեր «մին մյուսի ուսուցիչը» Եւ Աթենքի առաջին եպիսկոպոսները)

3. Սեղբեստրոս՝ հայրապետ Հռոմի (վախճանյալ 335 թվին)

4. Աթանաս

5. Կյուրեղ Երուսաղեմացի

6. Եփրեմ Խուրի

7. Բարսեղ Կեսարացի

8. Գրիգոր Նյուսացի

9. Գրիգոր Աստվածաբան

10. Եպիփան Կիպրացի (վախճանյալ 402 թվին)

11. Հովհան Ոսկեբերան

12. Կյուրեղ Ալեքսանդրացի

Այս ցուցակը մի սքանչելի համադրություն է ոչ միայն որովհետեւ իր մեջ բովանդակում է Արեւելյան Եկեղեցու, որի մեկ մասն է Հայաստանյայց Եկեղեցին, ամենից հայտնի «վարդապետները» այլ նաեւ նրա համար որ իր մեջ պարունակում է

ներկայացուցիչներ համաքրիստոնեական բարձրագույն աթոռների, որոնք նույն ժամանակ եղել են քրիստոնեական ուսման կարեւորագույն կենտրոնները: Այնտեղ կան նաեւ դեմքեր մեզի հարեւան երկու մեծ կենտրոններից՝ Կեսարիայից եւ Եդեսիայից. ապա համաքրիստոնեական հինգ մեծ պատրիարքական աթոռներից, Աղեքսանդրիայից, Անտիոքից, Երուսաղեմից, Կոնստանդնուպոլսից եւ մինչեւ իսկ հեռավոր Հռոմից: Միակ դիտելի պարագան այն է, որ Հռոմի ներկայացուցիչը, Սեղբեստրոս հայրապետ աստվածաբան մի գրող չէ, եւ ընդունված չէ իբրեւ այդպիսին մինչեւ իսկ Հռոմի Եկեղեցու կողմից: Իր այս բացառիկ դիրքը, լոկ Հայաստանյայց Եկեղեցու մեջ եւ կրկնակ տոներով, ան պարտական է Պարզապետ Ս. Լուսավորչի հետ ունեցած իր ավանդական հարաբերության: Բացի դրանից, ըստ երեսույթին այս անունից բացի Արեւմտյան Եկեղեցու ուրիշ հեղինակավոր դեմքեր անծանոթ մնացել են մեր մատենագրության (Սեղբեստրոս ծանոթ էր Ազաթանգեղոսից): Օգոստինոս, Արեւմտյան Եկեղեցու (Բողոքականությունն էլ ներառյալ) մեծագույն աստվածաբանը, ոչ մեկ արծազանք չի ունեցել մեր մեջ: Ուրեմն Հայաստանյայց Եկեղեցին թեւ ունի ավելի քան մի երկոտասնյակ տոների սրբեր Արեւմտյան Եկեղեցուց, բայց ոչ մեկ «վարդապետ» բառի իսկական առումով:

Համաքրիստոնեական համբավ ունեցող այս փառանգի վրա ո՞ր հայազգի վարդապետները պետք է ավելացնել: Այդ մասին Տոնացույցից որպէս ցուցմունք ունենք «Թարգմանիչ վարդապետները»:

1. Մեսրոպ
2. Եղիշե
3. Մովսես Քերթոզ
4. Ղափիթ Անհաղթ Փիլիսոփա (բոլորն էլ Ե. դարու դեմքեր)
5. Գրիգոր Նարեկացի (վախճանյալ 1010 թվին)
6. Ներսես Շնորհալի (վախճանյալ 1173 թվին)

Բացահայտ է որ այս թվումը սակայն լրիվ չէ տալու համար Հայաստանյայց Եկեղեցու հատուկ «վարդապետների» ցանկը: Ուրիշ աղբյուր մը, որպէս պատմական տեղեկություն, գալիս է փոքր ինչ ավելի լույս սփռել այս հարցի մասին: Մեծփեցի պատմիչը հիշատակում է մի դեպք ուր Եսայի Նչեցի (վախճանյալ 1335 թվին) մեծ վարդապետը եւ նախակարապետը տաթեւյան վարդապետության որպէս թե իր աշակերտներին դասախոսում է լատին մի հեղինակի կողմից գրված «Առաքինությանց եւ Մոլորությանց Գիրք» – ից: Մեծփեցին մեղադրում է բոլոր նրանց ովքեր իր նման լատին հեղինակություններ նախադասում են հայ Եկեղեցու ընդունած հեղինակություններից եւ անունով հիշատակում է Ս. Լուսավորիչը, Աթանաս հայրապետը, Գրիգոր Աստվածաբան, Կյուրեղ Աղեքսանդրացի, Ստեփանոս Սյունեցի (վախճանյալ 735 թվին), Անանիա Շիրակացի, Պողոս Տարոնեցի, Հվիան Օծնեցի, Սարգիս Հաղբատցի, Ղափիթ փիլիսոփա, Մովսես Քերթոզահայր եւ Ասողիկ պատմիչ (Տես Ազգապատում հատված 1352): Այս ցուցակը թեւ չունի հեղինակության մի հանգամանք, բայց զուրկ չէ հեղինակավոր հայ վարդապետները ճշդելու արժեքից:

Ամենից լրիվ եւ հեղինակավոր ցուցմունքը այս հարցի մասին, գալիս է Ձեռնադրության մաշտոցից: Քահանայության եւ նրանից վեր բոլոր Եկեղեցական պաշտոնյաների ձեռնադրության ժամանակ, հրավիրյալից պահանջվում է նախ «մերժել եւ նզովել» մի շարք հերետիկոսների, եւ ապա «հետեւիլ եւ աշակերտել ամենայն ուղղափառ եւ աստվածաբան հայրապետաց»: Սրանցից անվանական կերպով հիշվում են 20-ը, որոնց մեջ ներփակյալ են Տոնացույցի «Երկոտասան Վարդապետներ»-ը, առավել Գրիգոր Աթանասեանցի եւ Հակոբ Մծբնա հայրապետները, չենք գիտեր թե ինչ նկատումով, որովհետեւ թեւ երկուսն էլ շատ ժողովրդական սուրբեր եղած են, բայց ոչ «աստվածաբան» հայրապետներ: Իսկ պակասում են թարգմանիչ վարդապետներից Գրիգոր Նարեկացի եւ Ներսես Շնորհալի, դարձյալ չենք հասկանում ի՞նչ նպատակով: Հատկապէս ուշադրության առնվելիք պարագա է Շնորհալու ցանկից դուրս մնալը, վասնզի այն միշտ նկատված է Հայաստանյայց Եկեղեցու ամենից հեղինակավոր «վարդապետ»-ներից մեկը: Իսկ իբրեւ «Թարգմանիչ վարդապետք» հիշված են լոկ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, իսկ մնացյալ հայազգիներն են, Ս. Լուսավորիչ, առավել «Որդիք եւ Թոռունք». Հովհաննես Օծնեցի կաթողիկոս հայոց (վախճանյալ 728 թվին), Հովհաննես Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի եւ Ստեփանոս Սյունեցի վարդապետները:

Եթե համադրելու լինենք Տոնացույցի եւ Ձեռնագրության Մաշտոցի տվյալները, մեջտեղ է գալիս մի ուրիշ խումբ «երկոտասան վարդապետներ»-ի, որոնք սակայն լինելով

ազգով հայ, սեպհական են լոկ Հայաստանյայց Եկեղեցուն: Հետեւյալն է ձեռք բերված այդ ցանկը. 1. Ս. Գրիգոր Լուսավորիչ

2. Ս. Սահակ Պարթև
3. Ս. Մեսրոպ Մաշտոց
4. Եղիշե
5. Դավիթ Անհաղթ
6. Մովսես Քերթոզ
7. Գրիգոր Նարեկացի
8. Ներսես Շնորհալի
9. Հովհան Օձնեցի
10. Հովհաննես Որոտնեցի
11. Գրիգոր Տաթևացի
12. Ստեփանոս Սյունեցի

Սրանք բոլորն էլ Հայաստանյայց Եկեղեցու տոնելի սրբեր են, բացի վերջինից՝ Սյունեցուց, եւ վերջացնում են «Եկեղեցու վարդապետներ»-ի համար մեր թված բոլոր պայմանները: Այստեղ եւս մեզ համար անհասկանալի մնացած է թե Ստեփանոս Սյունեցին ինչո՞ւ Տոնացուցում տեղ չի գտել, վասնզի Հայաստանյայց Եկեղեցու ամենից արժանավոր զավակներից մեկը եղած է նա թե իր հմտությամբ եւ թե բարեկարգական գործունեությամբ, թե իր գրական մեծածավալ վաստակով եւ թե ինչ որ ամենից կարելուրն է այս պարագայում – իր սուրբ վարքով: Հույժ նախանձախնդիր եղել է իր ժողովրդի վարք ու բարքի բարեկարգության, որին մինչեւ իսկ զոհ է գնում, նահատակվելով անբարո մի բարձրաստիճան կնոջ կողմից, որին նա իր անուղղա վարքին համար բանադրել էր: Ճգնավոր մի մարդ մինչեւ իսկ մի տեսիլքով նշմարում է նրա երկնային փառավորությունը: Դժվար է նրա Տոնացուցի մեջ չի մտնելուն որեւէ մի բանավոր պատճառ գտնել, մանավանդ որ իր հիշատակը «Յասմավուրք»-ի մեջ անցած է, որ է ասել թե սրբացման առաջին քայլը արդեն իսկ առնվել է:

ԿԱՆՈՆՔ ԵՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

Եկեղեցվո հայրապետները, իբրեւ պատասխանատու գլուխները Եկեղեցու, սահմանած են բարեկարգական կանոններ եւ գրած են դավանաբանական թուղթեր, որոնք սիրով ընդունված են Եկեղեցու կողմից, եւ այդ իսկ պատճառով կարող են ծառայել որպէս Տեղիք աստվածաբանության: Այս տեսակետից առաջին գծի վրա գալիս են օրինակ մեր Իրավանց հավաքածուի մեջ հիշված հայոց սուրբ հայրերի կանոնները. այսպէս Ս. Լուսավորչի, Ս. Սահակի, Ներսես Շնորհալու, Ներսես Ե-ի, Գեորգ Դ-ի, Մկրտիչ Ա-ի կանոնները, ինչպէս նաեւ օտար Եկեղեցիների հայրերից Ս. Բարսեղի, Աթանասի, Դիոնիսիոսի, Գրիգոր Աստվածաբանի, Կյուրեղի եւ այլ հայրերի կանոնները: Իսկ կաթողիկոսների դավանաբանական գրությունների կարգից առաջին գծին գալիս է «Գիրք Թղթոց»-ը, «Ընդհանրական»-ը եւ այլ հայրապետական կոնդակներ: Խորքում իբրեւ Տեղիք աստվածաբանության՝ մեծ տարբերություն չկա Ս. հայրերի կամ Եկեղեցու վարդապետների գրությունների ու կարգադրությունների միջեւ: Երկու պարագայումն էլ նրանք «Եկեղեցու Հայրեր»-ի գրություններն են:

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅԱԸ, ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻՇԻ ՏԵՂԻՔ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Բանականությունը անկարող է թափանցել գերբնական իրերի հասկացողության մեջ: Բանականությունը Արարչից տրվել է լոկ իրերի **բնական** երեւոյթները հասկանալու համար: **Գերբնական հայտնվում է** միայն բանականության, հտեւաբար, այս իսկ պատճառով բանականությունը ըստ ինքյան չի կարող ծառայել որպէս եղիք աստվածաբանության, որը հաստատվել է գերբնական սկզբունքների վրա, որոնք մարդկանց **հայտնված են**: Բանականությունը որպէս պարզ օժանդակ կարող է ծառայել աստվածաբանության, ցույց տալով, որ աստվածաբանության մեջ տրված գերբնական սկզբունքները եւ

պատճառաբանությունները հատուկ չեն բնության, թեև նրանից շատ վեր են, եվ թե կան նաև բնական փաստեր, որոնք գեր-բնական ճշմարտությունները հավանության արժանի են դարձնում եւ հստակում են նրանց համաձայն մտքի բնական օրենքներին: Հտեւաբար, բանականությունը թեև չափանիշ չէ աստվածաբանության տվյալների ստուգությունը եւ ճշմարտությունը չափելու, այսուհանդերձ բոլորովին մերժելի մի գործիք էլ չէ, այլ աստվածատուր այն կարողությունն է, որով կարող են հասկանալ Աստծո հայտնությունները: Այս կապակցությամբ հարկ է հետեւյալ կետերը ի մտի ունենալ:

ա. Սոսկ բանականությունը կամ տրամաբանական փաստը չի կարող իբրև նախադրյալ կամ սկիզբ ծառայել աստվածաբանական հարցերում, որովհետև աստվածաբանության տվյալները կամ սկզբունքները աստվածային գերբնական հայտնություններ միայն կարող են լինել:

բ. բանականության աստվածաբանի համար աստվածաբանական մի հարց տրամաբանական կերպով ապացուցելու համար, որպեսզի հասկացվի եւ ընդունվի նաև աշխարհի «իմաստունների» կամ անհավատների կողմից:

գ. Սրանից բացի կան բնական եւ տրամաբանական ճշմարտություններ, որոնք իրենք իրենցից այնքան ծանոթ են, եւ բոլորից ընդունված, որ ապացուցանումի չեն կարողում: Հաճախ սրանք գործածում ենք ի հաստատություն ինչ-ինչ աստվածաբանական առաջարկությանց համար:

դ. Բանականությունը պարտի հետեւիլ եւ համակերպիլ հավատքին, եթե բանականությունը անկարող է վերահասու լինել հավատքի ճշմարտություններին, իրավունք չունի հավատի ոչ մի տվյալ սուտ հայտարարելու, նախ որովհետև նրանք իր կալվածում չեն ընկնում, եւ հտեւաբար նա իրավասու չէ նրանց մասին վճիռ արձակելու, երկրորդ՝ մինչեւ իսկ բանականության օրենքով որեւէ ընդունված տեսություն, աստվածաբանական էլ մեջը լինելով, մնում է որպես ընդունված որքան ժամանակ փաստացի կերպով չի հերքված: Իսկ տգետներ եւ հարցերին անտեղյակներ իրավունք չունեն այս մասին կարծիք իսկ հայտնելու, թող թե դրանք հերքելու: Մարդ կարող է ընդունել կամ մերժել հավատքի որեւէ ճշմարտություն: Իսկ նախապես հավատքի մի ճշմարտություն ընդունողը կամ շարունակում է հավատալ նրան եւ կամ կուրանա: Սրանցից տարբեր մի կեցվածք ոչ միայն սխալ է, այլ նաև բանականության օրենքներին հակառակ է: «Անոնք որ հանձնապատասխանությամբ կամ սուտ իմաստությամբ կմտնենան խնդիրներուն չեն կրնար վերահասու ըլլալ ճշմարիտ իմաստության».- ասել է Եկեղեցու հայրերից մեկը: Իսկ մեր Իզնատիոս վարդապետը ասում է. «Աստվածային ճշմարտություններ եւ խորհուրդներ հավատքով միայն կձանաչվին, մտքի քննությամբ չեն հասկացվիր»: Իսկ մի ուրիշը ասել է. «Այսքան մոլորություններ եւ հերետիկոսություններ ծավալեցան պարզապես անոր համար որ աստվածաբանության մեջ ստույգ կարծեցին միայն այն ճշմարտությունները որոնք լոկ բնական բանականությամբ ստույգ կկարծվեին»: Օրինակ. Արիոսայանները մեկ բնության մեջ երեք անձեր լինելը մտքի օրենքներին հակառակ էին համարում, կամ նեստորականները՝ որոնք երկու բնության մեջ մեկ անձ լինելը մտքի հակառակ էին նկատում: Եկեղեցու հայրերից մի քանիսը շատ զորավոր կերպով եւ օգտակարապես գործածեցին բանականության լույսը. օրինակ՝ Ս. Օգոստինոս, Եզնիկ Կողբացի, Լամբրոնացին, Տաթևացին եւ այլն. հավատքի վարդապետությունները բացատրելու տեսակետից: Սակայն երբեք պետք չէ մոռանալ, որ հանդգություն է եւ մինչեւ իսկ հիմարություն, այնպես կարծել թե բանականության լույսով միայն կարելի է ապացուցանել հավատքի բոլոր տվյալները, վասնզի այդ անկարելի է, եւ նրանք ովքեր նամն մի փորձ են անում անխուսափելի կերպով ընկնում են զարտուղի ճամփաներում:

Իմաստությունն էլ բանականության առումով կարող է որպես Տեղիք ծառայել աստվածաբանության: Միակ տարբերությունը այն է, որ երբ մեկը անձամբ իր բանականության լույսը գործածելով լուսավորում է աստվածաբանական մի ճշմարտություն, այդ ընկնում է առաջինի մարզում, իսկ երբ իմաստուններից մեջբերումներ անելով նույն նպատակին է հասնում, այս գործողությունն էլ ընկնում է երկրորդ մարզի մեջ: Այս կերպը օգտակար է ընդդեմ նրանց ովքեր իմաստասիրական տվյալներով պայքարում են հավատքի դեմ: Եւ այս կերպը օտար չէ Եկեղեցու հայրերին, ընդհակառակը՝ լիովին օգտագործած են հունական իմաստասերներին, ոչ միայն նրանց երկնած եզրերը գործածելով իրենց աստվածաբանական ճշմարտությունների համար, այլ նաև նրանցից մեջբերումներ կատարելով հեթանոս իմաստասերների դեմ հակաձառելու համար: Մինչեւ իսկ այս մեթոդը անցողակի կերպով գործածված է Նոր Կտակարանում: «Ասաց ոմն ի նոցանէ, **իւրեանց իսկ**

մարզարէ, կրետացիք հանապազասուտ, չարաճճիք, դատարկապորտք» (Ա.Տիտ.Ա.12): Սակայն պետք է մտքում պահել, որ իմաստասիրությունը բացարձակ մի անհրաժեշտություն չէ աստվածաբանության համար, այլ իմաստուններից մեջբերումներ անելուն նպատակն է թշնամու գենքով պայքարել թշնամու դեմ: Իսկ ուր որ իմաստասիրությունը եւ աստվածաբանությունը իրարու հակառակ տեսություններ են հայտնում, կամ այն է որ երեւութական հակասությունը եւ կամ այն է որ իմաստասիրությունը սխալ է, ինչպես են օրինակ Եպիկուրականությունը կամ արդի նյութապաշտականությունը:

Պատմությունն էլ աստվածաբանության իբրեւ Տեղիք կարող է ծառայել: Պատմություն ասելով ալստեղ պետք է հասկանանք նախ **Սրբազան Պատմությունը**, որ կարելուագույն եւ հիմնական Տեղիքն է աստվածաբանության: Որից հետո գալիս է **Եկեղեցական պատմությունը**, որ շատ կարելու է աստվածաբանների համար, որովհետեւ ներկայացնում է Եկեղեցու անցյալը, խնդիրները, առաքելական հաջորդությունը եւ Եկեղեցու հաղթանակները իր հակառակորդների վրա, դարից դար գնացող ավանդությունները եւ այլն, որոնք բոլորն էլ շատ պիտանի Տեղիք են աստվածաբանական ճշմարտությունները հիմնավորելու եւ հաստատելու նաեւ փորձառաբար:

Արտաքին պատմությունն էլ կարելու մի **Տեղիք** է աստվածաբանության համար: Օրինակ՝ Աղեքսանդրի պատմությունը եւ հունական մշակույթի գիտնալը անհրաժեշտ է ոչ միայն Եկեղեցական պատմության համար, այլ նաեւ աստվածաբանական տվյալների ավելի հստակ հասկացության համար: Նույն հավաստում կարելի է նաեւ հռոմեական կայսրության համար, մահմեդականության, Խաչակիրների եւ այլ նման շարժումների եւ դեպքերի պատմությանց համար, որոնք սերտորեն առնչված են քրիստոնեական կրոնի հետ:

ՇՆՈՐՀՔ

Ավարտած լինելով աստվածաբանության «Տեղիք»-ները, այժմ անցնում ենք բուն աստվածաբանության կամ աստվածաբանության «մասունք»-ներին: Բայց փոխանակ սկսելու Աստծուց, ինչպես ընդհանրապես սովորություն է, սկսելու ենք Աստծու **արգասիքներից**, որոնք են **Շնորհք** եւ **Ա.խորհուրդները**: Աստվածաբանության մեջ շնորհք են կոչվում Աստծու հոգեւոր եւ գերբնական պարգեւները, որոնք ձրիաբար են տրվում մարդկանց, Քրիստոսի շնորհիվ, մեր հավիտենական փրկության հասնելու համար:

Դրանք բաժանվում են բազմաթիվ տեսակների, սակայն գլխավորները երկուսն են.

ա.- **Ունակական կամ սրբարար Շնորհք.**- Սա այն գերբնական պարգեւն է, որը սրբացնում է հոգին եւ նրան ի վիճակի է դարձնում գերբնական գործեր կատարելու: Ուրեմն այն գերբնական կյանքի սկզբունքն է, որ մեզ աստվածային կյանքին հաջորդ լինելու կարողությամբ է օժտում:

բ.- **Գործնական.**- «Այն գերբնական պարգեւն է, որի շնորհիվ մարդու հոգին շարժման մեջ է դրվում գործելու համար բարին, ճանաչելու եւ կամենալու համար բարին»:

Անհրաժեշտ է Շնորհքը: Պեղագոս (ապրում էր Ե. դարու սկզբում) եւ իր հոգեւորդիները ասում էին, որ անհրաժեշտ չէ, մարդ իր բնական եւ անձնական կարողությամբ եւ առանց աստվածային շնորհքների օժանդակության, կարող է հասնել հավիտենական կյանքին, ասում էին: Իսկ բողոքական աղանդավորներ հակառակ ծայրահեղության երթալով ասում են, որ առանց շնորհների չենք կարող **որել** արդյունավոր այսինքն հավիտենական կյանքի արժանի գործ տեսնել: Իրարու հակառակ այս երկու սխալ տեսակետները հերքելու համար հառաջ ենք բերում հետեւյալ հավաստումները.

1.- Ստույգ է, որ մարդ կարող է, իր բնական կարողությամբ, ինչ-ինչ գերբնական ճշմարտությանց ճանաչողության հասնել: «Աներեւոյթք (Աստուծոյ) արարածովքս (ստեղծված բաներով) իմացեալ տեսանին, այսինքն ճշմարտություն նոր եւ աստուածութիւն» (Հռմ.Ա.20):

Սակայն նման բնական ճամբաներով, այսինքն բանականության լույսով, ձեռք բերված ճանաչումը մարդուն չի առաջնորդում դեպի փրկություն: Այլ մեր փրկության համար հարկավոր մի բարի գործ անելու համար անհրաժեշտ է աստվածային շնորհքը: «Զի՞նչ ունիս գոր ոչ իցէ առեալ (որը Աստծուց ստացված չէ), եթե առէր՝ զի՞ պարծիս իբրեւ զչառեալ»: Արդարեւ եթե մարդ կարողանար առանց աստվածային օժանդակության անել իր առաջադրածը, իրավունք ունենալու էր պարծենալու: Դարձեալ՝ «Աստուած է որ յաջողէ ի

մեզ զկամելն եւ զառնելն հաճութեան» (Փիլ.Բ.13): Քանի որ հավիտենական կյանքը **գերբնական** նպատակ է, հետեւաբար միջոցն էլ պետք է գերբնական լինի որ է ՇՆՈՐՀՔ:

2.- Անհավատն էլ կարող է բարոյական արժեք ունեցող մի բարի գործ կատարել հետեւաբար անհավատների բոլոր գործերն էլ անարժեք չեն: Սակայն նրանք գերբնական արժեք ունեցող գործեր չեն, բայց այդ բարի գործերը իրենց մեջ չունեն այն ուժն ու կարողությունը, որոնք մարդուն առաջնորդում են դեպի հավիտենական կյանքը:

3.- Մարդ, անկյալ բնության վիճակի մեջ, առանց աստվածային շնորհների չի կարող կատարել բոլոր պատվերները (Պեղագյանները ասում էին՝ կարող են): Առաքյալը ասում է. «Մինչ էաքն մարմնով, (մարմնավոր էինք, այսինքն քրիստոնյա չէինք եղել) կարիք մեղաց որ օրինօքն էինք, զօրանային յանդամս մեր, առ ի պտղաբերս առնելոյ զմեզ մահու» (Հռմ.Է.5): Այա ուրեմն առանց շնորհների մարդ չի կարող կատարել օրենքները, որովհետեւ եթե կարողանար, այդ նշանակում էր որ նա կարողանալու էր արդարանալ առանց շնորհների: Դրանից բացի, մեր անկյալ բնության մեջ, առանց աստվածային մասնավոր օժանդակության, այսինքն առանց շնորհներին, կարող չենք հաղթել ծանր փորձություններին: «Քեւ փրկեցայց ի փորձութենէ» (սաղմոս, ԺԷ 30): «Դարձուցէր զերեսս քո յինէն, եւ ես եղէ խռովեալ» (սաղմոս, ԼԶ): «Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն»: «Յաղօթս կացէք, զի մի մտանիցէք ի փորձութիւն» (Մատթ.ԻԶ 41): Մարդկային բնությունը թեւ մտքով բուժվում է շնորհների միջոցով, եւ եւ անկեղծորեն բարին է ցանկանում, սակայն մարմինը իր բնական կիրքերից չի բաժանվիր: Մենք մեր մտքով ու սրտով կարող ենք ցանկալ սրբության, սակայն մարմինը իր բնական պահանջներից **երբեք** չի հրաժարվում, եւ մեղքն ու փորձությունը ուրիշ բան չեն եթե ոչ մարմնի պահանջների տիրակալությունը մեր մեջ ընդդեմ մտքի ու կամքի պահանջներին: Բացի դրանից՝ թեւ Աստծու շնորհներով բավականաչափ լուսավորվում ենք մտքով, սակայն մարդկային էակի հատուկ մտքի սահմանափակվածությունից չենք ազատվում:

4.- Նույնիսկ արդարը չի կարող առանց Աստծու մասնավոր շնորհների օժանդակության, հեռու մնալ բոլոր մեղքերից, ոչ էլ կարող է մինչեւ վերջ հարատեւել, որովհետեւ հարատեւությունը Աստծու մեկ պարգեւն է: «Բազում ինչ յանցանեմք ամենեքեան» (Հկբ. Գ. 2): «Եթէ ասիցեմք եթէ մեղս ինչ մեք ոչ ունեմք, զանձինս խաբեմք, եւ ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ» (Ա. Հովհ. Ա. 8): «Թող մեզ զպարտիս մեր» յուրաքանչյուր մարդու աղոթքն է սա անխտիր:

5.- Առանց Ա. Հոգու լույսին, օժանդակության եւ ազդեցության մարդ կարող է հավատալ եւ ոչ էլ հարատեւել հավատքի մեջ: «Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց ձգեսցէ (քաշի) զնա» (Հովհ. Զ. 44): «Եւ այդ յԱստուծոյ է որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն ի Նա **հաւատալ**, այլ եւ նորա չարչարիլ» (Փիլ. Ա. 23): «Զի շնորհօք նորա էք փրկեալք է ձեռն հավատոցն, եւ այս ոչ ի մէնջ, այլ Աստուծոյ պարգեւ է» (Եփս. Բ. 8): «Զորոյ իսկ եբաց զսիրուն՝ անսալ խօսիցն Պաւղոսի» (Գործք ԺԳ 14): Ուրեմն վերելում ասվածներից հետեւում է թե շնորհքը անհրաժեշտ է փրկության համար, բոլորին, անհավատին, մեղավորին եւ արդարին՝ մնալու եւ հարատեւելու համար շնորհների մեջ:

Շնորհների մեջ երեք հատկանշական երեւոյթ կարող ենք մատնանշել, որոնք էական են շնորհների իսկությունը հասկանալու համար, դրանք են. Շնորհները՝ ա. Բացարձակապես ձրի են. բ. Անհրաժեշտ են բացարձակապես. գ. Բոլորի համար են:

Շնորհքը բացարձակապես **անհրաժեշտ** է, քանի որ մարդ չի կարող արդարանալ եւ չի կարող փրկվիլ իր անձնական գործերով, եւ ոչ իսկ կարող է հավատալ. «Եթէ ոչ Հայրն...ձգեսցէ զնա (քաշել, հրել)» (Հովհ. Զ. 44): Մարդ չի կարող աստվածահաճո մի գործ անել, եթե իր կամքը ավելի բարձր մի ուժից շարժման մեջ չդրվի: Մարդ իր անհատական ճիգերով չի կարող Աստուծո հետ հաղորդակցության մեջ մտնել, ոչ էլ ապահովել անհրաժեշտ սնունդը իր հոգեւոր կյանքին համար: Չի կարող մեղքից ազատվել իր որեւէ մեկ արարքով, հետեւաբար շնորհքը բացարձակ անհրաժեշտություն է:

Շնորհքը **ձրի** է, ինչպես բառին իմաստն էլ հայտնում է, նշանակում է, որ շնորհների տվչությունը հիմնված չէ որեւէ պայմանի կամ ուխտի վրա, որով այն տրված լինի Աստուծոց մարդուն, որպես կատարումը խոստումի կամ մի պարտավորության: Այն փոխարինություն չէ մարդկային մի արժանիքի, այլ ձրի մի պարգեւ է բխած Աստծու սիրուց: Աստծուն վայել է տալը, մարդուն անկ է ատանալը:

Շնորհքը **բոլորի** համար է. Եկեղեցու պես ընդհանրական է, վերապահված չէ այս կամ այն ցեղին, այս կամ այն դասակարգին: Փրկության շնորհքին պես, մյուս շնորհքներն էլ ընծայվում են բոլոր մարդկանց, հրավիրելով նրանց փրկության եւ օժանդակելով մարդկանց

նրանց բոլոր բարի գործերում: Թեև շնորհքը մատուցվում է բոլոր մարդկանց, բայց անդիմադրելի չէ, պարտադիր չէ: Մարդուն անկ է ստանալ այն իր ազատ կամքով կամ մերժել: Շնորհքի այս երրորդ հատկանիշը իր մեջ ընդգրկում է **ազատ կամքի** եւ **նախասահմանության** կարեւոր խնդիրները, որոնց անդրադառնում ենք համառոտ կերպով այս առիթով:

Թե մարդ ստեղծված է ազատ կամքով, աստվածաբանական առաջարկություն է. (Աստվածաբանության մեջ «առաջարկություն» կոչվում է այն ակտը, որով մի կրոնական ճշմարտություն, հստակ ու տրամաբանական մի նախադասության վերածված, մեջտեղ դրվում է քննության համար եւ վիճաբանության համար, որը ի վերջո պետք է կամ հաստատվի եւ կամ թե հերքվի, կամ պետք է ընդունվի եւ կամ պետք է մերժվի): Ուրիշ մի աստվածաբանական առաջարկություն է, որ Աստված կանխագետ է: Խնդիրն այն է թե ինչպես պետք է հաշտեցնել Աստծու կանխագիտությունը մարդու ազատ կամքին հետ, որովհետեւ առարկում է, որ եթե Աստված կանխագետ է, այսինքն նախապես իմանում է մեր անելիքները եւ լինելիքը, ինչպես կարող է մարդ ազատ կամք ունենալ:

Աստծու կանխագիտությունը իր ստորոգելին է, այսինքն իր բնության հատուկ մի բան է, ինչպես իր ամենագիտությունը: Աստված գիտե բոլոր ապագան, ներկան ու անցյալը: Աստված գիտե թե յուրաքանչյուր «ճամփա» դեպի ուր է առաջնորդում: Աստված գիտե եւ մարդկանց ասել է, որ «լայն ճամփան տանում է դեպի կորուստ» իսկ «նեղ ճամփան» դեպի «հավիտենական կյանք»: Յուրաքանչյուր մարդու **անկ** է իր ազատ կամքով ընտրել թե ո՞ր ճամփան պիտի մտնե: Աստված որոշապես գիտե թե որ մարդը նեղ եւ որ մարդը լայն ճամփան պիտի մտնե, բայց իր գիտենալը «չազդեր երբեք մարդու նախընտրության վրա»: Աստված գիտե պատահելիքը, որովհետեւ պիտի պատահի այդ, եւ ոչ թե պատահում է մի բան, որովհետեւ այդ իմանում է Աստված: Նրա կանխագիտությունը չի վճռում դեպքերի պատահիլը, այլ արդեն իսկ պատահելիքը նախատեսում է, նախագգուշացնում է, բայց մարդուն անկ է այդ ազդարարության անսալ կամ անտեսել այն: Աստուծո այս կանխագիտությունը պատճառ չէ պատահելիք կամ պատահած դեպքերին, որոնք հաճախ իր կամքին դեմ են: Աստուծո նախախնամությունը հաճախ բարիքներ առաջացնում է նման չարիքներից: Ամեն տեսակ չարիք կարող է պատահիլ մարդուն այս աշխարհում մարդու ազատության հետեւանքով, սակայն նրանք չեն կարող իր ծիրից շեղել Աստծու վերջնական նպատակը, զոր Ան ունի ստեղծագործության համար, չեն կարող արգելք լինել Աստծու հավիտենական ծրագրի իրագործման համար:

Աստծու կանխագիտությունը, հտեւաբար, չի եղծանում մարդու ազատ կամքը, որով Աստված օժտած է նրան, որովհետեւ, ի վերջո, մարդուց կախված է **բարին կամ չարն ընտրելը**: Ոչ էլ սա, այսինքն Աստծու **գիտենալը** թե մարդկանցից մի քանիսը չար ճամփան են ընտրելու, հակառակ է Աստծու բարության կամ արդարության, որ ուզում է որ բոլոր մարդիկ փրկվեն եւ ճշմարտության լույսին գան: Աստծու կանխագիտությունը երբեք չի նշանակում **նախասահմանություն**: Արդարեւ Աստված գիտե թե ովքեր արժանի են լինելու իր շնորհքներին, որոնք իրենց բանականությունը եւ ազատ կամքը շիտակ գործածելով պիտի ընդունին այդ շնորհները եւ նրանցով արդարանան եւ փրկվեն: Մյուս կողմից Աստված գիտե նաեւ թե ոմանք չկարողանալով կիրարկել իրենց բանականությունն ու ազատ կամքը, հեռու են մնալու Աստծուց եւ այսպես, իրենք իրենց նախասահմանելու են դատապարտության: Թեև Աստված նախատեսում է բոլոր պատահելիքները, սակայն դրանով, այսինքն իր նախատեսությամբ չի նախասահմանում մի քանիսին փրկության եւ ուրիշներին էլ դատապարտության: Ուստի տվյալների արժանիքների պատճառը եւ արդարացումը Աստծու կանխագիտությունը չէ, Աստված նախատեսում է ամեն ինչ, բայց չի նախասահմանում ամեն ինչ. Աստված նախասահմանում է այն բաները որոնք մեր կամքից չեն կախված, եւ կապ ունեն Աստծու հավիտենական եւ ընդհանուր ծրագրին հետ:

Արդարեւ Աստված գիտե ի հառաջագունե թե ովքե՞ր «կերպարանակից պիտի լինեն պատկերի Որդւոյ իւրոյ» (Հռմ. Ը. 29): Աստված այդպիսիների համար նախասահմանած է հավիտենական կյանքի եւ երկնային փառքի երջանկության: Ոմանց այսպես «նախասահմանումը» փրկության եւ ոմանց՝ կորուստի, աղիկամի եւ բացարձակ չէ, այլ հարաբերական եւ պայմանադրական է, նեղ դռնից մտնողը հավիտենական կյանքի արժանի է լինելու, իսկ լայն ճամփից քայլողը մատնվելու է կորուստի: Եւ այժմ մարդկանցից կախյալ պիտի լինի, եւ ոչ ոք պիտի կարող լինի վստահ լինել թե ինք մինչեւ վերջ շնորհների վիճակում մնալու՞ է թե ոչ, կամ նրանից դուրս է մնալու:

Ուրեմն այս երկու ճշմարտությունները, այսինքն շնորհների ընդհանրականությունը եւ մարդկանց հավիտենական կյանքի կամ կորուստի նախասահմանվելը հարաբերական են մարդու կամքին: Եթե շնորհքը անդիմադրելի լիներ, այն ժամանակ ուղիղ ճամփան մտնելու կոչերը, ուղիղ ճամփեն շեղողներին ուղղված սպառնալիքները իմաստ պիտի չունենային: Եթե շնորհքը հարկադիր եւ պարտադիր կերպով գործեր մարդու մեջ, այն ժամանակ պետք պիտի չլիներ շնորհք արծարծելու մասին եղած հորդորներին: Մարդ ինքնահոժար կամքով միայն հպատակվում է շնորհներին, հպատակվում է նրանց ու համակերպվում: Աստծու շնորհքը երբեք ինք իրեն չի բռնադատում: Մարդուն ազատությունը կամ ազատ ընտրությունը կազմում է նրա բարոյական արժեքը եւ իրական արժանիքը: Եթե մարդ այս ազատ ընտրության կարողություն չունենար մարդ իր գործերը բարոյական արժեքից զուրկ պիտի լինեին: Առանց ազատ այս կամքին աստվածային շնորհքը ոչ պիտի կարողանար վերացնել, ոչ պիտի լուսավորեր եւ ոչ էլ պիտի փրկեր մարդուն: Մարդու փրկությունը գլուխ է բերվում **նախ** շնորհիվ եւ **ապա** մարդու կողմից այդ շնորհքների ազատ ընդունելությամբ: Մարդու կամքը վճռող մի ազդակ է աստվածային շնորհների մարդու մեջ գործել կարողանալուն եւ պտղաբերելուն: Աստծու ամենակարողությունը հարգում է մարդու ազատությունը, որ հիմքն է բարոյական հասկացողության գոյության:

Փրկարար Շնորհների ներգործությունը.- Շնորհների տեսակները շատ են. սակայն մեծագույն եւ գերագույն շնորհը քրիստոնյա լինելու շնորհն է, այսինքն փրկության շնորհը: Մեր խոսքը լուրջ այս շնորհի ներգործության մասին է: Փրկարար շնորհի ներգործելու եղանակը հատուկ բրոցես է, որով ենթական ծնվում եւ աճում է քրիստոնեական կյանքում: Երեք վիճակներ կան այս բրոցեսի մեջ, որոնք երեք իրարու հարակից եւ հաջորդական ակտերից են բաղկանում: Դրանք են. **ՀՐԱՎԵՐ-ԿՈՉ-ԴԱՐՉ**, (վերստին) **ԾՆՈՒՆԴ-ԱՐԴԱՐԱՑՈՒՄ-ՍՐԲԱՑՈՒՄ**, **ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ-ՄԻՈՒԹՅՈՒՆ-ՓԱՌԱՎՈՐՈՒՄ**: Այս եռյակ վիճակները հիմնվում են Հռոմեացիների Թուղթի Ը. գլխի 30-րդ համարի վրա. «Եւ զորս յառաջագույնն հրաւիրեաց՝ զնոսին եւ **կոչեաց**. եւ զորս **կոչեացն**՝ զնոսին եւ **արդարացոյց**, եւ զորս **արդարացոյցն**՝ զնոսին եւ **փառավորաբար**»:

Հրավերը ինքնին ենթադրում է քարոզչություն, որ հիմքն է ու նախապայմանը քրիստոնեացման բրոցեսին: Քրիստոնեական ճշմարտությանց նախ իրազեկ եւ տեղյակ պետք է լինի մարդ դարձի գալուց առաջ: Սա **արտաքին** պայմանն է քրիստոնեացման այսինքն փրկության: Իսկ **կոչը ներքին** պայմանն է «կոչում եմ զգում» ասելը նշանակում է ինք իրեն ընդունակ տրամադրության մեջ զգալ մի աստվածային կանչի հտեւելու: Շնորհքի մի ներգործության համակերպիլն է այդ, եւ ընդունիլն է քարոզի մեջ եղած հրավերը: Շնորհաց այս ներգործությունը ներքին մարդու վրա, իր մեջ որոշ տրամադրություն է ստեղծում ընդունելու աստվածային հայտնությունը եւ ծնցնելով հավատքի, հույսի եւ սիրո շնորհքները: Այս կերպով տեղի է ունենում մարդու **դարձը**:

Դարձից հետո մարդու մեջ տեղի է ունենում մի հոգեւոր փոփոխություն: Կոչին անսալով եւ հավատքի շնորհներով լեցվելով մարդու մեղքն ու հանցանքները ներվում են ու ջնջվում, եւ այսպեսով մարդ **արդարանում** է. սա ժխտական մի վիճակ է. ինչ որ մի բան մարդուց **առնվում** է, այսինքն նրա մեղքը, որը միակ արգելքն է մարդու հավիտենական նպատակի իրագործման: Արգելքը մեջտեղից վերացվում է եւ ճամփա է բացվում ու տեղ է պատրաստվում մի դրական բրոցեսի համար, որ է **սրբացումը**. սրբացումը մի դրական վիճակ է: Մարդուն մի բան է տրվում որ է նոր մի կյանքի սաղմը: Այս երկուսը՝ մեղաց թողությամբ արդարացումը եւ սրբացումը իրարուց անբաժանելի գործողություններ են. մին հաջորդում է մյուսին անմիջականորեն: Մեղքերի այս թողությունը պարզապես մի ներում չէ, այլ **քավել** այսինքն մեղքի արմատական ջնջում: Բայց երբեք պետք չէ մոռանալ, որ մեղքի ջնջումով մեղանջելու հակումն էլ չի ջնջվում: Մեղանջելու հակումը կամ ցանկությունը մնում է մեր մեջ այնքան ժամանակ, որքան մենք մարմնավոր ենք. բայց այդ հակումը ինքնին մեղք չի համարվում մինչեւ որ գործի չվերածվի խորհրդով բանիվ կամ գործով, ուրիշ խոսքով որքան ժամանակ որ կամքը չի հտեւում այդ հակումին մարդ մեղք գործած չի լինում:

Իրական արդարացում-սրբացումից հետո մեղքի սկզբունքը եւ գործերը այսինքն խաթարված կամքը բուժվում է կամ մինչեւ իսկ բոլորովին վերանում է եւ նրա տեղ է դրվում վերածնյալ մի կամք, որը ցանկանում է միայն եւ միայն Աստծու կամքի կատարումը: Այս բոլորը տեղի է ունենում Աստծու եւ մարդու գործակցությամբ: Աստված մեզ, մեղավորներս, նախ արդար է հռչակում, Քրիստոսի շնորհիվ մեր մեղքերը քավելով, ապա լեցնելով մի սուրբ կյանքի սաղմով, որը տակավ առ տակավ աճելու է մեր մեջ, մեզ վերածելով «ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի»: Մարդուն դերը կայանում է լուրջ **ընդունելության** մեջ, այդ

ընդունելությունը պետք է լինի սիրահոծար կամքով եւ շարունակական հավատքով: Արդարացում-սրբացումից հետո եթե մարդ մեռնի ժառանգում է հավիտենական կյանքը:

Սակայն քանի որ զղջումով կյանքի մի նոր սկզբունք եւ մի սաղմ եւս հաղորդվում է մեզ, հտեւաբար այս նոր կյանքն էլ, ֆիզիկական կյանքին պես, ատակ է աճման: Ինչպես ֆիզիկական կյանքը սկզբնական շրջանում կարծես եռում է մարդուն մեջ, եւ մարդ ապրելու հաճույքն է վայելում, այնպես էլ այս նոր կյանքը սկզբում մեր մեջ ծնեցնում է բարի տրամադրություններ սուրբ նպատակներ, կամքի, հավատքի եւ սիրո գործունեություն, եւ արտահայտվում է այն երջանկության մեջ զոր մարդ զգում է բարիք գործելուն մեջ:

Ինչպես ֆիզիկական կյանքի աճումը եւ գործունեությունը տարբերվում է մարդուց մարդ, այնպես է նաեւ հոգեւոր կյանքի գործունեությունը: Այնպես որ Ս. Հոգու շնորհած ստացումով մարդու ստացած նոր եւ սուրբ կյանքի սաղմն էլ կարող է ավելի կամ նվազ մշակումի հառաջադիմության եւ մշակման ենթակա լինել: Բարի տրամադրությունները կյանքի եւ գործի վերածելով մարդ առավել աճում է հոգեւոր կյանքում: Իր այս աճման աստիճանից կախում ունի Աստծու առավել կամ նվազ մտերիմ հաղորդակցության մեջ ապրելը. այս կյանքը հավատքով, բարի գործերով եւ աղոթքով որչափ ավելի շատացնէ այնքան ավելի լուսավորվում է նրա միտքը ի հոգեւորս զորանում է կամքը դիմադրելու համար մեղքի հակումներին եւ սատանայի հարձակումներին. այնքան ավելի սերտանում է իր հաղորդակցությունը Աստծու հետ եւ մեջտեղ են գալիս առավել չափով «փառավորվելու» կարելիությունները: Այս մասին ավելի հանգամանորեն խոսվում է հոգեւոր աստվածաբանության մեջ:

Շնորհների այս կյանքը եթե աճի, ուրեմն եւ կարող է մեռնել, կամ մարվել, ուրիշ խոսքով մարդ ենթակա է նաեւ կորսնցնելու փրկարար այս շնորհները, հտեւաբար ովքեր որ միանգամ արդարացած եւ սրբացած էին կարող են վերստին լրջորեն ընկնել: Շնորհաց այս վիճակից կարող ենք ընկնել որեւէ ժամանակ. այս մասին բազմաթիվ ազդարարություններ կան Ս. Գրոց մեջ (Ա. Կորնթ. Զ. 9-10, Թ 27, Ժ 12, Հռոմ. ԺԱ 20, Հայտ. Գ 11, Հակբ. Ա 14-15, Բ Պետ. 20-21): Հետեւաբար ոչ ոք կարող է վստահ լինել իր փրկության մասին, ոչ էլ որեւէ մեկը կարող է գուշակել ստուգապես թե որքան ժամանակ ինքը կարող պիտի լինի հեռու մնալ մեղքերից եւ մինչեւ վերջ մնալ շնորհաց վիճակում: Տիրոջ պատվերը հտեւյալն է այս մասին. «Արթուն կացէք եւ աղօթս արարէք զի մի անկանիցիք ի փորձություն» (Մատթ. ԻԶ 41): Իսկ առաքյալը ասում է. «Այսուհետեւ որ համարիցի հաստատուն կա՛լ զգոյշ լիցի, գուցէ անկանիցի» (Ա.Կորնթ. Ժ 12):

ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Ա.

Խորհուրդների մասին ընդհանրապես

Եկեղեցին ունի մի շարք արարողություններ, որոնք ենթակային փոխանցում են մասնավոր շնորհներ. այդ արարողությունները կոչվում են Ս.Խորհուրդներ:

Խորհուրդ բառը բացի խորհիլ բայի գոյականը լինելուց, նշանակում է նաեւ զգալի բայց անհասկանալի մի բան: Օրինակ՝ բնության մեջ կյանքը իր զանազան տեսակներում (բուսային, կենդանական եւ մարդկային) տեսանիելի եւ զգալի է, բայց խորքում անհասկանալի է: Այս իմաստով քրիստոնեական այն վարդապետությունը որոնք թեւ իրական բայց անըմբռնելի են կոչվում են Խորհուրդ. օրինակ Մարդեղության Խորհուրդ, Ս. Երրորդության Խորհուրդ եւ այլն: Սակայն, այս բառը, իր այս վերջին իմաստով, ավելի գործածական դարձավ 7 մասնավոր արարողությանց համար, որոնց ենթարկվողը տիրանում էր մի նոր կարողության կամ մի նոր եւ ավելի բարձր ու սուրբ մի հոգեվիճակի, մեզի անտեսանելի եւ անըմբռնելի եղանակով:

Ուրիշ խոսքով, եւ քրիստոնեական Եկեղեցու հատուկ բառերով **վերածնունդի**, արդարացման եւ սրբագործման շնորհները հավատացյալին են տրվում այս Խորհուրդների միջոցով: Խորհուրդները մարդ արարածին եւ քրիստոնեական Եկեղեցու պես, տեսանելիի եւ անտեսանելիի, նյութի եւ հոգու, բնականի եւ զերբնականի հանդիպման կետ են: Ուրեմն Խորհուրդը կարող ենք սահմանել այսպես. «Աստվածային ծեսերը հաստատված Քրիստոսից եւ իր առաքյալներից, որոնք տեսանելի նշաններով եւ արարողությամբ կատարվում են եւ փոխանցում են Աստծու անտեսանելի շնորհները»: Պետք է շեշտել, որ Խորհուրդը չի **խորհրդանշում** միայն տրվելիք շնորհքը, այլ իրապես **փոխանցում** է այն: Մի թանձրացյալ

օրինակով. նրանք **աղբյուրներ** են որոնց **միջոցով** Աստծու շնորհները հոսում են հավատացյալների վրա:

Խորհուրդ մը Խորհուրդ լինելու համար անհրաժեշտ են երեք պայմաններ.

ա. Աստվածային ծագում պետք է ունենա.

բ. Արտաքին տեսանելի նշաններ պետք է ունենա.

գ. Աստվածային անտեսանելի մի շնորհք պետք է փոխանցե:

Առ հասարակ բոլոր պատմական Եկեղեցիները համաձայն են ընդունելու, որ բոլոր Խորհուրդներն էլ հաստատված են մեր Տիրոջ կողմից ուղղակի կերպով, կամ առաքյալներին հարահանգելով այդ մասին: Արդարեւ առաքյալները ամեն ինչ անում էին Հիսուսի անունով. «Այսպէս համարեցին զմեզ մարդիկ, իբրեւ զպաշտոնեայց Քրիստոսի եւ հազարապետս խորհրդոցն Աստուծոյ» (Ա. Կորնթ. Դ. 1): (Տես նաեւ Մատթ. ԻԸ. 19, Հովհ. Ի. 21-23 եւ այլն): Թեեւ որոշ արձանագրություն կա Ավետարանում, որ մեր ցեղը հաստատեց Մկրտության եւ Հաղորդության Խորհուրդները, սակայն նման մի բացորոշ արձանագրություն չկա մյուս Խորհուրդների ուղղակի Իր կողմից հաստատված լինելուն: Այսուհանդերձ ինչ որ ճշմարիտ է Մկրտության եւ Հաղորդության պարագային նմանողաբար ճշմարիտ է եւ մյուս Խորհուրդների համար: Ավետարանում մեր Տիրոջ բոլոր ասածներն ու արածները լրիվ չեն արձանագրված, շատ բան ավանդությանբ, այսինքն առաքելոց եւ անոնց հաջորդների միջոցով մեզի հասած են. ինչպես որ Մկրտության եւ Հաղորդության Խորհուրդները կատարելու հրահանգ առան, նույնպես հրաման ստացան Նրանից հաստատելու եւ կիրարկելու մյուս Խորհուրդները: Այս մասին ավելի հանգամանորեն կանդրադառնանք, երբ ամեն մի Խորհուրդի մասին առանձինն խոսվի:

Ինչպես որ Եկեղեցին թե տեսանելի եւ թե անտեսանելի է, եւ ինչպես որ մարդը բաղկացած է հոգուց եւ մարմնից, այնպես էլ ամեն մի Խորհուրդ պետք է ունենա արտաքին տեսանելի նշաններ: Արտաքին տեսանելի նշաններ ասելով հասկանում ենք արտաքին արարքները, ծեսերը եւ բառերը եւ նյութը, որոնք գործածվում են Խորհուրդի կատարողության ժամանակ:

Արտաքին նշանները թեեւ անհրաժեշտ են Խորհուրդի մեջ, սակայն դրանք չէ որ փոխանցում են շնորհքը, այլ նույնինքն Ս. Հոգին, որ այդ Խորհուրդների միջոցով փոխանցում է իր շնորհները: Խորհուրդները լոկ խորհրդանշաններ չեն, այլ երբ ուղիղ մտքով կատարվեն, անպատճառ փոխանցում են իրենց պարունակած շնորհքը:

Եկեղեցու Խորհուրդները 7 են. այսինքն՝ Մկրտություն, Դրոշմ, Հաղորդություն, Ապաշխարիություն, կարգ քահանայության, Պսակ եւ Վերջին Օծում:

Սրանցից մի քանիսը էական եւ հիմնական են բոլոր հավատացյալների համար, իսկ ուրիշներ կամավոր: Էականներից երկու կարեւորագույններն են Մկրտություն եւ Հաղորդություն եւ մյուս երկուսն են Դրոշմը եւ Ապաշխարությունը: Պսակ եւ ձեռնադրություն կամավոր են. իսկ Վերջին Օծումը մի շարք Եկեղեցիներում բոլորի համար անհրաժեշտ է նկատվում, իսկ ուրիշներում կամավոր, ինչպես է մեր պարագային:

Խորհուրդներից ոմանք կրկնելի են, իսկ ոմանք անկրկնելի: Անկրկնելի են Մկրտությունը, Դրոշմը եւ Ձեռնադրությունը: Կրկնելի են Ապաշխարանքը եւ Հաղորդությունը: Իսկ Պսակն ու Վերջին Օծումը ոմանց համար կրկնելի են, իսկ ուրիշների համար անկրկնելի: Պսակը մեզ համար կրկնելի է:

Այս Խորհուրդներից անկրկնելիները Մկրտություն, Դրոշմ եւ Ձեռնադրություն ոչ միայն փոխանցում են իրենց հատուկ եղող շնորհները այլ նաեւ ենթակային տալիս են մի «նկարագիր», որը անջնջելի է: Այնպես որ մինչեւ իս եթե աստվածային շնորհքը, որը տրված է խորհրդով, կորսվի, տրված «նկարագիրը» կամ կնիքը մնում է անջնջելի: Այնպես որ մի մկրտյալ հավիտյանս մկրտյալ է մնում, Նույնիսկ եթե քրիստոնեությունը ուրանա կամ այնքան ծանր մեղքերի մեջ ընկնի, որ դադարի քրիստոնյա լինելուց: Քահանան քահանա է մնում հավիտյանս նույնիսկ եթե նա կարգաթող լինի կամ Եկեղեցին նրան կարգազուրկ հռչակե: Երկու պարագայում էլ, թեեւ չի կարող կիրարկել քահանայական պաշտոնի իրավասությունները եւ չի կարող ստորագրել իբրեւ քահանա, բայց չի դադարի քահանա լինելուց: Այս իրողությունը հաստատվում է նրանով, որ երբ կարգաթող կամ կարգազուրկ քահանան վերստին արտոնվի քահանայագործելու, **կրկին չի ձեռնադրվիր**, այլ լոկ ապաշխարանքով նրան կշնորհվի արտոնություն շարունակելու իր քահանայագործությունը: Նույնն է պարագան ուրացող քրիստոնյայի համար, երբ վերադառնա նա կրկին չի մկրտվում, այլ լոկ ապաշխարանքով ետ է ընդունվում:

Որպեսզի մի Խորհուրդի կատարումը առաջադրված արդյունքը տա, երեք պայմաններ անհրաժեշտ են.

ա. խորհրդակատարությունը պետք է կատարվի Եկեղեցու կողմից տնօրինված արտաքին նշաններով, բառերով եւ արարողություններով: Սրանցից ոմանք, օրինակ՝ երգեցողությունները աղոթքները եւ այլն վերջում են ավելացել, կատարված Խորհուրդին ավելի փայլ եւ շքեղություն տալու համար: Նրանց զանցառությունը բնականաբար այս գեղջումները, եթե անհրաժեշտ է որ լինեն, պետք է կատարվեն զգուշությամբ եւ Եկեղեցու մի վարդապետի վավերացումով, ուրիշ խոսքով ամեն քահանա ինք իր գլխին, տեղի կամ անտեղի գեղջումներ պետք չէ անի:

Արտաքին նշաններ ասելով հասկանում ենք այն արարմունքները, ասմունքները եւ նյութի գործածումը, որոնք անհրաժեշտ են այդ Խորհուրդի կատարման համար, ինչպես նրա մեջ պարունակված շնորհների փոխանցման համար: Օրինակ՝ Մկրտության պարագայում երիցս ընկղմումը ջրի մեջ եւ Մկրտության բանաձեւի արտասանվելը կազմում են արտաքին նշանների էական տարրերը:

բ.- Մի Խորհուրդի առաջադրած նպատակի իրագործման երկրորդ պայմանը այն է որ Խորհուրդը պետք է կատարվի պատշաճ պաշտոնյայի ձեռքով, այսինքն օրինավորապես ձեռնադրված քահանային կամ եպիսկոպոսի միջոցով, որոնք կանոնական իրավասությունն ու հեղինակությունը ունենան այդ Խորհուրդը կատարելու: Բայց պետք է միշտ ի մտի ունենալ, որ իսկական Խորհուրդ կատարողը, այսինքն խորհրդի պարունակած շնորհի բաշխիչը քահանան կամ եպիսկոպոսը չեն, այլ Խորհուրդը հաստատողը, նույնինքն Հիսուս Քրիստոսը, որին փոխանորդաբար գործում է քահանան կամ եպիսկոպոսը: Քահանան անհրաժեշտ մի միջոց է, որի շնորհիվ աներեւույթ աստվածային զորությունը ներգործում է Խորհուրդների մեջ: Խորհրդակատար պաշտոնյայի դերը հստակորեն պարզաբանվում է Արձակման բանաձեւում. «Եւ ես, **կարգաւ քահանայական եւ հրամանաւ_աստուածային**, թէ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս **նովին բանին արձակեն զքեզ** յամենայն մասնակցութենէ մեղաց...յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Բացի սրանից խորհրդի վավերականությունը, ազդուությունը եւ արդյունավորությունը կախում չունի **պաշտոնակատարին** հավատքից կամ կատարելությունից բարոյական տեսակետից, որովետեւ նա միայն մի գործիք եւ միջոց է, որու շնորհիվ Քրիստոս տալիս է իր շնորհները: Խորհրդակատար քահանայի անարժանությունը վնասում է միայն իր անձին, բայց ոչ խորհրդին եւ ոչ էլ այդ Խորհուրդին ենթարկվողին: Պաշտոնյան Խորհուրդը կատարում է ոչ իր անունով եւ ոչ էլ իր անձնական հեղինակությամբ, այլ բոլորովին անկախաբար իր արժանիքներից կամ ապարժանիքներից, կատարում է Խորհուրդը լոկ իբրեւ ներկայացուցիչը Եկեղեցու, որը գործում է նրա միջոցով:

գ.- Երրորդ պայմանը, Ս. Խորհուրդների ազդեցության, ենթակայի պատրաստությունն է: Ստույգ է, որ Ս. Խորհուրդները իրենց ազդուությունը ստանում են աստվածային տնօրենությամբ հաստատված լինելու իրողությունից, եւ ստույգ է նույնպես, որ այդ աստվածային տնօրենությունը ի գորու է լինում միայն օրինավոր պաշտոնյայի կողմից եւ ըստ օրինի կատարված արարողության միջոցով, դրանով մեկտեղ, որպեսզի խորհուրդը իր նպատակին ծառայե, այսինքն իր փրկարար եւ շնորհաբեր դերը կատարե անոնց վրա որոնք ընդունում են այդ Խորհուրդները, սրանք, այսինքն խորհուրդը ընդունողները, պետք է պատրաստվեն խորհուրդը արժանավորապես ընդունելու համար: Եթե պատահի որ ենթական չի օգրտվում խորհուրդից առ հասարակ պատճառը ինքն է, որովհետեւ Ս. Խորհուրդը նմանվում է արեւի, որ իր լույսը սփռում է բոլոր նրանց վրա ովքեր իր լույսին մեջ են, իսկ ովքեր որ մնում են խավար տեղերում եւ դուրս չեն գալ լույսի մեջ, բնականաբար չեն կարող վայելել լույսի բարիքները: Բաց աստի, լույսը մի այնպիսի երեւույթ է որի մեջ եւ որի միջոցով մենք տեսնում ենք աշխարհի գեղեցկությունները. իսկ այն որ կույր է բնականաբար ոչ լույս է տեսնում եւ ոչ էլ լույսի մեջ եղած գեղեցկությունները: Նույնպես էլ Ս. Խորհուրդներով մատուցված շնորհները ներգործում եւ իրենց բարերար արդյունքը տալիս են միայն երբ կան նրանց ընդունելու ընդունակ անհատներ:

Ենթակայի պատրաստությունը ամենից առաջ արտահայտվում է նրա հավատքում, մեղքից հեռանալու ճիգում եւ աշխատանքում, Աստուծո օգնությունը աղերսելու մեջ հատկապես խնդրելով եւ ինք իրեն տրամադիր վիճակում դնելով այն շնորհքին համար, որը պարունակվում է այն խորհրդում որին ինք պատրաստվում է ենթարկվել:

Եթե ուզենանք մեկ խոսքով արտահայտել այս ենթակայական պատրաստությունը, որ իր մեջ ընդգրկի նաեւ երեխաներին, այդ մեկ խոսքը պիտի լինի **«կրավորական**

ընկալչություն»: Սա էական կեցվածք պետք է լինի թե մանուկների եւ թե հասուն տարիքի մարդկանց, որոնք այլեւս մեղքի անդունդին գիտակցությունը ունենում են եւ Աստուծոց ջերմեռանդորեն խնդրում են նրա օգնությունը:

Պետք է գիտնալ նաեւ, որ ինչպես խորհուրդների ազդուությունը կախում չունի պաշտոնակատար քահանայի բարոյական վիճակից, նույնպես էլ կախված չի ընդունող ենթակայի արժանիքից կամ ապարժանիքից: Օրինակ՝ Ս. Հաղորդության խորհուրդում հացի եւ գինու Քրիստոսի Մարմնի եւ Արյան փոխանցումը տեղի է ունենում անկախաբար պատարագչի կամ հաղորդվողի հավատքից եւ բարոյական վիճակից, պայմանով որ ան կատարվի կանոնական եւ ուղիղ եղանակով:

Սուրբ խորհուրդները ընդունելու համար մանուկներից եւ խելագարներից ոչ մեկ պատրաստություն չի ակնկալվում, որովհետեւ Եկեղեցու հավատքը նրանց համար բավարար է: Ուրիշների համար երկու տեսակ պատրաստություն կա. մին **արժանավորապես** եւ **օգտակարապես** ընդունելու համար, իսկ մյուսը **վավերական կերպով** ընդունելու համար: Ս. խորհուրդները արժանապես ընդունելու համար ենթակա Աստուծո շնորհաց մեջ պետք է լինի, այսինքն մահացու մեղքերի մեջ պետք չէ գտնվի: Իսկ եթե մեկը առանց գիտենալու մահացու մեղքի վիճակումն է եւ ինք իրենը ենթարկում է մի խորհուրդի, տվյալ խորհուրդի ընդունման համար անհրաժեշտ պատրաստությունը տեսնելուց եւ անկեղծ զղջում ունենալուց հետո կարող է օգտակարապես ընդունել այդ խորհուրդը: Իսկ վավերաբար ընդունելու համար անհրաժեշտ է ենթակայի **կամեցողությունը** եւ շիտակ **դիտավորությունը**:

Խորհուրդների թվի կապակցությամբ արժե հիշել, որ նրանց 7 թիվը համապատասխանում է մարդկային ֆիզիկական 7 պահանջներին: Մարդ բաղկացած է մարմնից եւ հոգուց. մարդ մարմնի հատուկ ինչ կարիքներ որ ունի, նրանց համապատասխանող հոգեկան պահանջներ էլ ունի: Ըստ մարմնի մարդ պետք է **ծնվի**, երկրորդ **աճունով գորանա**. երրորդ՝ **սնվի**. չորրորդ՝ երբ հիվանդանա, պետք է **բուժվի**. երբ մեռնի պետք է **հուղարկվի** եւ թաղվի. սրանցից բացի իր ընկերային կյանքում պետք է մարդկային ցեղի հաջորդականությունը շարունակվի երկրի վրա: Սրանց համապատասխան են 7 խորհուրդները իրենց հոգեւոր մարզում: Այսպես՝ հոգին վերածնվում է մկրտությամբ, Աստուծու շնորհների մեջ **աճում է եւ գորանում** Դրոշմով, **սնվում է** սուրբ Հաղորդությամբ. առողջանում եւ **բուժվում է** մեղքի հիվանդությունից Ապաշխարությամբ, **հուղարկվում է** Վերջին Օծումով, քահանայական կարգը հավատացյալներին հայթայթում է **հոգաբարձուներ եւ առաջնորդներ**. իսկ Պսակը ապահովում է Եկեղեցու անդամների **հաջորդականությունը եւ տեսականությունը**:

Խորհուրդների նյութն ու ձեւը.– Խորհուրդում էական են նրա **ձեւն** ու **նյութը**: Խորհուրդի **նյութն** էական արտաքին եւ զգալի իրը կամ արարողությունը, որը օգտագործվում է արարողության մեջ: Իսկ **ձեւը**՝ խոսքը կամ բանաձեւն է որը պաշտոնյան կցում է նյութին: Օրինակ՝ Մկրտության Խորհուրդի մեջ նյութը ջուրն է, իսկ ձեւը՝ երեխան ջրում ընկղմելու ժամանակ ասված խոսքն է: Խորհուրդների մեջ նյութը եւ ձեւը նույնն է համարյա բոլոր Եկեղեցիներում, իսկ արարողություններն ու աղոթքները տարբերվում են մեն մի Եկեղեցու մեջ: Յուրաքանչյուր խորհուրդի մեջ նյութն ու ձեւը որոշում ենք երբ նրանցից յուրաքանչյուրի մասին առանձին-առանձին գրենք:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Մկրտությունը այն խորհուրդն է, որով նա որ երիցս մխրձվում է ջրում «հանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» մաքրվում է բոլոր մեղքերից եւ վերստին ծնվում է հոգեպես: Մկրտությունը դուռն է, որով որեւէ անձ կարող է մտնել քրիստոնեական Եկեղեցուց ներս եւ հաղորդվել մյուս խորհուրդներին: Պատվաստ է վայրի ձիթենու վրա ընտանի ձիթենիով, ըստ առաքելական խոսքի: Քրիստոնեական Մկրտության խորհուրդը հաստատվեց երբ մեր Տերը համբարանելուց առաջ պատվիրեց իր աշակերտներին ասելով «գնացեք այսուհետեւ, աշակերտեցե՛ք զամենայն հեթանոսս, ...մկրտեցե՛ք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Մկրտության խորհուրդը Հին ուխտում պատկերացված է զանազան դեպքերով եւ հրեական սովորություններով, որոնց զխավորներն են թլպատություն, Հին Ուխտի հատուկ լրացումներ, Կարմիր ծովից անցքը եւ վերջապես Հովհաննես Մկրտչի կիրարկած

մկրտությունը: Նոր կտակարանի մեջ ան կոչվում է նաեւ **Կնիք**. «Տալ ետու կնիք (մկրտեցի) եւ տանն Ստեփանեայ»(Ա. Կորնթ .Ա. 16): Կոչվում է նաեւ **Ավազան**. «Զի զնա սրբեսցէ սրբութամբ աւազանին» (Եփս .Ե .26):

Աստվածաբանները զանազանում են երեք տեսակ մկրտություններ. **Ջուրի, Հուրի եւ Արյան**: Բուն խորհուրդը ջուրի մկրտություն է. իսկ երկրորդ մկրտությունը ընդունելու սիրո կրակով լեցուն բաղձանք ունենալն է. եթե մի մարդու համար անկարելի լինի ջուրի մկրտությունը ստանալ, լոկ այս գորավոր սիրո բաղձանքին մկրտությունը ընդունելի է Աստծու առաջ: Իսկ երրորդը՝ առանց ջուրի մկրտությունը ընդունած լինելու իր արյունը թափելն է Տիրոջ անունին եւ քրիստոնեական հավատքին համար: Այս վերջին երկուսը բառին իսկական առումով խորհուրդ չեն, բայց լեցնում են խորհուրդի տեղը, երբ անկարելի է զայն գործնականապես ընդունիլ:

Մկրտության նյութն է բնական ջուրը, լինի այդ գետի, լճի, ծովու, աղբյուրի, ջրհորի կամ անձրեւի: «Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ ոչ կարէ մտանել յարքայություն Աստուծոյ» (Հովհ.Գ.5):

Արարողությունն է երիցս **ընկղմումը** ջրում: Մենք եւ բոլոր Արեւելյան Եկեղեցիները այդպես ենք անում. այդպես էր անում նաեւ լատին Եկեղեցին մինչեւ ԺԳ դար, որից հետո նրանք սկսեցին մկրտությունը կատարել **հեղմամբ** կամ **սրկումով**:

Խորհուրդի ձեւն է մկրտության բանաձեւը. «(Այս անուն) ծառայս... մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Լատինները ասում են «Ես մկրտեմ զքեզ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Ուրեմն կարելորագույնն այն է, որ հանուն Ամենասուրբ Երրորդության պետք է կատարել մկրտությունը:

Մկրտության արդյունքը.- Մկրտությամբ նախ տրվում է սրբարար շնորհքը, որով սկզբնական եւ անձնական մեղքերից սրբվում է ենթական եւ ազատվում նրանց պատիժներից. ապա ընդունում է վերածնության շնորհքը, որով որդեգրվում է Աստծուց եւ լինում է Քրիստոսի ժառանգակիցը ու անգամ քրիստոնեական Եկեղեցուն: Այս շնորհքները մեզ իրավունք են տալիս ընդունելու Եկեղեցու մյուս բոլոր շնորհներն էլ: Մկրտությամբ ենթակային տրվում է մի **անջնջելի կնիք**, որով նա զանազանվում է ուրիշներից, որի համար այս խորհուրդը լինում է անկրկնելի: «Մկրտությամբ մարմնոյ ցանկությունը» եւ մարդկային այլ տկարությունները չեն ջնջվում, այլ մնում են ենթակայի մեջ: Ցանկությունը սակայն ինքնին մի մեղք չէ, բայց կարող է մեղքի առաջնորդել: Ինչպես որ վիշտն ու տառապանքը օգնում առաքինությունների տիրանալու, այնպես ալ ցանկությունը կարող է միջոց լինել կամքի եւ նկարագրի զորացման եթե ենթական փոխանակ ցանկության կողմը հակվելու Աստծու շնորհներին կառչի:

Մկրտության սովորական, այսինքն օրինական կամ կանոնական **պաշտոնյան** է եպիսկոպոսը կամ քահանան, իսկ շատ բացառիկ եւ արտասովոր պայմանների ներքեւ որեւէ մեկը կարող է մկրտությունը կատարել գործածելով խորհուրդին նյութը եւ ձեւը, այսինքն ջուրը եւ բանաձեւը: Այս տեսակ մկրտությունները ներելի են երբ ենթական մահվան վտանգի տակ է գտնվում եւ անկարելի է քահանա ապահովել: Նման պարագաների տակ եթե մկրտյալը վերապրի պետք է բերվի Եկեղեցի եւ խորհուրդի մնացյալ մասն էլ պետք է կատարվի իր վրա եւ ստանա Եկեղեցու վավերացումը:

Մկրտության կրնան ենթարկվիլ բոլոր մարդիկ անխտիր, որոնք հավատում են եւ ապաշխարում, որովհետեւ Ավետարանը ասում է. «Ով որ ջուրէ եւ հոգիէ չծնի չի կրնար Աստուծոյ արքայութիւն մտնել»: Ինչ որ նշանակում է, որ մկրտությունը մի անհրաժեշտ միջոց է բոլոր մարդկանց փրկության համար: Հետեւաբար այս խորհուրդը մերժելի չէ ոչ ոքի, ոչ իսկ մանուկներին կամ ցավագարներին: Այպես որ մանկամկրտությունը սովորական եւ բնականոն դարձավ գրեթե **բոլոր** քրիստոնյա ընտանիքների մեջ առաջին իսկ դարերից սկսյալ: Քանի որ սկզբնական մեղքը համամարդկային մի անեծք է, հետեւաբար դրանից ազատվելու բաղձանքը եւ անհրաժեշտությունն էլ համամարդկային է, հետեւաբար Եկեղեցին շատ իմաստուն եղանակով առաջին իսկ օրերից ոչ միայն արտոնեց, այլ եւ օրինադրեց մանուկների մկրտությունը, որպեսզի նրանք իրենց կանխագույն տարիքից մաքրվեն սկզբնական մեղքի աղետներից եւ ստանան, իրենց անմեղության մեջ, անհրաժեշտ շնորհքը պայքարելու մեղքի դեմ: Ավետարանից գիտենք, որ ամբողջ ընտանիքներ հավաքաբար մկրտվել են, որոնց մեջ բնականաբար կային նաեւ մատաղ մանուկներ (Ա. Կորնթ. Ա. 16. Գործք Ժ. ԺԶ. ԺԸ գլուխները):

Մանկամկրտության դեմ արտահայտվեցին բողոքականները հետեւյալ երկու առարկություններով.

ա. Մանուկները չունեն մկրտության համար անհրաժեշտ եղած ոչ գիտակցությունը եւ ոչ էլ հավատքը:

բ. Մանկամկրտությունը դեմ է մարդկային ազատ կամքին, որովհետեւ քրիստոնեությունը պետք է ազատաբար որդեգրվի, մինչ մանկան պարագային ուրիշներն են որոշում մանկան կրոնը: Սակայն, ըստ Եկեղեցու ուսուցման, մկրտող քահանային, ծնողներին եւ մանավանդ կնքահոր հավատքը բավական են մանկան ունենալիք հավատքին տեղը բռնելու: Բացի սրանից, ինչպես որ նրանք մանկան կամքից անկախաբար որոշում են նրա շատ ֆիզիքական ու մտավոր պահանջները եւ հոգ են տանում նրա դաստիարակությանը, այնպես էլ պարտական են մտածելու մանկան հեգեւոր կարիքների մասին: Ծնողները հայթայթում են մանկան սնունդը, զգեստները, առաջնորդում եւ դաստիարակում են նրան առանց կարեւորություն տալու մանկան կամքին, նույնպես, ի մտի ունենալով իրենց զավկին հավիտենական երջանկությունը հայթայթում են ինչ որ անհրաժեշտ է այդ հավիտենական բարիքը ստանալու իրենց մանկան համար:

ԴՐՈՇՄ

Դրոշմը մեր Եկեղեցու, ինչպես նաեւ Արեւելյան բոլոր Եկեղեցիներում կիրառվող սովորության համաձայն, հաջորդում է անմիջապես մկրտության: Դրոշմը այն խորհուրդն է, որով մկրտյալի անդամները Ս. Մյուռոնով օծվում են եւ նրա նոր ստացած հոգեւոր կյանքը զորանում է եւ Ս.Հոգու շնորհները տրվում են նրան Իրականում, Դրոշմը լրումն ու կատարումն է Մկրտության խորհուրդին, մի տեսակ արքայական կնիք, որ վավերացնում է եւ լրացնում է մկրտությունը: Մկրտությունը ծնունդ եւ մուտք է քրիստոնեական կյանքից ներս, իսկ Դրոշմը հայթայթումն է անհրաժեշտ շնորհները այդ նոր կյանքի պայքարը հաջողությամբ ի գլուխ հանելու համար:

Նոր Կտակարանի մեջ Դրոշմը կոչվում է նաեւ **ծեռնադրություն**, որ բոլորովին տարբեր է երեցների եւ Եկեղեցու պաշտոնյաների վրա կատարված ծեռնադրությունից: Օրինակ՝ Սամարիայում շատեր հավատում էին Փիլիպպոս սարկավագին, որ «աւետարանէր վասն արքայութանն Աստուծոյ եւ անվանն Յիսուսի Քրիստոսի, մկրտէին ամենեքեան արք եւ կանայք...: Իբրեւ լուան, որ յԵրուսաղեմ առաքէալքն էին...Առաքեցին առ նոսա զՊետրոս եւ զՅովհաննես որք իջեալ կացին յաղօթս ի վերայ նոցա, որպէսզի առցեն զՀոգի Սուրբ. զի ցայնժամ չեւ եւս էր եւ ոչ ի վերայ միոյ նոցա հասեալ, բայց միայն մկրտեալք էին յանուն Տեառն Յիսուսի: Յայնժամ **եղին զծեռս** ի վերայ նոցա, եւ առնուին զՀոգի Սուրբ» (Գործք Ը. 14-17). «Եւ ի **դնել** ի վերայ նոցա Պաւղոսի զծեռն՝ եկն Հոգին Սուրբ ի վերայ նոցա» (Գործք ԺԹ. 6): Կոչվում է նաեւ օծում եւ կնիք «Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս, եւ ՕԾ զմեզ Աստուած է, որ եւ կնքեացն զմեզ, եւ ետ զառիակատչեայ Հոգւոյն ի սիրտս մեր» (Բ. Կորնթ. Ա. 21-22): «Եւ դուք **օծութիւն** ունիք առ ի սրբոյն» (Ա. Հովի. Բ. 20): «Եւ օծութիւն զոր ընկալարուք ի նմանէ՝ բնակեցէ ի ձեզ» (Ա. Հովի. Բ. 27):

Պետք է ընդունել որ այս խորհուրդը իբրեւ **օծմամբ** կատարվող խորհուրդ հիշված չէ Նոր Կտակարանում, բայց կրարկված է օծմամբ առաջին դարերից սկսյալ:

Նոր Կտակարանում հիշված է ան ինչպես վերելում տեսանք, իբրեւ **ծեռնադրությամբ** կատարված մի խորհուրդ, որ բոլորովին տարբեր է մկրտության խորհուրդից, եւ ստուգապես կիրարկվում է իբր նրա լչացուցիչը: Առաքյալները, այսպես ասած, «դրոշմվեցին» Հոգեգալստյան օրը, որովհետեւ խորհուրդի նպատակն է ենթակային Ս. Հոգին տալ, եւ առաքյալները Ս. Հոգին ստացան Պենտեկոստեի օրը: Արդարեւ Գործք Առաքելոցի վերելում առաջ բերված հիշատակությունները ինքնին հաստատում են, որ առաքյալները իրենց **ծեռքը դնում էին մկրտվողների վրա**, որպեսզի նրանց փոխանցեն այնպիսի շնորհներ, որոնք տարբեր էին մկրտությամբ շնորհվածներից: Առաքյալները այսպես անելով բնականաբար գործադրում էին Տիրոջ մեկ հրահանգը եւ ոչ թե իրենց կողմից հաստատված մի կանոնադրություն: Սրանից, եթե ոչ ուղղակի, գեթ անուղղակի հետեւցնում ենք, որ այս խորհուրդն էլ Քրիստոսի կողմից հաստատված է: Սրա համաձայն հաստատվում է, որ Դրոշմի խորհուրդի առաքելական դարում կիրարկված ձեւն էր **ծեռնադրությամբ**, իսկ այժմու ձեւն է օծմամբ: Ինչն էլ եւ ինչ պարագաների տակ այս փոփոխությունը տեղի է ունեցել: Այս հարցումին կարելի է պատասխանել հետեւյալ կերպով:

Այս խորհուրդը, որ առաքելական շրջանում կատարվում էր ձեռնադրությամբ, ետքի ժամանակների մեջ կիրարկվեց օժանմբ: Ինչո՞ւ եւ ինչպէս տեղի ունեցավ այս փոփոխությունը, դժվար է ճշգրիտ մի պատասխան գտնել:

Այս խորհուրդի նյութն է, այսինքն արտաքին տեսանելի նշանը, խաչակնքել ընծայալի գործարաններն ու անդամները ս. Մյուռնոնով: Իսկ ձեւը կամ բանաձեւն է. «Իւղ անուշ յանուն Յիսուսի Քրիստոսի, հեղեալ ի վերայ քո կնիք երկնավոր պարգեւացն անապականության» եւ ապա «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի...» որին ընկերանում է մի ուրույն մաղթանք յուրաքանչյուր գործարանի համար:

Առաքելական դարում կիրառության մեջ եղող ձեռնադրությունը բոլորովին անհետացած չէ այս խորհուրդի միջից, որովհետեւ Ս. Մյուռնոնը ինքնին սրբագործվում է Ս. Լուսավորչի Աջով եւ կաթողիկոսի առնթերակա եպիսկոպոսների օրհնությամբ: Որով բոլոր հայ հավատացյալները ընդունում են, դրոշմի խորհրդի ընթացքում թե Ս. Լուսավորչի եւ թե Ամենայն Հայոց հայրապետի Աջի օրհնությունը:

Դրոշմի խորհրդի միջոցով փոխանցվում են Ս. Հոգու շնորհները, որոնք հշված են Եսայի ԺԱ գլխի 2-3 համարներում. «Եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստության եւ հանձարոյ, Հոգի խորհրդոյ եւ զօրութեան, Հոգի գիտութեան եւ աստուածապաշտության եւ Հոգի երկիւղի Աստուծոյ»: Իսկ Դրոշմի միջոցով ստացված հոգու պտուղները հիշված են Գաղատացվող թղթի Ե. գլխի 22 համարում. «Իսկ պտուղ Հոգվոյն այս է. Սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեղութիւն, ժուժկալութիւն»: Այս առաքիւնությունները եւ պտուղները երբ երեւան են գալիս եւ կիրարկվում են Դրոշմված ենթակայի մեջ, այն ժամանակ շինվում է քրիստոնեական նկարագիրը, որ Աստծու ստեղծագործությունների գլուխ գործոցն է: Այս առաքիւնությունները ենթակային օժտում են հարկ եղած զորությամբ ընդդէմ փորձությունների եւ դժվարությունների, որոնք պաշարում են քրիստոնյան մեղքի դէմ իր վարած պայքարի ընթացքում:

Ասվեց, որ Դրոշմի լրումն ու կատարումն է Մկրտության խորհրդի, այսինքն՝ Մկրտության խորհրդով դրված նոր կյանքում պարունակված կարելիությունների իրականացումը, զարգացումը, մշակումը եւ աճումն է: Արդ, քանի որ այսքան սերտ հարաբերություն գոյություն ունի երկու խորհրդների միջեւ, նրանց միմիանցից բաժանումը, ինչպէս է սովորությունը արեւմտյան Եկեղեցում, արդարացի հիմք չունի եւ հակառակ է Եկեղեցու սկզբնական սովորության: Եթե այս երկու խորհուրդները իրարուց բաժանողները փաստարկում են որ դրոշմը ընդունող ենթական գեթ գիտակից տարիքում պետք է լինի այն արժանապէս եւ օգտակարապէս ընդունելու համար, նրանց պատասխանում ենք թե ինչո՞ւ նույն փաստարկությունը չի կիրարկվում մկրտության համար, քանի որ արեւմտյան Եկեղեցին ընդունած է ու կիրարկում է մանկամկրտությունը:

Այս խորհուրդն էլ մկրտության պէս անկրկնելի է. միայն թե այն քրիստոնյաները որոնք փափաքում հայ Եկեղեցու անդամ լինել, եւ նախապէս չեն ընդունել այս խորհուրդը, մեր Եկեղեցում ընդունվելուց առաջ պետք է ենթարկվեն դրոշմի այս խորհրդին:

Իսկ դրոշմի պաշտոնյան ըստ լատին Եկեղեցու այժմու սովորության եպիսկոպոսն է. բայց ըստ մեզ եւ բոլոր արեւելյան Եկեղեցիների դրոշմի պաշտոնյան էլ նույն ինքն մկրտող քահանան է: Պետք է գիտենալ թե նույնն էր սովորությունը նաեւ լատին Եկեղեցում մինչեւ ԺԳ դար, որից հետո միայն փոխվեց ներկա ձեւին:

ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ս.Հաղորդությունը Քրիստոսի մարմնի եւ արյան խորհուրդն է, հացի եւ գինու ձեւով. Քրիստոսից հաստատված մեղքերի թողության եւ հավատացյալների հոգեւոր սնունդի համար: Այն խորհուրդն է ուր հացն ու գինին պատարագիչ քահանայի օրհնությամբ փոխարկվում են Քրիստոսի մարմնին եւ արյան, որը հավատացյալները ստանում են մեղքերի քավության եւ թողության համար եւ իբրեւ սնունդ հավիտենական կյանքի:

Իբրեւ քրիստոնեական Եկեղեցու գերազանց խորհուրդ այն նախապատկերված է Հին Ուխտում: Այդ պատկերացումներից գլխավորներն են.

ա. **Պասեքը.** -Երբ Իսրայելացիները գառնուկը կերան գերության վիճակից ազատության վիճակին անցնելու համար: Պասեքի գառնուկը նախաստվերն է գատկական գառնուկին, որ եղավ նույնինքն Քրիստոս:

բ. **Մանանան.** Այն կերակուրը որ երկնքից իջավ եւ կերակրեց իսրայելացիներին անապատում. Քրիստոս էլ կյանքի հացն էր որ երկնքից իջավ եւ շարունակ տալիս է ինք իրեան մեզ Ս. Հաղորդության միջոցով իբրեւ հոգու ճշմարիտ սնունդ:

գ. Մելքիսեդեկ թագավոր-քահանայի Աբրահամի մատուցած հաց ու գինին:

Սրանից բացի, նախքան այս խորհրդի գործանականապես հաստատվելը, սկզբից եւեթ հայտարարվեց եւ խոստացվեց մեր Տիրոջ կողմից, Իր քարոզությունների ընթացքում, որը երեւում է հատկապես Հովհաննու Ավետարանի Զ. գլխի 32-59 համարներում: «Հայրն իմ տայ ձեզ գհացն յերկնից զճշմարիտ: Զի հաց յԱստուծոյ է, որ իջանէ յերկնից եւ կեանս տայ աշխարհի...: Ես եմ հացն կենաց...եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի: Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, ունի կեանս յաւիտենականս... զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ յիս բնակեցոյ է եւ ես՝ ի նմա»: Սրանով է բացատրվում Ս. Հաղորդության խորհուրդի պատմության չգոյությունը Հովհաննու Ավետարանին մեջ, որովհետեւ այս Ավետարանը լրացնում է ինչ որ արդեն իր նախորդ ավետարաններում ասվել էր: Այստեղ ավետարանիչը բացատրում է Ս.Խորհուրդի իմաստը:

Ս.Խորհուրդի հաստատման պատմությունը Նոր Կտակարանում չորս տարբեր հեղինակների կողմից ներկայացվում է. Մատթ. ԻԶ. 26-28, Մարկ. ԺԴ. 22-24, Ղուկ. ԻԲ. 19-20 եւ Պողոս առաքյալի Ա. Կորնթ. ԺԱ. 23-25 կողմից:

Սրանից ամենահինը Ս. Պողոսի ներկայացուցածն է եւ ապա հաջորդում է Մարկոս Ավետարանիչը:

Ս.Հաղորդության նյութն է հաց ու գինի: Իսկ հաց ասելով պետք է հասկանալ ցորենի հաց եւ ոչ թե գարու, կորեկի եւ այլ տեսակի արմտիքների հացից: Այս հացը պետք է լինի **անխմոր**, այսինքն բաղարջ հաց: Լատինները եւ մենք անխմոր հաց ենք օգտագործում իսկ արեւելյան բոլոր մյուս եկեղեցիները **խմորյալ** հաց են կիրարկում: Անխմոր հացի գործածելը ավելի ուղիղ է եւ ավետարանական, որովհետեւ Հիսուսի կերած ընթրիքը Պասեքի ճաշ էր եւ ըստ աստվածաշնչական օրենքի Պասեքին միայն բաղարջ հաց գործածելը թույլատրվում էր: Սրանից բացի անխմոր հացը միշտ մաքուր եւ անարատ հոգու խորհրդանշանն է:

Իսկ գինին պետք է լինի խաղողից պատրաստված գինի եւ ոչ թե արվեստական որեւէ ընպելի: Մյուս բոլոր եկեղեցիները գինում ջուր էլ են խառնում, մենք ոչ: Մենք գործածում ենք զուտ անխառն եւ կարմիր գինի: Թեեւ այս խորհրդի նյութը երկուսն է՝ բայց իմաստը մեկ է, եւ հետեւաբար ներելի չէ միայն մեկ տեսակով, այսինքն գինով առանձինն կամ հացով առանձինն պատարագ մատուցանել:

Իսկ Ս. Հաղորդության **ծեւն** է Տերունական խոսքը զոր Քրիստոս արտասանեց այս խրհուրդը հաստատելիս: «Առէք կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»: Իսկ գինու վրա ասաց. «Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ վասն ձեր եւ բազմաց հեղանի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

Նվիրագործության պահի եւ ձեւի շուրջ տարակարծություն կա Արեւելյան եւ Արեւմտյան եկեղեցիների միջեւ: Արեւելյանները ասում են թե հացն ու գինին նվիրագործվում են Ս.Հոգու ոգեկոչումով որը տեղի է ունենում «Որդի Աստուծոյ» շարականի երգեցողության ժամանակ: Նվիրագործման հաջորդում է «Հոգի Աստուծոյ» շարականը: Իսկ Արեւմտյանները ասում են թե սրբագործումը տեղի ունենում «Առէք կերէք» խոսքերը ասելու ժամանակ:

Ս.Խորհուրդի պաշտոնյան է եպիսկոպոսը կամ քահանան, որոնց ձեռքով իրականում Քրիստոս ինքն է որ մատչի եւ մատուցանում է:

Ս.Հաղորդության արգասիքն է քավություն եւ թողություն մեղքերի, կազդուրում հոգիների եւ նրանց Աստծու շնորհների մեջ հաստատելը: Արժանապես եւ ուժգին փափաքով հաղորդվողների մոտ նվաճում է նաեւ ցանկության կրակը: Այնքան անհրաժեշտ է այս խորհուրդի ընդունելությունը հավիտենական կյանքի տիրացման համար, որ մեր Տերը ասաց. «Եթե ոչ կերիջիք զմարմին Որդւոյ Մարդոյ եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիցիք կեանս յանձինս» (Հովհ. Զ. 54): Այս պատվիրանը պարտադրում է, որ ամեն մարդ Ս. Հաղորդության մոտենա: Մեր փրկիչը թեեւ շեշտեց անհրաժեշտությունը Ս. Հաղորդություն առնելու, բայց որոշ մի սահման չդրեց թե որչափ պետք է հաղորդվի հավատացյալը: Եկեղեցին սակայն սահմանած է, որ առնվազն Զատիկի եւ Ծնունդի շրջանին պետք է հաղորդվին հավատացյալները. դրանից բացի ազատ են որչափ ուզեն այնքան հաճախ կրնան հաղորդվել:

«Այս է մարմին իմ...Այս է արին իմ» բառերը այլաբանական իմաստ չունին, ոչ էլ է բայը նշանակում է «**ներկայացնում է**» այլ այս խոսքերը պետք է առնել իրենց բնական եւ այստեղ գրված քերականական իմաստով: Մեր Տերը այլաբանորեն չէր խոսում: Դրանից բացի ս. Պողոս (Ա. Կորնթ. ԺԱ. 27) հստակորեն զանազանություն է դնում սրբագործված հացի եւ սովորական հացի միջեւ: Եկեղեցու հայրապետներից մեկն ասում է. «Այդ տեսնված հացը հաց չէ, մինչեւ իսկ եթե համն էլ հացի համ է, այլ Քրիստոսի մարմինն է»:

Փոխարկում.- Հացին ու գինու Քրիստոսի մարմնի եւ արյան վերածվելը մենք **փոխարկում** բառով ենք բացատրում, իսկ լատիներերը **գոյացափոխություն** բառով, Արեւելյան եկեղեցիները առհասարակ այս վարդապետության մանրամասնության մեջ չեն իջած, այն միշտ պահած են անհասանելիի եւ խորհուրդի ոլորտների մեջ: Իսկ լատին եկեղեցին իջած է նրա «գիտական» եւ փիլիսոփայական մանրամասնության մեջ: Արեւելյան եկեղեցու հասկացողությամբ Ս. Հոգին իջնում է կատարում է այս փոխարկումը մեզ անըմբռնելի մի եղանակով: Փոխարկումից հետո հացն ու գինին այլեւս «տիպարները» չեն Քրիստոսի մարմնին եւ արյան, այլ նրա իսկական մարմինը եւ արյունը, ընդ տեսակոք հացի եւ գինու: Փոխարկման **կերպը** մեզ համար միշտ «խորհուրդ խորին եւ անհաս» պիտի մնան: Լատին եկեղեցին ասում է որ հացի եւ գինու **գոյացությունը** փոխվում է, բայց նրանց պատահական հատկությունները, այսինքն գույնը, համը եւ այլն մնում են նույնը:

Մեր եկեղեցու հասկացողությամբ սրբագործված հացի եւ գինու մեջ Քրիստոս ներկա է որ խորհրդանշական եւ ոչ էլ պատկերավոր կերպով, այլ ճշմարտապես, այնպես որ հացի եւ գինու սրբագործումից հետո, նրանք փոխվում են, վերածվում են, եւ այսպես ասած այլակերպվում են եւ դառնում են իսկական Մարմին եւ Արյուն Քրիստոսի: Հետեւաբար խորքին մեջ մեծ տարբերություն չկա Արեւելյան եւ Արեւմտյան եկեղեցիների հասկացողության մեջ հացի եւ գինու փոխարկման վարդապետության մասին, վասնզի երկուսն էլ ընդունում են, որ հացն ու գինին վերածվում են Քրիստոսի Մարմնին եւ Արյան, եւ լոկ նրանց արտաքին ձեւերը մնում են նույնը: Տարբերությունը բառերի ընտրությունը բառերի ընտրությանց եւ բացատրելու ձեւերի մեջ է կայանում:

Ս. Հաղորդությունը իբրեւ խորհուրդ.- Ս.Հաղորդությունը գատորոշվում է մյուս խորհուրդներից ոչ միայն իր գերազանց հանգամանքով այլ նաեւ ու մանավանդ նրա **խորհուրդ եւ պատարագ** լինելու մասնահատկությամբ:

Իբրեւ խորհուրդ ունի այլեւայլ անուններ, որոնք մասնավորում են նրա զանազան հատկանիշները: Այդպես է որ այն կոչվում է «**Տերունական Ընթրիք**», որը ակնարկություն է նրա ծագման եւ հաստատման ժամանակ մեր Տիրոջ գործածած արարմունքներին. «զոհացաւ» եւ «օրհնեաց»: **Մարմին Տերունական եւ Արյուն փրկչական**, ակնարկելով Տիրոջ Մարմնի եւ Արյան իրական ներկայության այս խորհուրդում: **Հաղորդություն** ակնարկելով այս խորհուրդի նպատակին: Իսկ իբրեւ ողջակեզ այն կոչվում է **Պատարագ, Ջոհ**, որոնց կցվում են զանազան անուններ, օրինակ **խորհրդական, անարյուն, անմահ** եւ այլն եւ այլն: Սրանք հատկանշում են Ջոհի իսկությունը **Սուրբ, բանավոր** եւ այլն:

Իբրեւ խորհուրդ Ս.Հաղորդությունը պարունակում է այն երեք հիմնական տարրերը, որ խորհուրդը պետք է ունենա. այսինքն՝ ա. Արտաքին զգալի նշաններ եւ արարողություն.

բ. Պաշտոնյա.

գ. Շնորհք:

Ինչպես ասացինք նրա զգալի նյութերն են հացն ու գինին, իսկ արարողությունը՝ օրհնություն, բեկանում եւ բաշխում: Նրանք ովքեր խմորված հաց են օգտագործում, փաստարկում են, որ այն հացը որը մեր Տերը գործածեց Վերջին Ընթրիքի ժամանակ խմորված հաց էր, որովհետեւ անխմոր հացի գործածությունը սկսվում էր հաջորդ երեկոյան միայն, այսինքն Պասեքի նախօրյակի երեկոյան: Իսկ բաժակում ջուր խառնելը արդարացնում են խաչելության ժամանակ Տիրոջ կողմից «ջուր եւ արյուն» հոսելուց (Հովհ. ԺԹ. 34):

Հացի եւ գինու սրբագործման համար անհրաժեշտ է, որ ս. Պատարագի բոլոր աղոթքները, հատկապես ծածուկ ասվելիքները, ասվեն լրիվ: Բայց էականները ամբողջ այս աղոթքների միջից երկուսն են. նախ տերունական խոսքերը. «Առէք, կերէք» եւ ապա Հոր Աստծու ուղղված այն աղոթքը որով խնդրվում է «զհացս զայս եւ զբաժակս զայս օհնեալ մարմին ճշմարտապէս եւ արին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի փոխարկելով Հոգւով քով Սրբով»: Սրանցով, այսինքն Տերունական խոսքերի արտասանությունից եւ սրբագործումից հետո հացը վերածվում է Քրիստոսի Մարմնին եւ գինին՝ Քրիստոսի Արյան, Ս. Հոգու զորությամբ եւ ներգործությունով, քահանայական

օրհնության միջոցով: Ս. Պատարագի մնացյալ մասը մի կերպ պատրաստությունն են Ս. Խորհրդի այս էական մասին՝ սրբագործման:

Վերելում ասվածներից կարելի է մի շարք գործնական հետեւություններ անել.

ա. Հացն ու գինին միանգամ սրբագործվելուց հետո մնում են մշտապես սրբագործված, ուրիշ խոսքով Տիրոջ իրական ներկայությունը այս սուրբ տարրերի մեջ մնում է նաեւ պատարագից վերջ եւ հետեւաբար կարելի է սրբագործված հացը, նվիրագործված գինու մեջ թաթխելուց հետո պահել եւ այն գործածել իբրեւ հաղորդություն հիվանդների կամ որեւէ ուրիշ ստիպողական պարագայի:

բ. Քանի որ սրբագործված եւ պահած Ս. Հաղորդությունում պարունակվում է մեր Տերը **խորհրդաբար**, այսինքն իրական բայց մեզ համար անըմբռնելի եղանակով, եւ քանի որ մեր բոլոր ս. Սեղանների վրա առհասարակ կամ եկեղեցիներում, գտնվում է այս ս. Հաղորդությունը, հետեւաբար նրա ներկայությանը ճիշտ այն վերաբերմունքը պետք է ունենանք ինչ որ պիտի ունենայինք նույնինքն մեր Տիրոջ՝ Քրիստոսի ներկայությամբ:

գ. Սրբագործված նշխարի ամեն մեկ մասնիկը, հոգ չէ թե որքան աննշան կամ փոքր լինի այդ իր մեջ բովանդակում է Տիրոջ իրական ներկայությունը **լման եւ ամբողջական ձեւով**, նման բեկանված հայելու կտորներուն, որոնք ամբողջական կերպով ցույցնում են իրենց մեջ ցույցող մարմինները: Հետեւաբար ամենամեծ հարգանք եւ երկյուղածություն պետք է ցույց տալ ս. Հաղորդության նույնիսկ ամենափոքր փշրանքների նկատմամբ:

դ. Քանի որ սրբագործված հացն ու գինին տրվում են իբրեւ սնունդ հոգիի, ուրեմն այն անհրաժեշտ է բոլոր քրիստոնյաներին անխտիր, մեղավորին եւ արդարին, մեծին ու փոքրին: Հետեւաբար պետք չէ նրանից զրկել փոքրերին ինչպես անում է Արեւմտյան Եկեղեցին: Քանի որ ս. Հաղորդության ազդեցությունը կախում չունի մեր հավատքեն այն կարելի է տալ նաեւ մանուկներին առանց որեւէ անպատեհության. «Թոյլ տուէք մանկտոյն գալ առ իս եւ մի արգելուք զնոսա... զի այդպիսեացդ է արքայություն Աստուծոյ»: Ինչ պատճառաբանությամբ արտօնվում է մանկամկրտությունը, նույն պատճառաբանությամբ էլ պետք է թույլատրվի մանկահաղորդությունը:

Լատին Եկեղեցին, հավանաբար զուտ գործնական եւ առողջապահական նկատառումներով հավատացյալներին հաղորդում է լոկ **մեկ տեսակով**, այսինքն միայն հացով, գինին վերապահելով քահանաներին: Նորածեւություն է այս որին չեն հետեւիր Արեւելյան բոլոր Եկեղեցիները անխտիր, որոնք **երկու տեսակով** են հաղորդում, այսինքն հացով ու գինով, բոլոր հավատացյալներին էլ: «Արժեք ի սմանէ **ամենեքին**», - ասում է մեր Տերը:

Ս. Հաղորդությամբ փոխանցված շնորհքը ոչ միայն «քաւութիւն եւ թողութիւն մեղաց» է, այլ նաեւ «հաղորդութիւն» այսինքն միացում Տիրոջ հետ: Ուրիշ խոսքով ինչ որ ըրավ Քրիստոս խաչին վրա մարդկանց փրկության համար, մեր տրամադրության տակն է դրվում ս. Հաղորդության միջոցով: Մեր հոգեւոր կյանքը զորանում է եւ էլ ավելի մշակվում: Եթե հաղորդվողը չափահաս եւ գիտակից տարիքումն է գտնվում պետք է ինք իրեն պատրաստի ապաշխարանքով եւ խոստովանանքի միջոցով արձակում ստանա, որպեսզի առաքյալի սպառնալիքը չիրականանա իր վրա. «Այսուհետեւ որ ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ պարտական եղիցի մարմնոյ եւ արեան Տեառն: Փորձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ» (Ա. Կորնթ. ԺԱ. 27-29): Կամավոր անտարբերություն դեպի ս. Հաղորդություն կամ անտարբերություն նրա նկատմամբ մեզ զրկում են այն երանությունից որ ս. Հաղորդությունը տալիս է բոլոր արժանավոր հաղորդվողներին: Բոլոր հավատացյալները պետք է ընդունեն ս. Հաղորդությունը զգուշավոր պատրաստությունից հետո, որովհետեւ նրա պարունակած շնորհը բացարձակ մի անհրաժեշտություն է փրկության համար:

Ս. Հաղորդությունը իբրեւ պատարագ. - Ինչպես ասացինք ս. Հաղորդությունը ոչ միայն մի խորհուրդ է այլ նաեւ մի քավչարար ողջակեզ, որ մատուցվում է Աստծուն ողջերի եւ մեռածների համար: Իբրեւ ողջակեզ ան շարունակությունն է եւ կիրարկումը Գողգոթայի ողջակեզին, ուր մեր Փրկիչը իբրեւ Քահանա եւ Զոհ մատուցանում է իր Մարմինը, Արյունը Աստծուն գինու եւ հացի ձեւերի տակ: Այն բառերը որոնք մեր Տերը գործածեց Վերջին Ընթրիքի ժամանակ. «Մարմին իմ...որ բաշխի, Արիւն իմ որ հեղանի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց», ինքնին բացատրում է ս. Պատարագի մի գոհագործություն լինելու իրողությունը: Սրանից բացի ս. Խորհրդի կատարման համար գործածված տեղը «**սեղան**»-ը, գործածված բառերը «Մարմին եւ Արիւն», «ուտել», «բաշխել» գոհի համար կիրարկված վայր եւ եզրեր են:

Արդարեւ, ս. Պատարագ մատուցվում է ոչ միայն «ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց կենդանաց եւ մեռելոց», այլ նաեւ ի հիշատակ Քրիստոսի խաչի վրա մահանալուն, եւ իբրեւ այդ, ներկայացումն է Գողգոթայի պատարագին: «Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս եւ զբաժակս ընպիցէք, զմահն Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ Նա» (Ա. Կորնթ. Ա. 26): Որպէսզի շփոթութեան եւ սխալ հասկացողութեան տեղի չտրվի, կրկնում ենք, որ ս. Պատարագը ոչ միայն ներկայացումն է մեր Տիրոջ մահվան, այլ նաեւ իրական մի պատարագ, որի մեջ մատուցանողը եւ մատչողը նույնինքն մեր Տերն է, թե իսկ ս. Պատարագը մատուցվի մի քահանայի ձեռքով: Այնպէս որ խոսքին եւ նպատակին մեջ Գողգոթայի եւ մեր եկեղեցիների սեղանների վրա մատուցված պատարագները մեկ են եւ նույնը:

Այն ժամանակ ո՞ր եւ ի՞նչ բաների մեջ է կայանում տարբերությունը խաչի եւ մեր սուրբ սեղանների վրա մատուցված պատարագների միջեւ: Նույնությունը կամ նմանությունը կայանում է Զոհի, Մատուցանողի եւ Արարչի մեջ: Իսկ տարբերությունը կայանում է ձեւին, նպատակին եւ այլ տաղական պարագաների մեջ: Տիրոջ մահը մեկ անգամ միայն պատահեցավ եւ չի կարող կրկնվել: Խաչի մահվամբ մեր Տերը մարդկության փրկությունը ի գլուխ հանեց **ընդհանրապէս**, մարդկությունը հաշտեցնելով Աստծու հետ: Ս. Հաղորդութեան նպատակն է անհատը հաղորդ դարձնել այդ խաչի մահվամբ մարդկության համար տրամադրելի եղած բարիքներին: Գողգոթայի վրա մեր Տերը իր մարմնավոր կյանքը մատուց արյունոտ պատարագումով. իսկ ս. Հաղորդութեան մեջ Ան ինք իրեն պատարագում է պատարագի քահանայի միջոցով, անարյուն եւ խորհրդական կերպով:

Որեւէ պատարագ իր մեջ ընդգրկում է երեք տարր.

ա. Մի քահանա

բ. Մի զոհ

գ. Մի զոհագործություն, որ կատարվում է զոհի մահով կամ նրա ողջակիզումով:

Ս. Պատարագի պարագայում այս երեքն էլ ներկա են: Միայն քահանան կարող է պատարագ մատուցանել: Հացն ու գինին ներկայացնում են զոհը. իսկ հացին բեկանվիլը եւ ս. Տարրերի սրբագործումից հետո բաշխվելը եւ ուտվելը նույնինքն զոհագործությունն է:

Ս. Հաղորդութեան խորհուրդը երեք տեսակի պատարագ է.

ա. Քավչարար պատարագ.

բ. Գոհության պատարագ.

գ. Միջնորդական պատարագ:

Ինչպէս ակնարկեցինք, խաչի պատարագի նպատակն էր հաշտեցնել մարդը Աստծու հետ, քավելով մարդկանց մեղքերը: Ս. Հաղորդութեան պատարագն էլ մատուցվում է նույն նպատակով, միայն թե, մինչ խաչի պատարագը եղած էր **բոլոր մարդկանց** համար ընդհանրապէս, Ս. Հաղորդութեան պատարագը մատուցվում է մասնավոր անհատների համար, որով Քրիստոսի Գողգոթայի պատարագով մարդկության համար տրամադրելի բարիքներին հաղորդ լինում են նրանք, ում համար մատուցվում է ս. Պատարագը, նրանք կենդանի թե մեռյալ լինեն:

Իսկ իբրեւ զոհության պատարագ այս Ս. խորհուրդը գերազանցապէս աստվածային պաշտամունք է, որով Աստծուն փառք եւ գոհություն ենք մատուցում Իր բարության, Իր մարդասիրության եւ գթության համար, մատուցանելով իրեն նույն ինք Քրիստոսին իբրեւ մեր երախտագիտության արժանի մի արտահայտություն:

Իսկ իբրեւ միջնորդական զոհ ս. Պատարագը մատուցանում ենք հատկապէս ննջեցյալների համար:

ԱՊԱՇՆԱՐԱՆՔ

Ապաշխարանքը Քրիստոսից հաստատված մի խորհուրդ է որի միջոցով մկրտությունից գետո մեղք գործած անձը թողություն է գտնում խոստովանանքով, անկեղծ զղջումով եւ մի քահանայից արձակում ստանալով: Փրկութեան համար անհրաժեշտ մի խորհուրդ է սա: Նկատի ունենալով մարդկային բնութեան տկարությունը մեր Տերը հաստատեց ապաշխարության խորհուրդը, որպէսզի մկրտութեամբ փրկվածները եթե դժբախտություն ունենային կորսնցնելու աստվածային շնորհը նորանոր մեղքեր գործելով, կարենան վերստին մաքրվիլ իրենց մեղքերից եւ նորից կապվեն Աստծուն իբրեւ Նրա որդեգրյալները:

Մեր Տերը հաստատեց այս խորհուրդը թե ինք ենթարկվելով նրան եւ թե ուսուցանելով նրա մասին ու հրահանգելով զայն: Մկրտությունից հետո 40 օրյա պահեցողություն անելով ինքիրեն ապաշխարության խորհուրդին ենթարկեց մարդկության համար: Հիսուս ապաշխարության մասին շատ բան սովորեցրեց սկսյալ Անառակ Որդու առակից մինչեւ Իր բացահայտ խոսքերը. «Ապաշխարեցէք եւ հավատացէք յԱվետարանն» (Մարկ. Ա. 15): «Եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքին նոյնպէս կորնչիջիք» (Ղուկ. ԺԳ. 3): Իսկ ապաշխարանքի խորհուրդը պաշտոնապէս հաստատած եղավ երբ աշակերտներին մեղքերի թողություն տալու իշխանությամբ օժտեց: «Որպէս առաքեաց զիս Հայր իմ, եւ ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրեւ ասաց, փչեաց ի նոսա եւ ասէ. «Առէք Հոգի Սուրբ. Եթէ ունէք թողուցուք զմեզս, թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք կալեալ լիցի» (Հովհ. Ի. 21-23): Այս մեջբերումից հստակ երեւում է, որ Քրիստոս իր առաքյալներին մեղքերի թողություն տալու իշխանություն տվեց, եւ առաքյալներն էլ այդ իշխանությունը փոխանցեցին իրենց հաջորդներին:

Առ հասարակ բոլոր մեղքերը կարող են ներվել բացի «Ս. Հոգու դէմ եղած հայիտյունից» եւ «մահու չափ» կոչված մեղքերից: «Ամենայն մեղք եւ հայիտյունիւնք թողցին մարդկան, բայց զՀոգվոյն հայիտյունն մի թողցի: Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ Մարդոյ թողցի նմա, բայց որ զՀոգվոյն Սրբոյ ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի եւ մի հանդերձելումն» (Մատթ. ԺԲ. 31-32): «Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս որ ոչ **առ ի մահ**, խնդրեսցէ եւ տացէ նմա կեանս մեղուցելոյն **ոչ առ ի մահ**. Են մեղք որ **մահու չափ են**, եւ ոչ վասն այնորիք ասեմ եթէ խնդրեսցես: Ամենայն անիրաւութիւն մեղք են եւ են մեղք որ **մահու չափ են**» (Ա Հովհ. 16-17): Այս գաղափարը մասամբ բացատրվում է նաեւ Եբր. Թուղթի Զ 4-10 համարներում: Մի շարք մեղքեր «աններելի» են, ոչ թե իրենց մեծության կամ ծանրության պատճառով եւ ոչ էլ՝ Աստծու կամ Եկեղեցու «անգորության» պատճառով, որ քավ լիցի, այլ ենթակաների հոգեկան տրամադրության պատճառով. որովհետեւ մի շարք մարդիկ մեղքի մեջ այնքան բղջացել են, եւ այնքան կեղծավորաբար, այսինքն գիտնալով գործում են մեղքը, որ այլեւս իրենց համար գրեթէ անկարելի է լինում ապաշխարելը, եւ հետեւաբար՝ թողություն գտնելը: Արծակում կարելի է տալ բոլոր մեղքերի համար, հոգ չէ թե մեղքը որքան ծանր լինի, հերիք է որ ենթական ունենա անկեղծ եւ ուժգին զղջում եւ ապաշխարելու պատրաստակամություն:

Նյութ եւ ձեւ.՝ Մի ուրիշ տեղ ասել ենք, որ մի խորհուրդի էությունը կազմում են նրա «նյութն» ու «ձեւը», որոնք եթե դադարեն խորհուրդն էլ դադարում է խորհուրդ լինելուց: Իսկ «նյութ» ասվածը անպատճառ չի ենթադրում մի նյութական կամ թանձրացյալ իր, այլ նաեւ մի **արտաքին եւ զգալի** արարողություն կամ արարմունք, որ խորհուրդին էությունը, այսինքն կարելորագույն մասը կազմում է: Խորհուրդի մեջ կրարկված ամեն արարողություն կամ արարմունք անպայման չի կազմում խորհուրդի նյութը այլ կենտրոնական եւ հիմնական արարողությունը միայն: Օրինակ մկրտության պահուն կնքահոր երեք անգամ երկրպագելը, կամ երեխայի շորերը հանել-հագցնելը կամ քահանայի խաչակնքումները բոլորն էլ արարմունքներ են, բայց մկրտության «նյութ»-ին մաս չեն կազմում: Մկրտության նյութն է բացի ջրից նաեւ ջրի կիրարկման արարմունքը, այսինքն ընկղմիլը, սրսկելը կամ հեղուլը:

Արդ ապաշխարանքի խորհուրդի նյութը երեք ներգործություններ են զորս ապաշխարողը ի գործ **պետք** է դնել, որպեսզի իսկապէս ապաշխարանքի խորհուրդին ենթարկված լինի:

Այդ երեքը արարմունքներն են.

ա. **Ջղջում**

բ. **Խոստովանանք**

գ. **Հատուցում:**

Ջղջում բնականաբար նախ ենթադրում է **մեղքի գիտակցություն** եւ մեղանչած լինելու **ցավ**: Այս ցավը առաջացած կարող է լինել զանազան նկատումներից: Օրինակ՝ դժոխքի եւ պատժի վախից: Ոմանք զղջում եւ ապաշխարում են լոկ այն վախով, որ եթե նույն մեղքը շարունակեն անխուսափելիորեն պատժվելու են Աստծու կողմից հանդերձյալ կյանքում. ուստի՝ չուզելով դժողք գնալ, հեռանում են իրենց չար գործերից: Որիշները զղջում եւ ապաշխարում են արժանապատվության զգացումներից դրդված: Սրանք զգում են թե մեղքի պատճառով իրենք փոքրանում, էժան են դառնում եւ կորցնում են իրենց վարկը իրենց ծնողների, բարեկամների կամ հանրության առջեւ եւ հետեւաբար աշխատում են մեղքից հեռու մնալ:

Վերոհիշյալ թելադրություններից առաջացած զղջումները ընդունելի են Աստուծո առջեւ եւ այդ կերպով առաջացած ցավը կարող է մղել ենթական ապաշխարանքի, բայց կատարելագույն ապաշխարանքը կարող է բխել լոկ Աստծու սիրուց: Այսինքն մեր երկնավոր եւ ամենաբարի եւ ամենասիրելի Հայրը վշտացուցած լինելու զգացումից եթե բխած լինի այդ ցավը, այն ժամանակ զղջումը կատարյալ կլինի: Ամեն պարագայի, կատարյալ կլինի կամ անկատար ցավը լինելու դեպքում պետք է այն լինի **սրտանց եւ ներքին**: Երկրորդ՝ այն պետք է լինի **գեր-բնական**: Այսինքն մեղանչած լինելու ցավը կամ զղջումը հառաջ եկած պետք չէ լինի առողջական նկատումներից կամ արժանապատվության զգացումներից, այլ՝ **հավատոց**: Որովհետեւ **հավատում ենք** որ այսինչ արարքը մեղք է եւ հետեւաբար հակառակ է Աստծու օրենքին եւ կամքին, ուստի այն գործելը սխալ է, հետեւաբար եւ ցավալի: Անկեղծ զղջումի մաս է կազմում հաստատ առաջադրություն կամ որոշում նորից չմեղանչելու մասին: Չմեղանչելու **կերպերի** մասին խոսում ենք հոգեւորական եւ բարոյական աստվածաբանության դասերին:

Անկեղծ զղջումին շատ բնականորեն հետեւում են հաջորդ երկուսը. **Խոստովանանքը եւ Հատուցումը**: Որտեղ կա չկամություն խոստովանանք կամ հատուցում անելու, այդ իսկ նշան է զղջման թերի, հետեւաբար անընդունելի լինելուն:

Խոստովանանքը Աստծու առաջ ինքնամբաստանությունն է, կամ աստծու մեկ պաշտոնյայի առաջ: Խոստովանանքը ավետարանական է: Բազմաթիվ անդամներ այնտեղ հիշված է թե մարդիկ խոստովանում էին եւ հանձնարարվում է խոստովանվել ամեն անգամ որ մեկը մեղանչում է: «Խոստովան լինէին զմեղս իւրեանց» (Մատթ. Գ 6 Գործք. ԺԹ 18.): Խոստովան եղերուք միմիանց զմեղս» (Հկբ. Ե 16): «Եթէ խոստովան լինիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա եւ արդար առ ի թողուլ զմեղս մեր» (Ա. Հովհ. Ա 9): Ստույգ է որ Ս.Գրքում խոստովանելու սկզբունքը եւ անհրաժեշտությունը դրվում է, սակայն խնդրական է մնում թե ո՞ւմ պետք է խոստովանել: Այս մասին հստակ ուսուցում չկա Նոր Կտակարանում: Սակայն շատ տրամաբանական է մտածել որ մեղանչողը պետք է գնար **պատասխանատու** մի անձի որ կարող լիներ լսել իրան (մեղանչողին) նրան տալ խրատ, հորդոր, ուղղություն եւ **արձակում**: Հետեւաբար ամենայն հավանականությամբ եկեղեցու սովորությունը խոստովանանքի վերաբերյալ սկզբից եւթ ճույնը եղած լինելու է. այսինքն խոստովանիլ **եկեղեցու պաշտոնյաներին**, որովհետեւ միայն նրանց իշխանություն տրված է մեղքերը թողնել: Հետեւաբար բողոքականների այն առարկությունը թե քահանայի խոստովանելը ոչ միայն անհրաժեշտ չէ այլ նաեւ սխալ, բացարձակապես հիմք չունի եւ ինքն է սխալը:

Հենց սկզբից խոստովանանքը եղել է **առանձնական** եւ ոչ հավաքական: Այս մասին բազմաթիվ պատմական ապացույցներ կան: Տերտուղիանոս Բ. դարում ասում է. «Շատեր խուսափում են խոստովանությունից կամ օրից օր ձգձգում են, որովհետեւ իրենց հոռի վարքը հայտնելուց, ավելի փոյթ ունեն իրենց (սխալ հասկացված) պատվի մասին քան թե իրենց հոգիների փրկության մասին»: Որոգինես ասում է. «Ապաշխարունությունով մեղքի թողություն է տրվում, պայմանով որ մեղավորը չամաչի իր գործած մեղքերը քահանային հայտնելուց»: Ս. Գրիգոր Նյուսացին ասում է. «Եթե մեկը մեղք գործի եւ ինքը իր անձը ամբաստանի, եւ մեղքը հայտնի քահանային իր հիվանդությունից բժշկվում է»: Ս. Ոսկեբերան ասում է. «Քահանաները մի այնպիսի իշխանություն ստացան, որը նույնիսկ հրեշտակներին կամ հրեշտակապետներին չէր տվել Աստված, որովհետեւ հրեշտակներին չասվեց թե ում որ կապեք երկրի վրա կապված պիտի լինի եւ ում որ արձակեք՝ արձակված պիտի լինի»:

Մեր Մայր Մաշտոցն էլ հրահանգում է որ խոստովանողը իր գործած մեղքերը մեկիկ-մեկիկ պետք է խոստովանի: ՀԱՂՈՐԴ ՏԱԼՈՅ ԿԱՆՈՆ-ին մեջ այսպես ասվել է. «Խոստովանողն ի հրաստահարութենէ մարմնոյն կամ յորոգայթէ սատանայի՝ զոր ինչ մեղս գործեալ իցէ՝ մի ըստ միոջէ՝ յայտնեալ եւ զքահանային եղեալ զապաշխարանսն ի կատարել յանձն առեալ աղաչէ զնա ասելով. Հայր Սուրբ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան»:

Խոստովանանք բառին իմաստն էլ այն է թելադրում, որ այն պետք է առանձնական լինի, ուղղակի մի քահանայի: Այնպես որ մի անկեղծ զղջումի հաջորդող տրամաբանական անմիջական քայլը պիտի լինի երթալ Աստծու պաշտոնյայի մոտ եւ մեկ-մեկ խոստովանիլ իր գործած մեղքերը: Այս մի անհրաժեշտ փորձ եւ ապացույց է անկեղծ զղջումի: Բացի դրանից անհրաժեշտ է որ քահանան իմանա ապաշխարողին մեղքերը, որպեսզի կարողանա դրա համաձայն դեղ հանձնարարել, այսինքն խրատ եւ խորհուրդներ տալ եւ կամ ապաշխարանք սահմանել: Խոստովանանքը անհրաժեշտ է նաեւ քահանայական կարգին մեջ պարունակված իշխանության բնույթից իսկ: Այն որ ներում շնորհելու իշխանություն ունի

պետք է իմանա, թե ինչ բանի է ներում շնորհում: Կապելու եւ արծակելու այս իշխանությունը ուրեմն իր մեջ պարունակում եւ ենթադրում է մեղքերի խոստովանանքը, առանց որի այս իշխանության կիրարկումը անիմաստ կլինի: Հետեւաբար մեղքերի խոստովանությունը մի անհրաժեշտություն է արծակում ստանալու համար:

Խոստովանանքը անկեղծ պետք է լինի եւ իր մեջ պարունակի ցավ իր մեղանչած լինելուն համար: Պետք է լինի «բանիւ բերանոյ» լման, ամբողջական, հստակ եւ առանց վերապահության: Խոստովանանքը պետք է լինի խոնարհ հոգիով, ջերմեռանդությամբ, ճշմարտությամբ եւ առանց երկյուղի: Ստույգ է որ առանձնական խոստովանանքի ընկերանում է ամոթի, քաշվելու եւ մինչեւ իսկ ընդվզելու զգացում, բայց ան որ չի ամաչել որոշ մի մեղք գործելու, պետք չի ամաչի եւ քաշվի այդ գործված մեղքը խոստովանելուց, եթե արդարեւ անկեղծ է իր զղջումը: «Ով որ ապաշխարում է, կհաղթի ամոթին եւ մեկդի է դնում խոստովանելու ժամանակ կորմրելը, փրկության հասնելու ակնկալությամբ»:

Սակայն այս բոլորից չի հետեւում որ միայն զղջումով եւ խոստովանանքով մարդու մեղքերը ինքնին ներվում են: Քահանայից արծակում ստանալը անհրաժեշտ է մեղքերի թողության համար. «գոր միանգամ արծակիցէք յերկրի, եղիցի արծակեալ յերկինս», - ասաց մեր Տերը:

Քահանան խոստովանանքը լսելուց հետո արգելված է իր լսածը ուրիշներին հայտնելու: Այս մասին շատ խիստ են եկեղեցական կանոնները: Ս. Լուսավորչին վերագրված կանոնների մեջ ասվել է. «Եթէ ոք ի քահանայից գծածուկ խոստովանութիւն ուրուք յայտնեաց, **անկցի յաստիճանէն** եւ ի կարգէ պաշօնէից մերժեսցի» (ԻԲ): Ինչ որ կրկնվում է Ներսես Աշտարակեցու գումարած ժողովում. «Թէ ոք ի քահանայից յայտնիցէ երբեք զբան խոստովանողացն նզովիւք լուծցի եւ ամենայն իրօք ջնջեսցի ի քահանայական ժառանգութենէ» (Կանոնական թուղթ Զ):

Քահանան արծակման ժամանակ ձեռքը դնում է արծակվողի գլխին եւ ապա արտասանում է արծակման աղոթքը: Նկատելի է որ արծակման աղոթքի մեջ քահանան նախ հայցում է Աստծու ողորմությունը եւ թողությունը եւ ապա միայն **արծակում** նրան իր մեղքերից «կարգաւ քահանայական եւ իշխանությամբ աստվածային» որ իրեն տրված է: Ստույգ է որ ամեն քահանա իրավունք ունի մեղքերի թողություն տալու, բայց ամեն քահանա չի կարող լավ խոստովանահայր լինել, առանց այդ ուղղությամբ պատրաստված լինելու: Հովվական աստվածաբանությունը սովորեցնում է լավ խոստովանահայր լինելու կերպերը:

Հատուցումն.- Խոստովանանքից հետո քահանան պետք է նշանակե մեղքերի մի դարման: Այդ դարմանը կոչվում է հատուցում: Բնականաբար մենք մեր մեղքերի համար երբեք չենք կարող լրիվ հատուցում կատարել. մեղքի հատուցումը մահ է. «Թոշակ մեղաց մահ է»: «Այն օրը երբ արգիլված պտուղից ուտեք անպատճառ պիտի մեռնիք», - ասվում է Աստվածաշնչում: Հետեւաբար խորքում հատուցում ասվածը ուրիշ բան չէ եթե ոչ **մասնակցիլ** գեթ մեկ մասով, այն մեծ հատուցման գոր մեր Տերը ի դիմաց մեզի անում է Աստծու առաջ: Ամեն մեղք իր խորքում աստծու դեմ գործված մի արարք է: Աստծու դեմ գործված մի անօրինականություն միայն Աստված կարող է հատուցանել: Հետեւաբար երբ մեր մեղքերի համար զղջանք, խոստովանինք եւ արծակում ստանանք, Քրիստոս է որ մեր փոխարեն հատուցանում կամ քավում է մեր մեղքերը, բայց ակնկալվում է որ մենք էլ, գեթ մի որոշ չափով, մասնակցինք այդ հատուցման, կատարելով այդ մեղքերի համար խոստովանահոր մեր վրա դրած ապաշխարանքները, կամ նույնիսկ մենք մեր վրա ապաշխարանք դնելով: Հատուցումը պետք չէ շփոթել գողցված մի իրի վերադարձվելուն հետ եւ կամ գործված անարգանքի փոխարեն ներողություն խնդրելուն հետ: Գողցված իրի վերադարձումով մարդ չի դադարում մեղավոր լինելուց. նա պարտի իր հերթին ինք իրեն գրկանքի ենթարկել, նվիրատվությամբ կամ ծոմապահությամբ եւ կամ բարեգործությամբ որպեսզի Աստծու օրենքին դեմ գործած լինելու մեղքին համար մասամբ գեթ հատուցած լինի:

Հատուցման այս խնդրի կապակցությամբ կարելի է վարդապետական տարբերություն է առաջ գալիս Արեւելյան եւ հռոմեական Եկեղեցիների միջեւ: Ըստ հռոմեական ուսուցման մեղքին կապված է երկու տեսակ պատիժ. ժամանակավոր եւ հավիտենական: Ապաշխարանքով եւ արծակումով ենթական ազատվում է իր հավիտենական պատժից. իսկ ենթական ինքը պետք է հատուցում անի աստվածային արդարության իր մեղքին համար ժամանակավոր պատուհաս կրելով: Արդ խոստովանահոր կողմից նշանակած ապաշխարանքը այդ նպատակով է արդեն կրել տալ ենթակային իր մեղքին ժամանակավոր պատիժը: Եթե այդ ժամանակավոր պատիժը չկրցան կրել երկրում, պիտի կրեն

անդենականում՝ քավարանում: Այս վարդապետությունից հառաջ եկավ **Ներողագիր** տալու սովորությունը հռոմեական Եկեղեցում: Ըստ այս վարդապետության եթե մեկը մի մեծ բարեգործություն անի եւ կամ մասնակցի այսինչ ուրախության ազատվելու է այն պատճից որ իրեն սպասվում էր քավարանում կամ այդ պատժի ժամանակամիջոցը կրճատվելու է ըստ իր արած բարեգործության: Նման մի ուսուցում իր հաստատումը չունի ոչ Ս. Գրքից եւ ոչ էլ՝ ավանդությունից այլ մտածված է Հռոմի պապերի կողմից հատկապես մեծամեծ եկեղեցիներ կառուցելու համար մեծահարուստների եւ իշխանների դրամից օգտվելու համար: Մեր եկեղեցում խոստովանանք իր իմաստից ու նշանակությունից շատ բան է կորցրել: Նախ այն վերածվել է ձեւականության, այսինքն **զղջում** կոչված մեղքերի մի ցուցակի արտասանության: Հավանաբար սկզբում այս ցուցակը կազմվել է խոստովանողների գործը հեշտացնելու նպատակով, որպեսզի հիշեն թե ինչ բաներ մեղք են: Բացի այդ՝ մեղքերն էլ ժամանակի ընթացքում փոփոխության կարող են ենթարկվել, մի շարք հին մեղքեր կարող են գործածությունից դուրս գալ եվ նրանց փոխարեն ուրիշներ մեջտեղ կգան: Օրինակ այսօր մենք չենք իմանում թե ինչ է «իգութեամբ ռնդացս» մեղքը, որը հիշված է «Մեայ»-ի բանաձեւում. մինչդեռ անհնազանդությունը, որ մի ժամը մեղք է չի հիշվել այդ ցանկում: Հետեւաբար ճիշտ չէ խոստովանանքի հին ժամանակներում կապված մեղքերի այդ ցուցակի թվումով կամ մեքենական արտասանությամբ թողություն տալը, որը դժբախտաբար ամենուրեք մեզանում կիրարկված խոստովանանքի միակ ձեւն է հանդիսանում այժմ: Խոստովանանքի այս ձեւը ավելի ծածաղելի է դառնում երբ անդրադառնանք, որ ենթական մինչեւ իսկ չի կարող կրկնել մեղքերի այդ ցուցակը եւ խոստովանահայրը նրա փոխարեն կրկնում է այն մեքենաբար: Այս սխալ կիրարկության մեջ միակ փրկարար երեւույթը խոստովանողներից մեծ մասի հավատքն է. հավատք՝ թե այդ կերպ խոստովանանքը ընդունելի է Աստծու առաջ, ու եթե մեր ժողովուրդը մի այդպիսի խոստովանանքից հետո արդարացած է դուրս գալիս այդ լինում է միմիայն շնորհիվ իր հավատքին. «Հաւատք քո կեցուցին գքեգ»:

Բացի այդ թութակաբար կամ ձեւական խոստովանանքից մեր մեջ կիրարկված մյուս սխալ ձեւն է՝ խոստովանանքին **հավաքաբար** կատարվելը: Խոստովանանքը **անհատական** մի գործ է եւ հետեւաբար առանձին էլ պետք է կատարվի: Այստեղ էլ դարձյալ փրկարար դեր կատարողը մեր ժողովրդի միամիտ հավատքն է: Սակայն քանի որ տակավ առ տակավ այդ փրկարար հավատքը պակասում է, նրա հետ միասին պակասում է նաեւ խոստովանանքի կարեւոր դերը: Երբ խոսվում է հայոց Եկեղեցու բարեկարգության մասին առաջին բարեկարգվելիքներից մեկն է խոստովանանքը իր նախկին դիրքում եւ իմաստով վերականգնել ու կիրարկման դնել: Եկեղեցու զորության եւ առողջության պայմաններից մեկն է իր անդամների ուղիղ հասկացողություն ունենալը խոստովանանքի մասին եւ այն ուղիղ կերպով կրարկելը:

ԶԵՆՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կոչվում է նաեւ **ԿԱՐԳ**. այն խորհուրդն է որի միջոցով մի մարդու հոգեւոր իշխանություն եւ շնորհք է տրվում եկեղեցական պաշտամունքներ կատարելու համար:

Մեր Տերը ոչ միայն Եկեղեցին հաստատեց, այլ նաեւ հայթայթեց փրկության միջոցներ եւ նշանակեց պաշտոնյաներ, որոնք մատակարարելու են այդ միջոցները: Այսինքն պիտի **քարոզեն** «Կենաց Բանը» **պիտի կատարեն խորհուրդները** եւ Եկեղեցու պաշտամունքները եւ **պիտի կառավարեն** Եկեղեցին: Եւ քանի որ եկեղեցուն նվիրված անձերի այս պաշտոնը մշտապես շարունակվելու էր, հետեւաբար այդ իշխանությունը փոխանցելի պետք է լիներ. իշխանության այս փոխանցումը տեղի է ունենում **ձեռնադրության խորհրդով**:

Թե եկեղեցական իշխանությունը փոխանցվում էր ձեռնադրության միջոցով շատ ապացույցներ կան Նոր Կտակարանից: «Վասն որոյ յիշեցուցանենք քեզ արծարծեալ գշորիս Աստուծոյ, որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ» (Բ. Տիմ. Ա 6): «Մի անփոյթ ամենք գշնորհացդ որ են ի քեզ, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան» (Ա. Տիմ. Դ. 14): Առաքյալները ձեռնադրեցին Եկեղեցու առաջին յոթը սարկավազները. «(Առաքեալք) աղօթս արարեալ եղին ի վերայ նոցա զձեռս» (Գործք Զ. 6): Պողոս եւ Բառնաբաս «ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցեաց երիցունս» (Գործք ԺԶ. 22): Իբրեւ խորհուրդ ձեռնադրությունը ոչ միայն օգտակար է Եկեղեցու ընդհանուր բարգավաճման եւ բարեկարգության համար այլ նաեւ անհրաժեշտություն է: Առանց ԿԱՐԳ-ի, այսինքն առանց

եկեղեցական կարգ ունեցող պաշտոնյաների, կարելի չէ ոչ «Բանին Կենաց» հեղինակավոր եւ անսխալ քարոզություն, ոչ էլ ս. Պատարագի եւ այլ խորհուրդների կատարում, եւ ոչ էլ Եկեղեցու օրինական եւ պատշաճ վարչություն:

Այս խորհուրդի **նյութը** կամ արտաքին տեսանելի եւ զգալի նշանն է **ձեռնադրությունը**, իսկ քահանայի եւ եպիսկոպոսի պարագային՝ նաեւ ս. Մյուռոնով օծումը: Իսկ ձեւն է ձեռնադրության ժամանակ եպիսկոպոսի արտասանած հետեւյալ խոսքը. «Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ ապաստորութեան առաքելական եկեղեցւոյ կոչէ (զայս անուն) ի սպասաւորութիւն սրբո եկեղեցւոյ, ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեան: Ես դնեմ զձեռն ի վերայ սորա, եւ դուք ամենեքեա աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան (քահանայութեան) անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» (Մաշտոց Ձեռնադրության):

Այս խորհուրդի պաշտոնյան եպիսկոպոսն է: Արդարեւ թեմի իշխան լինելու առանձնաշնորհի հետ, ձեռնադրությունը եպիսկոպոսի հատուկ իշխանության հիմնական մասն է կազմում: Եկեղեցու բոլոր պաշտոնյաների, բացի եպիսկոպոսից, ձեռնադրության համար մեկ եպիսկոպոսը հերիք է: Իսկ եպիսկոպոսական ձեռնադրության համար անհրաժեշտ է երեք եպիսկոպոսների ներկայությունը եւ մասնակցությունը, որոնցից մեկը արքեպիսկոպոս պետք է լինի, իսկ միայն մեր Եկեղեցու հատուկ օրենքով, ձեռնադրող երեք եպիսկոպոսներից մեկը կաթողիկոսը պետք է լինի:

Եկեղեցու պաշտոնյաների երեք հիմնական կարգեր կան. եպիսկոպոս, քահանա եւ սարկավագ: Սրանցից վեր կան նվիրապետական բարձրագույն **աստիճաններ**, որոնք սակայն ուրույն կարգեր չեն. օրինակ՝ արքեպիսկոպոս, պատրիարք, կաթողիկոս: Իսկ վարն էլ կան եկեղեցու մանր կարգերը: Դրանք են կիսասարկավագ, ջահընկալ, երդմնեցուցիչ, ընթերցող, դռնապան, ավելածու, սաղմոսասաց: Սրանց վրա ձեռնադրություն չի կատարվում, ոչ էլ վերին աստիճանների վրա (արքեպիսկոպոս, պատրիարք, կաթողիկոս), այլ աղոթքով իրենց պաշտոնին վերաբերյալ առարկաները եւ սպասները իրենց են տրվում:

Մեր եկեղեցու մեջ վերոհիշյալ փոքր աստիճանները գրեթե դադարել են ուրույն գոյություն ունենալուց եւ նրանց պաշտոնները փոխանցված են մնայուն կարգերից մեկնումեկին: Այսպես՝ ավելածությունն ու դռնապանությունը այսօր անցել են լուսարարին: Ջահընկալությունը, սաղմոսասացությունը եւ ընթերցողությունը փոխանցվել են դպիրներին: Կիսասարկավագությունը միացել է սարկավագության հետ: Իսկ երդմնեցուցչությունը, որ դեւերը հալածելու պաշտոնն էր, անցել է քահանաներին, որոնք միայն կարդում են **ամեն կարգի** հիվանդների վրա լինեն դրանք դիվահարներ թե սովորական հիվանդներ:

Սարկավագի նախնական պաշտոնն էր հավատացյալների հասարակաց ճաշի սեղաններին սպասավորել (տես Գործք Զ զուխ): Ապա երբ այս հասարակաց սեղանները դադարեցին գոյություն ունենալուց, բնական կերպով սկսեցին ծառայել հոգեւոր սեղանին, այսինքն ս. Սղանին, ուր անմահ պատարագն է մատուցվում: Սրա համաձայն ներկայիս սարկավագի պաշտոնն է սովորել եւ օգնել եպիսկոպոսին եւ քահանային պաշտամունքների ժամանակ: Ավետարան կարդալ, վերաբերում անել, խնկարկել եւ այլն: Սարկավագության կարգը տրվում է լոկ ձեռնադրությամբ: Իր կարգի նշանն է **ուրարը** որը կախում է իր ձախ ուսից, իբր մասնակի լուծ Տեառն: Հին ժամանակ կային եւ մինչեւ օրս էլ շարունակում են գոյություն ունենալ մեր մեջ, սարկավագուհիներ: Հին ժամանակ դրանց պաշտոնն էր կանանց վրա հսկողություն կատարել, քրիստոնեական սովորեցնել եւ եկեղեցու մեջ կանանց բաժնի հսկողությունը կատարել, ինչպես նաեւ չափահաս եւ նորադարձ կանանց մկրտության արձընթերականություն եւ սպասավորություն անել:

Քահանայի պաշտոնն է սուրբ խորհուրդները մատակարարել բացի ձեռնադրությունից: Ս. Պատարագ մատուցանել, օրհնել գրեթե ամեն ինչ բացի եկեղեցուց եւ օծանելի ուրիշ առարկաներից (ավագան, պատկեր եւ այլն): Քահանայի պաշտոնն է նաեւ քարոզել, խոստովանանք լսել եւ արձակում տալ: Նրա խորհրդանշանն է փիլոնը եւ փորորարը, որոնք խորհրդանշում են Քրիստոսի լուծին ամբողջական ընդգրկումը:

Եպիսկոպոսությունը եկեղեցու բարձրագույն կարգն է. իր պաշտոնն է հովվել հավատացյալներին իբրեւ հովվապետ, ձեռնադրել եւ օծել: Ինչ որ ս. Մյուռոնով նվիրագործվում է եպիսկոպոսի պաշտոնն է բացի այն պարագայից երբ եպիսկոպոսը լիազորում է իր իրավասության ներքեւ գտնվող քահանային կատարել սույն օծումները (պատկերի, սկիհի, մինչեւ իսկ սեղանի եւ ավագանի. բայց ոչ եկեղեցու կամ եկեղեցական պաշտոնյաների):

Քահանաների մեծավորներն են եպիսկոպոսները, որոնց պարտին անվերապահ հնազանդիլ քահանաները բացի այն պարագաներից երբ եպիսկոպոսը հայտնապես եկեղեցու օրենքների հրահանգ է տալիս, որոնց վերջնական կարգադրությունը ընկնում է եպիսկոպոսապետին: Եպիսկոպոսի խորհրդանշանն է եմիփորոնը, որը Քրիստոսի լուծին լիակատար ենթարկում է նշանակում, եւ մատանին՝ որ խորհրդանշում է հովվապետական իշխանությունը: Պանակեն վերջամուտ է եւ փոխ է ամնվել ռուսական Եկեղեցուց:

Պատմության մեջ հիշվել են նաեւ քրեպիսկոպոսներ, որոնք հավանաբար գյուղերի տեսուչներ էին, իրենց ձեռքի տակ ունենալով քահանաներ, եւ իրենց հերթին ենթարկվելով մի ուրիշ եպիսկոպոսի իշխանության: Հավանաբար համապատասխանում էին այսօրվա ավագերեցներին:

Արքեպիսկոպոսությունը որ նախապես եկեղեցական ուրույն պաշտոն եւ դիրք էր այժմ մեր մեջ վերածվել է լոկ մի պատվո տիտղոսի: Հունաց մոտ արքեպիսկոպոսին համազոր է մետրոպոլիտը, այսինքն մայրաքաղաքի կամ նահանգի կենտրոն քաղաքի եպիսկոպոս, որ հին ժամանակներում իր իշխանության ներքե կարող էր եպիսկոպոսներ էլ ունենալ, եւ որ ձեռնադրությունների ժամանակ նախագահում էր ամենթերակա ունենալով երկու այլ եպիսկոպոսներ:

Պատրիարքը, որ հայրապետ է նշանակում, հռոմեական կայսրության երեք մեծագույն քաղաքական կենտրոնների (Հռոմ, Աղեքսանդրիա, Անտիոք) արքեպիսկոպոսներին տրված տիտղոսն էր: Երբ Բյուզանդիոնն էլ մեծ կամ մեծագույն քաղաքական կենտրոն դարձավ կայսրության մեջ այդ իսկ հանգամանքով նրա եպիսկոպոսն էլ ստացավ պատրիարք տիտղոսը: Երուսաղեմի եպիսկոպոսն էլ, իբրեւ նվիրական քաղաքի եպիսկոպոս ու տեսուչ, նույն աստիճանին բարձրացավ: Հետագայում հույների մեջ այս տիտղոսը ունեցան նաեւ եպիսկոպոսապետները այն ազգերի որոնք պատկանում էին օրթոդոքս եկեղեցուն ու ձեռք էին բերել իրենց **քաղաքական** անկախությունը: Իսկ մեր մեջ պատրիարք տիտղոսը տրվում է լոկ Երուսաղեմի եւ Կ. Պոլիսի արքեպիսկոպոսներին: Պատրիարքները իրենց բնորոշիչ ոչ մեկ նշան չունեն հատուկ իրենց: Մեր եկեղեցու իրական եւ օրինական արքեպիսկոպոսները այս երկու պատրիարքներն են, քանի որ իրենց իրավասության ներքե ուրիշ եպիսկոպոսներ ունեն:

Կաթողիկոս եկեղեցական տիտղոսը հատուկ է եպիսկոպոսապետներին արեւելյան այն ազգերի մեջ, որոնք հռոմեական կայսրությունից դուրս էին մնում եւ կայսրության հինգ պատրիարքություններից մեկնումեկի իրավասության չէին ենթարկվում անմիջականորեն: Դրա համաձայն պարսիկների, ասորների, հայերի, վրացիների, աղվանների եպիսկոպոսները կոչվում էին կաթողիկոս: Մեր մեջ կաթողիկոսի բնորոշիչ նշանը լոկ կոնքեռն է, որը բարձրագույն հովվապետության խորհրդանշանն է: Իսկ կաթողիկոսի վեղարի վրայի ադամանդակուռ խաչը վերջամուտ է եւ ռուսական եկեղեցուց փոխառված:

Ձեռնադրության թեկնածուները պետք է լինեն այնպիսի անձեր որոնք հարմարություն ունենան իրենց սրբազան պաշտոնին, թե բարոյական վստահելի նկարագրով, թե գիտությամբ, թե դաստիարակությամբ եւ թե ֆիզիքական կազմով: Մտքով եւ մարմնով պակասավոր մի անձ եկեղեցական պետք չէ լինի: Մկրտյալ անձեր պետք է լինեն զինված հավատքով, բարեպաշտությամբ եւ ծառայելու անվերապահ ոգիով: Եկեղեցու կանոնները շատ մեծ կատարելություններ են սահմանում հոգեւորականության թեկնածուների համար եւ շատ խիստ են իրենց կարգին հակառակ եւ եկեղեցու օրենքների դեմ գործող եկեղեցականների դեմ:

Ձեռնադրելիս եպիսկոպոսը իր հարցաքննության ժամանակ քահանայից պահանջում է հետեւյալները.

ա. Ի պարկեշտ ամուսնութենէ եւ ի սուրբ յանկողնոյ ծնեալ լինել:

բ. Անշաղախ լինել յամենայն անմաքուր գործոց:

գ. Կամաւորութեամբ գալ յայս կարգ եւ յօժար կամօք յանձն արնուլ զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ոչ ի հարկէ հրաւիրողաց:

դ. Թողուլ զամենայն հոգս զբաղմանց աշխարհի, եւ զհւր սովորութեամբ կեալն:

ե. Պահած լինել անձն սուրբ եւ անարատ:

զ. Ունենալ զուսումն Ա.Գրոց եւ աստուածային օրինաց:

է. Ինքզինքը ենթարկել յաղքատություն, ի քաղց, ի ծարավ, ի հարկին տոկալ ի վիշտս, ի հալածանս, ի նախատինս, ի չարչարանս վասն Քրիստոսի:

ը. Յանձն արնուլ արանց ձանձրանալոյ յամենայն ժամ զգաստութեամբ կեալ ի պաշտոնն Աստուծոյ ընդ մարմնաւոր գործոց:

թ. Հանձն առնուլ կատարել զամենայն հրամանս սուրբ առաքելոց, մարգարէից եւ հայրապետաց եւ կալ ըստ կանոնի նոցա եւ ոչ լուծանել կամ հակառակ կանոնաց ուսուցանել զոք ի վարս քրիստոնէութեան:

ժ. Ուսեալ լինել զամենայն որպիսութիւն խոստովանութեան, որպէսզի կարենա խրատել զժողովուրդն զգուշանալ յամենայն մեղաց զի մի արին նոցա ի ձեռաց սորա խնդրեսցէ Աստուած:

ժա. Ունենալ զդաւանութիւն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ:

ժբ. Հրաժարիլ յամենայն հերձուածողաց:

Փորձառութիւնը ցոյց է տվել որ նորադարձները (հատկապես բողոքականութիւնից) պետք չէ կանչել ի սուրբ ԿԱՐԳ, որովհետեւ նրանք ի վերջո վնասակար կլինեն եկեղեցուն: Տարիքն էլ կարելոր մի հարց է: Առհասարակ հին օրենքով սարկավագի համար նշանակված է 25 իսկ քահանայի համար՝ 30: Սկզբունքն այն է որ մատաղ տարիքում պետք չէ կոչել ենթականերին սուրբ կարգին. ստիպողական պարագայում պետք է լավ եւ փորձ եւ հսկողության տակ մնան մինչեւ ս. կարգում լավ թրծվելը: Դարձեալ՝ նա որ աշխարհում գործելու համար քահանա պիտի լինի պետք է կարգ առնէ ամուսնանալուց հետո, ըստ հին օրենքի: Իսկ կուսակրոնները ամուրի վիճակում պետք է ձեռնադրվեն, հատուկ ուխտով, եւ պիտի մնան այդ վիճակում մինչեւ մահը: Որովհետեւ ըստ հին օրինաց ոչ ոք կարող է ամուսնանալ ձեռնադրութիւնից հետո: Քահանաների վերամուսնութիւնը որը հիմա մեզանում թույլատրվում է, եկեղեցու այս օրենքներին դեմ է:

ԿԱՐԳ-ի խորհուրդի տված շնորհն է **հոգեւոր հեղինականութիւն** կատարելու այն բոլոր պարտականութիւնները, որոնք իր պաշտոնին հատուկ են իսկ այն որ հատուկ պատրաստութիւնով եւ արժանավորապէս ընդունում է այս խորհուրդը, իրեն տրվում է մասնավոր օժանդակութիւն Աստծու կողմից կատարելու համար ի պաշտոնը արժանավորապէս եւ Աստուծո հաճելի եղանակով, եւ ապրելու մի առաքինի կյանք համաձայն իր կոչման պահանջին: Քահանայի, սարկավագի եւ եկեղեցու պաշտոնյաներին վերաբերյալ գործնական գիտելիքները տրվում են հովվական աստվածաբանութեան մեջ:

Ինչպէս մկրտութեան պարագայում, նույնպէս ձեռնադրութեան ժամանակ տրված շնորհը կնիքի պէս խփվում է ենթակայի հոգուն եւ մնում է այնտեղ անջնջելի: Ենթական կարող է իր կամակորոթամբ այն անգործութեան մատնել աշխարհ մտնելով:

Եկեղեցին էլ կարող է, այսպէս ասած, սառեցնել նրան կախակայունով կամ կարգալուծումով, որոնցից հետո ենթակային ներելի չէ կիրարկել իր կարգը մինչեւ որ այդ մասին պատասխանատու եւ օրինական եկեղեցու իշխանութիւնից չարտոնվի նորից կիրարկել իր կարգը:

սին էլ որեւէ ակնարկութիւն չկա Ավետարանների մեջ: Սրա դասական ապացույցը գտնվում է Հակոբի Թուղթի մեջ ուր ասվել է. «Հուանդանայցէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցեն գերիցունս եկեղեցույն, եւ արասցեն ի վերայ նորա աղօթս, **օճցեն իւողով յանուն Տեառն, եւ աղօթք հաւատովք փրկեսցէ զաշխատեալն. եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ թողի նմա» (Ե. 14): Այս բնագիրը ուշի-ուշով քննելով կարելի է հետեյալ մի քանի կետերը մակաբերել:**

ա. Առաքեալը մի նոր սովորութիւն չէ որ հաստատում է, ոչ էլ ակնարկում է մի սովորութեան որը անձանոթ լինել իր ընթերցողներին: Եւ որովհետեւ առաքյալները պատվիրում էին միայն Քրիստոսից իրենց ընդունած օրենքները, հետեւաբար կարելի է հետեւցնել, որ յուղով օժելու այս սովորութիւնը պատվիրված էր մեր Տիրոջ կողմից առաքյալներին: Այս կերպով անուղղակի փաստվում է հիվանդը յուղով օժելու այս սովորութիւնը Քրիստոսից է հաստատվել:

բ. Այս յուղը միայն ֆիզիքական բժշկութեան համար չի հանձնարարվում, այլ նաեւ մեղքերի թողութեան համար:

գ. Ակնարկութիւնը անհրաժեշտաբար վերջին կամ ծանր հիվանդութեան համար չէ, այլ որեւէ հիվանդութեան պարագային: Այս կետում է որ տարբերութիւն է մտնում հույն եւ լատին եկեղեցիների կիրարկութեանց եւ ուսուցման միջեւ այս խորհուրդի մասին: Մինչդեռ լատին եկեղեցին ծանր կամ մահացու հիվանդութեան պարագայումն է որ կիրարկում է «վերջին օծում»-ը, հույն եկեղեցին պահելով նույն սկզբունը դնում է ծիսական տարբերութիւններ:

դ. Այս իւղով օծումը պետք է կատարվեր եկեղեցու պաշտոնյաների կողմից, եւ ոչ թէ որեւիցէ մի մարդու կողմից:

Ըստ երեւոյթին մեր մեջ եւս հին ժամանակ այս խորհուրդը կրարկվել է յուրի օծումով, որովհետեւ Հովհան օձնեցին հրահանգում է. «Արժան է **գիւանդացն ձէթ՝** քահանային օրհնել ըստ իւրում աղօթիցն, եւ ըստ բաւականութեան պահանջելոյ ժամուն պիտոյից»։ Կորյուն պատմիչը ակնարկում է այս խորհուրդին Սահակ Պարթեւ հայրապետի մահվան կապակցութեամբ. «Ի կատարել ամսեանն Նաւասարդի, **ի պաշտաման անուշահոտ իւղոյ՝** հանդերձ աստուածահաճոյ աղօթիք, ծերունւոյն ւաւանդեալ»։ Սարգիս վարդապետ գրում է. «Առաջին իւղ եւ մեծ ասեմք զիւղն աւազանին...գոր Մեռոն սուրբ անուանեմք... եւ այլ իւղ մեծ օծութեան երեխայից ըստ օրհնութեան քահանայից, եւ **այլ իւղ հիւանդաց**»։ Հովհան Մանդակունին ասում է. «Ինքեանք մոլորեալք են, թողեալ զշնորհսն Աստուծոյ, զաղօթսն եւ զիւղն օծման գոր պատուիրանք հրամայեցին **հիւանդին**, եւ զպահս եւ զաղօթս ցաւածին»։ Խոսքով Անձեւացին մեկնաբանելով Հակոբոս առաքյալի վերոհիշյալ համարը ասում է. «Իւղն օրինակ շնորհաց Հոգւոյն Սրբոյ տուաւ, որ աներեւութաբար գներքին մարդն մաքրէ, եւ յատնապէս արտաքին մարմնոյն առողջութիւն պարգեւէ՝ որք հաւատով յուսան»։ Ներսես Շնորհալին նոյն համարի մեկնաբանութեան մեջ ասում է. «Բայց թե ներգործել զայս աղօթիցն էր զօրութիւն, **օծման իւղոյն** առ ի՞նչ պէտս բժշկեալքն կարօտային»։ Կիրակոս Գանձակեցին իբրեւ Ստ Բ. ժողովի ԻԵ կանոն հիշատակում է. «**խորհուրդ վերջին օծման հիվանդաց** անխափան կատարեցին **իւղով օրհնելով ի քահանայէն**, որպէս կանոնեալ՝ յառաջ ժամանակաւ մեծ հայրապետն Հովհաննես Իմաստասէրն»։

Ներկայիս սակայն, մեր Մաշտոցում այս «խորհուրդի» կատարման համար ոչ արարողություն կա ոչ էլ հանձնարարություն։ Մեր Մաշտոցում այս կապակցութեամբ եղածներից առաջինն է ԿԱՆՈՆ ՀԱՂՈՐԴ ՏԱԼՈՅ, որ հայտնապէս մահամերձ հիվանդին վերջին թռակ տալու կանոնն է, եւ իւղով օծելու ոչ մեկ ակնարկություն չկա, լինի կանոնների մեջ լինի աղոթքների։ Երկրորդն է՝ ԿԱՆՈՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՍՈՒ ԱՂՕԹԻՑ։ Շատ հավանական է, որ այս կանոնն է մեր մեջ այս խորհուրդի համապատասխան արարողությունը։ Առաջին աղոթքը (էջ 150) ավելի մեղքերի թողութեան համար է. «Առաքեա զՀոգիդ քո Սուրբ, եւ սրբեա (զայս անուն) ծառայս, եւ ազատեա յամենայն մեղաց»։ Երկրորդ աղոթքն էլ (էջ 156) նոյն իմաստով է. «Նայեա (յայս անուն) ծառայս քո, զի փրկեալ ի մեղաց եղիցի արդարացեալ ի քեզ»։ Իսկ հաջորդ երրորդ (էջ 160), չորրորդ (էջ 166), հինգերորդ (էջ 171), աղօթքները մարմնական բժշկութեան մասին են։ Վերջին աղոթքն էլ (էջ 177) մեղքերի թողութեան մասին է։ Օծման որեւէ ակնարկություն չկա նաեւ այս աղոթքին մեջ, բայց հիշվում են մարմնի մի շարք անդամները եւ նրանց սրբացման համար լինում է աղոթք. «**Ջբերան** սորա քոյին օրհնութեամբ լցո, **գշրթունս** սորա բաց, առ ի փառաբանութիւն ավանդ քում սրբոյ. **գձեռս** սորա տարածեա ի գործս պատուիրանաց քոց. **զոտս** սորա առ յընթացս Աւետարանին ուղղեա **զամենայն անդամս** սորա եւ **զմիտս** պարփակեա քոյին շնորհօք»։

Իսկ այս կանոնի վերջին մասում (էջ 180) կա հետեւյալ ծանոթությունը. «Յայն ժամ կէսքն ի քահանայիցն կալով յաջմէ հիվանդին, եւ կէսք ի ծախմէ. եւ Աւագերեցն եկեալ դնէ զԱվետարանն ի վերայ գլխոյ հիւանդին եւ ասէ». մի աղոթք, որը հայտնապէս բժշկութեան է, եւ որի մեջ հետեւյալ հետաքրքրական ասմունքը եւ արարմունքը կա. «Եւ արդ **ես** ծառայս տկարս եւ անարժանս **դնեմ գձեռս իմ ի վերայ հիվանդիս այսորիկ** եւ խնդրեմ զառատ բարերարութիւնէդ քումմէ. առաքեա զամենակարող զօրութիւն քո, եւ բժշկեա զախտս եւ զհիւանդութիւնս ծառայիս այսորիկ՝ նշանաւ ամենայաղթ խաչի քո»։

Մեր Մայր Մաշտոցի տպագրողներն էլ (1807թ.) զգալով Վերջին Օծման կանոնին բացակայությունը մեր ծիսարանում հետեւյալ ծանոթագրությունն են դրել Մկրտության խորհուրդի արարողության վախճանին. «Աստ կատարի մկրտութեան խորհուրդ եւ սկսանին երկրորդ, երրորդ եւ չորրորդ խորհուրդքն այսինքն, Դրոշմին՝ **ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ** եւ հաղորդութեան նոր մկրտելոցն» եւ ասպա հաջորդող էջագլուխներում նշանակված է. «Կանոն Դրոշմի եւ **ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ**»։ Իսկ ս. Մյուռնոնով դրոշմելու բանաձեւից առաջ ծանոթագրված է. «Եւ կնքէ սուրբ իւղովն զճակատն որ է սուրբ դրոշն եւ ասէ...»։

Մայր Մաշտոցի այս նշումներից կարելի է հետեւեցնել, որ բուն դրոշմը **լոկ** ճակատի կնքումն է, ինչ որ է սովորությունը լատին եկեղեցու մեջ, իսկ մարմնի մյուս մասերի կնքումը թերեւս եղած լինի **կանխումը վերջին օծման**, որովհետեւ ոչ ոք վստահ կարող էր լինել, հատկապէս արեւելքում, թե մկրտյալ մանուկը պատեհություն պիտի ունենա՞ր արժանանալու վերջին օծման։ Որովհետեւ բարբարոսների արշավանքներ, ժանտախտներ, մանկամահեր շատ էին տարածվել Արեւելքում, եւ թերեւս այս իրողությունն է, որ մղել է Եկեղեցին, որ փրկութեան համար անհրաժեշտ բոլոր խորհուրդները (ապաշխարություն, մկրտություն, դրոշմ, վերջին օծում եւ հաղորդություն) մեկտեղ է համախմբել եւ

մատակարարում է մկրտության ժամանակ, այսինքն ենթակային քրիստոնեացման խորհրդի կատարման ընթացքում: Այսպես պետք է ասենք, որ այս խորհուրդը, հոգ չէ թե ինչ անուն ենք տալիս անոր՝ Վերջին Օծում կամ հիվանդաց Օծում, այժմ չի կիրարկվում մեզանում: Մաշտոցում մեր ունեցած համապատասխան կանոնը լոկ հիվանդաց աղոթք է եւ **խորհուրդի հանգամանք չունի:**

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասվածաբանության վերջին մասը մի կերպով լուսաբանություն ու բացատրությունն է ՀԱՎԱՏԱՄՔԻ վերջին մասի. «Հաւատամք... ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս»:

Քրիստոնեական հասկացողությամբ երկրավոր կյանքը ոչ միայն Աստծու մեկ շնորհն է այն ապրելու եւ վայելելու համար, այլ նաեւ **փորձի** եւ **պատրաստության** մի շրջան անդենական կյանքի համար: Հանդերձյալ կյանքը շարունակությունը եւ կատարումն է ներկա կյանքին: Հանդերձյալ կյանքի հետ կապ ունեցող բոլոր վարդապետական ճշմարտությունները եւ եկեղեցու ուսմունքը կոչվում է **«վախճանաբանություն»**, եվրոպական բառով՝ , այսինքն մարդկային կյանքի վերջին դեպքերի եւ նրանց հետ կապված կրոնական ուսմունքների գիտությունը:

Պետք է գիտենալ, որ բոլոր կրոնական ճշմարտությունները, մեջը լինելով Եկեղեցու այսպես կոչված «վերացական վարդապետությունները», ունեն իրենց կարելոր գործնական արժեքը: Այս հաստատումը հատկապես շիտակ է հանդերձյալ կյանքի հետ կապ ունեցող ճշմարտությունների մասին, որովհետեւ նրանք են, որ առավելապես ուղղություն են տալիս ներկա կյանքին: Գերեզմանից այն կողմ գոյություն ունեցող երջանկությունը եւ երանությունը խթան է մեզի համար, որպեսզի բարի գործերի հետամուտ լինենք, իսկ անդենական կյանքում հավանական դատապարտումը եւ տանջանքի հավանականությունը ինքնին խթան են չար գործերից հեռու մնալու այս կյանքում:

Տրամաբանորեն այս նյութը պետք էր սկսել խոսել նախ **հոգու** եւ նրա **գոյության** մասին, սակայն այս նյութը ինքնին մի ընդարձակ հարց լինելով, եւ նրա քննությունը ավելի շուտ իմաստասիրության կալվածում ընկնելու պատճառով, առայժմ զանց ենք անում այդ մասին խոսելը եւ անմիջապես անցնում ենք հոգու՝ մահվանից հետո ունեցած **վիճակների** մասին:

Ս. Գիրքը բացահայտորեն սովորեցնում է, որ հանդերձյալ կյանքում մարդու ունենալիք **վիճակը որոշվելու** է ելնելով այն կյանքից, որը նա վարել է այս աշխարհում: Քրիստոս՝ բարձրագույն դատավորը, «հատուցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր», որոնք կատարել է մարդ այս աշխարհում: (Մատթ. ԺԳ 27, Հայտ. ԻԲ 12):

Մեր ներկա աշխարհի փորձառությունը փաստում է վերելում հիշված հաստատումը: Արդարեւ մի չափահաս մարդու վիճակը այս երկրում մեծ մասով որոշվում է այն կյանքից, որը վարել է նա իր երիտասարդության եւ մանկության ժամանակ: Մարդ մանկության, հատկապես երիտասարդության ժամանակ ինչ որ ցանած է, այն էլ հնծելու է չափահասության եւ ծերության տարիքում: Եթե մարդ իր երիտասարդության տարիքում չի աշխատել, կամ վատնել է իր շահը, ծերության մեջ բնականաբար աղքատ է մնալու, եւ փոխադարձաբար: Եթե մարդ իր երիտասարդության ժամանակ արբեցությամբ կամ ուրիշ մոլություններով չարաչար գործերի իր մարմինը բնականաբար տկար եւ հիվանդակախ մի ծերություն է ունենալու: Բնական ու բարոյական այս օրենքը, որ այժմ ընդհանրապես տիրում է այս աշխարհում, ի գորու պիտի լինի նաեւ հոգեւոր եւ հանդերձյալ կյանքի համար էլ:

Ֆիզիկական մահը, այսինքն մարմնի եւ հոգու իրարուց բաժանումը, տիեզերական մի իրողություն է: Այս դառն իրողությունը սակայն իր ահազդեցիկ երեւոյթից շատ բան է կորցնում նրանց համար, ովքեր հավատում են հոգու անմահության: Խնդիր է, թե ի՞նչ է տեղի ունենում մահից անմիջապես հետո:

Քանի որ մարդու հետ մահու վիճակը որոշվում է այս աշխարհում նրա ունեցած կյանքով, եւ քանի որ հանդերձյալ կյանքի երջանկությունը Աստծու մեկ շնորհքն է, իբրեւ արդյունք Քրիստոսի կատարած փրկագործության, ուրեմն կարող ենք հետեւեցնել, որ մարդու անդենական կյանքը պիտի ճշտվի Քրիստոսի փրկագործության նկատմամբ իր բռնած դիրքից:

Այսինքն մարդ ընդունա՞ծ է Քրիստոսի փրկչական դերը, եւ ըստ այնմ ապրա՞ծ է, թե՞ մերժած է իրեն եղած շնորհքը: Երկրորդ հարցն է, թե միանգամ Քրիստոսի փրկարար շնորհների շրջանակից ներս մտնելուց հետո մնացա՞ծ է այդ շրջանակում, թե՞ դուրս է ընկել նրանից ուրացությամբ կամ մեղքով: Այս հարցումներին տրված պատասխանին համաձայն մարդ պիտի ՓՐԿՎԻ կամ ՂԱՏԱՊԱՐՏՎԻ:

Ա.- **Միջին Վիճակ.**- Մահից մինչեւ վերջին դատաստանը հոգիներին վերապահված կացությունը կոչվում է **միջին վիճակ**: Ու՞ր եւ ի՞նչ գտնվում են մեր հոգիները իրենց մարմիններից անջատվելուց հետո: Վերելում հիշված ՓՐԿՎԵԼԸ եւ ՂԱՏԱՊԱՐՏՎԵԼԸ մահից անմիջապե՞ս հետո է տեղի ունենում, թե՞ վերջին դատաստանում: Ուրիշ խոսքով Ընդհանրական կամ Վերջին դատաստանից առաջ **Մասնավոր կամ Անհատական դատաստան** տեղի ունենո՞ւմ է հոգիների համար: Այս հարցերում մեր Եկեղեցու ուսուցումը տարբերվում է հույն եւ լատին Եկեղեցուց ուսմունքից:

Լատին Եկեղեցին բացահայտ ընդունում է «Առանձնական դատաստանի» վարդապետությունը, որի համաձայն յուրաքանչյուր մարդ իր մահից անմիջապես հետո ենթարկվում է դատաստանի եւ իր գործերի եւ իր հավատքի համաձայն ուղարկվում է Արքայություն, քավարան կամ դժոխք: Այս վարդապետությունը նրանք հիմնում են առաքելական սա խոսքի վրա. «Կայ մնայ մարդկան մի անգամ մեռնել, եւ **յետ այնորիկ դատաստան**» (Եբր. Թ 27): Ուր «յետ այնորիկ» բառերը հասկանում են մահից **անմիջապես** հետո: Սակայն այդ բառերը անհրաժեշտաբար **անմիջականություն** չեն ենթադրում, «յետ այնորիկ» միտքը կարող է տարածվել մինչեւ վերջին դատաստանը: Իսկ գլխավոր փաստը նրանք սակայն հիմնում են Աղքատ Ղազարոսի եւ Մեծահարուստի առակի վրա: Ըստ այդ առակին, երբ մեռնում տարվում է «ի գոգն Աբրահամու»: Իսկ հարուստը «ի դժոխս ամբարձ գաչս իւր մինչ ի տանջանս էր»: Ուրիշ խոսքով իրենց մահից հետո մին արքայություն գնաց եւ մյուսը՝ դժոխք: (Ղուկ. ԺԶ 19-31): Սակայն պետք է գիտենալ, որ պատմվածքը **առակ** է լոկ, եւ ոչ թե **հայտնություն**: Առակին նպատակն է ոչ թե երկնային վիճակներ ներկայացնել եւ ոչ էլ մի անմիջական կամ առանձին դատաստանի գոյությունը հաստատել, այլ սովորեցնել, թե այս կյանքում մարդուն ապրած կենցաղին համաձայն փոխարինություն է լինելու հանդերձյալ կյանքում: Այս իրողությունը հաստատում է մեր շարականը. «**Որ զհամօրեն** (ոչ թե առանձնական) դատաստանին **օրինակ** նշանակեցեր առ մեծատունն եւ զՂազարու ներհակաբար տալով զոր աստ ընկալան»: Բացի դրանից պետք է գիտենալ, որ հայերեն «**դժոխք**» բառը առհասարակ համապատասխանում է «շեհոլ» եւ հունարեն «հատես» բառերին, որոնք անպատճառ տանջավայրեր չեն նշանակում, այլ հոգվոց կայարան: Արդարեւ, հունարեն բնագրում այս առակի «դժոխք» բառին դեմ կա «հատես» բառը, իսկ բուն տանջավայրի համար գործածված բառն է, թե եբրայեցերենի, եւ թե հունարենի մեջ, «**զեհեն**»: Բացի դրանից՝ չի ասվում մեծատան **հոգին**, կամ Ղազարոսի **հոգին** դժոխք կամ ի գոգն Աբրահամու գնացին, այլ նույնինքն **մեծատունը** եւ **Ղազարոսը**: Ղարծյալ՝ տանջանքի մեջ եղած «**հոգին**» ջուրի կաթիլով չի զովանում: Այս բոլորով ասել ուզվում է, որ այս առակը իր բոլոր մանրամասնության մեջ չենք կարող կիրարկել անդենական կյանքի զանազան վիճակները ճշտելու համար: Դրանից բացի առակը խոսված ժամանակ փրկագործությունը դեռ չէր կատարված, քանի որ դեռ Հիսուս չէր խաչված, ուստի արքայության ճամբան դեռ չէր բացված: Հետեւաբար առակի միջի «**Դժոխք**» եւ «գոգն Աբրահամու» բառերը պարզապես նշանակում են **մեղավորների կայան** եւ արդարների կայան:

Կա նաեւ լատինաց կողմից իբրեւ փաստ, աջակողմյան ավագակին Քրիստոսի ասած խոսքը. «Այսօր ընդ իս իցես ի դրախտին» (Ղուկ. ԻԳ 43): Պետք է գիտնալ, որ Քրիստոս **«այն օր» «դրախտ»** չգնաց, այլ ըստ ուսուցման Ս. Գրոց եւ Եկեղեցու «հոգւովն իջեալ ի դժոխս... քարոզեալ հոգւոցն»: Կամ ինչպես Պետրոս առաքյալն է ասում. «մեռաւ մարմնովն եւ ոգւոցն որ էին **ի բանտին երթեալ** քարոզեաց» (Ա Պետ. Գ 19): Այդ խոսքով Հիսուս փրկության գրավական է տալիս ավագակին, թե արքայության պիտի արժանանա ի վերջո, **այդ օրից «դրախտի»** արժանացած լինելով: Ավագակն էլ ինքը իր երջանկությունն է խնդրում ասպագայի համար: «Յիշեա զիս Տեր, **յորժամ գայցես**, արքայութեամբ քով» եւ Հիսուս նրան ոչ թե արքայություն է խոստանում, այլ՝ **դրախտ**, որ անպատճառ երկնքի արքայություն չի

նշանակում, այլ անմեղների կայան, քանի որ Ադամի անմեղության վիճակում ունեցած բնականության վայրի անունն էր դրախտ: «Քրիստոսի ժամանակ հրյաները դրախտ բառով հասկանում էին երանելիների կայան, ուր արդարներն էին բնակվելու մինչև մեռյալների հարությունը» (Քննկն. Կրոնագիտութ. էջ 1014): Ուրեմն Քրիստոս ավագակին խոստանում է ոչ թե երկնքի արքայություն առաջնորդել, այլ, այսպես ասած, մտցնել այն կայանը, որ հատուկ էր արքայություն գանցողներին, այսինքն «դրախտը», ուր արդարեւ մտավ ավագակը նույն օրն իսկ:

Առանձնական դատաստանի վարդապետությունը ծագում է սա մտածումից, թե արդար հոգիների համար զրկանք կլինի, եթե նրանք չվարձատրվեն իրենց մահից անմիջապես հետո եւ սպասեն մինչև վերջին դատաստանին՝ վարձատրվելու համար: Այդ վիճակում նրանք անորոշության ու անձկության են մատնվում, թե ինչ պիտի լինի արդյոք իրենց դատավճիռը: Հետեւաբար, խորհեցին մի քանիսը, հոգիները այս կյանքից անմիջապես որ փոխվում են, ենթարկվում են առանձնական դատաստանի եւ իրենց վարձքը (կամ պատիժը) ընդունում են նախ քան հասարակաց դատաստանը: Իսկ մեռելների հարության ժամանակ իրենք էլ հարություն են առնում, այսինքն նոր մի մարմնի տիրանալով, ենթարկվում են վերջին դատաստանին:

Նման մի տեսություն Վերջին Դատաստանի ուժը, նշանակությունը եւ անհրաժեշտությունը տկարացնում է, չասելու համար բոլորովին ջնջում է: Եթե վարձքն ու հատուցումը արդեն իսկ Վերջին Դատաստանից առաջ տրված է, այլեւս ի՞նչ հարկ է մնում հրապարակային դատաստանը: Ավետարանում շեշտվածը եւ ի հավատոց եղողը Վերջին Դատաստանն է, որ տեղի պիտի ունենա Քրիստոսի երկրորդ գալուստից հետո միայն, հետեւաբար առանձնական դատաստանի վարդապետությունը ոչ միայն Ս. Գրական չէ, այլ նաեւ տրամաբանական չէ, եթե Վերջին Դատաստանը անհրաժեշտություն եւ հավատքի մի տվյալ է:

Եթե մերժենք առանձնական դատաստանի վարդապետությունը, հարց է ծագում, թե մինչև Վերջին Դատաստան հոգիները ի՞նչ վիճակով են մնում:

Այս մասին Աստվածաշնչից ոչ մի հայտնություն չունինք, սակայն մեր Եկեղեցու տեսակետը այն է, թե մեռնողների հոգիները սպասում են օթեւանների կամ կայանների մեջ մինչև հարության օրը: Միայն թե բոլոր հոգիները հասարակաց կայանների կամ օթեւանների մեջ չէ որ դադար են առնում, այլ կան արդարների օթեւաններ եւ կան մեղավորների օթեւաններ: Այդ մասին Քրիստոս ասեց. «Ի տան Հօր իմոյ օթեւանք բազումք են» (Հովհ. ԺԴ 2): Կամ ինչպես Շնորհալին է ասում «Հաւատով խոստովանիմ» աղոթքում. «Հանգչիլ յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քոյ»:

Հոգիները իրենց վարձքին կամ հատուցմանը բոլորովին էլ անտեղյակ չեն լինում, այլ անդենական աշխարհի մտնելուց հետո մի կերպ զգում են, թե իրենց համար վա՞րձք թե հատուցմունք պատրաստված է, եւ դրա համաձայն էլ վարձքի հույսով արդարները հրձվում են, իսկ հատուցման ակնկալությամբ մեղավորները տանջվում են: Հաճախապատում գրքում ասվել է. «Արդարների հոգիները ուր որ էլ լինեն, նրանք Աստծու կենդանի խնամքն են վայելում... նրանք՝ որ պիտի ժառանգեն խավարը...: Հոգիները ընդունվում են իրենց արժանավորության համաձայն զանազան օթեւաններում... մեղավորների համար եղած տառապանքները տրտմության մեջ են պահում մեղավորների հատուկ կայաններում ապրող հոգիներին, որոնք, յուրաքանչյուրը ըստ իր մեղքին, իր որոշ տեղն ունի, եւ տեսիլքի ձեւով տեսնում է այն արդար հատուցումը, որ լինելու է իրենց մեղքերի իբր հատուցում... այս հոգիները վախով եւ տրտմությամբ սպասում են մինչև հասարակաց հարությունը: Չի յուրաքանչյուրը առնելու իր վարձքը հասարակաց հարության ժամանակ: Իսկ սուրբ եւ բարի հոգին հույսով գվարձանում է հրեշտակների հետ, ի փառս Ամենակալին, իբրեւ թե առած լինեք երկնքի արքայությունում տրվելիք երջանկությունը»: Ոսկեբերան հայրապետն էլ ասում է. «Հայտնի է, թե երբ հոգիները այստեղից մեկնում են, գնում են մի տեղ եւ դադար են առնում... եւ սպասում են ահավոր դատաստանի օրվան»: Մարտիրոսներին նվիրված շարականներից մեկի մեջ ասվում է. «Կամաւ մատուցին զանձինս իւրեանց քեզ պատարագ արեամբ իւրեանց, եւ **ակն ունէին պսակիլ** ի քէն Տէր... Որ գոժոխս աւերեցեր եւ զգերեալսն **վերածեր** Ի ՅՈՅՍ կենաց յաւիտենից»: Ղերուբնա Եղեսացու գրքում ասված է. «Հոգիները երբ մարմնից ելնում են, չեն մեռնում, այլ ապրում են եւ նրանք հանգստյան օթեւաններում սպասում են Վերջին Դատաստանին»:

Տեր Սարգսյան քահանան իր ՔՆՆԱԿԱՆ ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ գրքում հետեւյալ մեջբերումն է անում մի եվրոպացի հեղինակից (էջ 1009). «Հուստինոս վկա, Երանոս,

Տերտուղիանոս, Օգոստինոս եւ ուրիշներ հավատում էին, թե երկինքը մինչեւ դատաստանի օրը պիտի չբացվի... սրանից բացի Ռոզինես, Ս. Աբրիսիոս, Ս. Բեռնատրոս եւ Հռոմի պապերից շատերը այսպես էին հավատում, եւ այս մտքի դեմ 1400 տարի շարունակ որեւէ ընդհանրական ժողով ոչինչ չասաց,

դոթքի մասին: Այս մասին կանխագույն ակնարկությունը գտնվում է Բ. Մակաբայեցիների գրքում ԺԲ 43-ում Հուդա Մակաբե «քաջութեամբ խորհրդովք չորս սատերս կրկին ժողովէր եւ տայր տանել յերուսաղեմ, մատուցանել պատարագս վասն մեղացն. կարի բարութք իմաստութեամբք. զի վասն յարութեան մեռելոց խորիէր առնել զոր առնէր: Զի եթե յարութեան ակն ոչ ունէր, անկելոցն ի պատերազմին զուր տարապարտուց լինէր **վասն մեռելոցն աղօթս** մատուցանել: Այլ հայէր նա ուղիղ ննջեցելոցն գեղեցիկ պահեալ զշնորհս պարգեւաց, արութեամբ քաջութեան վասն մեռելոցն զմտաւ ածէր, այց լինել մեղացն թողութեան»:

Եկեղեցու ժամակարգությունը, նախնական Եկեղեցու սովորությունը, եկեղեցական հայրերի գրությունները, բոլորն էլ վկայում են այն հավատի մասին, թե աղոթքով, բարեգործությունով, Ս. Պատարագով, հոգեհանգիստով, մատաղներով, որոնք երբ կատարվեն ննջեցյալի համար, նրանց անունով եւ նրանց կողմից, օժանդակություն եւ հանգիստ շնորհվում է նրանց, ովքեր մեռել են հավատքով եւ ներելի մեղքերով: Շեշտել պետք է, որ ննջեցյալները իրենց մեղքերի կապանքներից ազատվում են ոչ թե իրենց ճիգերով եւ ոչ էլ որեւիցէ արժանիքի շնորհիվ, այլ Եկեղեցու բարեխոսությամբ: Որովհետեւ որչափ որ մեզի հայտնվել է անդենականում, հոգին ոչ կարող է արժանիք չափել, ոչ էլ հառաջադիմել: Որքան ժամանակ որ մենք այս երկրում ապրում ենք, կարելիությունը ունենք ապաշխարելու եւ մեղքերի արձակում ստանալու: Այս կյանքից հեռանալուց հետո նման մի գործ անկարելի է: Անդենականում թերեւս կարող լինենք զղջալ մեր մեղքերի համար, բայց հատուցում չենք կարող անել նրանց: Միայն Ս. Պատարագը, հոգեհանգիստը եւ ննջեցյալների անունով կատարված բարեգործությունները կարող են օգնել ննջեցյալին եւ ազատել նրան «Ի դրանց դժոխսց»:

Ուրեմն Զինվորյալ Եկեղեցու անդամները իրենց ննջեցյալ սիրելիների համար Ս. Պատարագ եւ հոգեհանգիստ կատարել տալով, ինչպես նաեւ նրանց անունով բարեգործություններ կատարելով, նրանց համար անում են այն, ինչ որ կարող են անել ննջեցյալները իրենք իրենց համար: Լատինական Եկեղեցու այն ուսմունքը, թե քավարանի կրակը կամ այլ պատիժներ մաքրում են հոգին մահից հետո, հստակ չէ արեւելյան Եկեղեցիների ուսմունքի մեջ: Այսքանը ասենք, որ եթե տանջանքը ինք իր մեջ քավչարար մի հատկություն ունի, այն ժամանակ այդ նշանակելու էր, թե դժոխքի բոլոր բնակիչները ի վերջո, ուշ կամ շուտ, պիտի արժանանան երկնքի արքայությանը: Սակայն Ավետարանը ուսուցանում է, որ դատաստանից հետո փրկություն չի լինելու. արդարները գնալու են ի **կեանս յաւիտենականս** եւ մեղավորները՝ ի տանջանս յաւիտենականս: Իսկ Միջին Վիճակում կրված տանջանքները քավչարար հատկություն ունեն թե ոչ, այդ էլ մեզ հայտնված չէ: Ամեն պարագայի ննջեցյալին օժանդակողը Զինվորյալ Եկեղեցու կամ նրա անդամների միջնորդությունն է եւ բարեխոսությունը Աստծու առջեւ, որպեսզի Ան ներե մեր սիրելի ննջեցյալի մարդկորեն գործած մեղքերը: Ննջեցյալների համար եղած աղոթքներն էլ ենթական են աղոթքի ընդհանուր օրենքներին, այսինքն սրտանց եւ անկեղծ պետք է լինի եւ Աստծու օրենքին եւ կամքին համաձայն պետք է լինի: Եւ մեր աղոթքը ներելի մեղքերի համար պետք է լինի, որովհետեւ «են մեղք որ մահու չափ են», որոնց համար Հովհաննես առաքյալ չի հանձնարարում աղոթել: Ու որովհետեւ առհասարակ չենք իմանում որոնք են «մահու չափ մեղանչողներ», եւ որոնք առ ի մահ չեն մեղանչած, հետեւաբար Եկեղեցին աղոթում է **բոլորի** համար:

Ի՞նչ է նշանակում հիշել **սրբերին** Ս. Պատարագում: Խոսքով Անձեւացին այսպես է բացատրում այս խնդիրը. «Իսկ եթե ասիցէ ոք թե զհարդ եւ զարդարսն յիշատակէ աստ իբրեւ զկարոտս որոց եւ մեք իսկ ակն ունինք բարեխոսութեան նոցին, այսպէս իմասցիս: Քանզի թէպէտ փառաւորեցան նոքա եւ հանգեան, սակայն ոչ բնաւ ի լրումն հասին, չէ հնար թէ կատարումն լիցի, քանզի իմաստութիւն է հոգեւոր եւ գիտութիւն աստուածային: Արդ եթէ այսմ երկրաւոր գիտութեանս չէ հնար թէ լրումն լիցի, որչափ եւս առաւել այնմ որ իմանալին է եւ աստուածային, այլ հանապազ օր ըստ օրէ փառաց ի փառս վերանան, որպէս եւ

հրեշտակք. զի յամենայն աւուր նոր գիտութիւն եւ իմաստ առնուն յԱստուծոյ: Վասն այսորիկ նախ նոցա հայցէ Քրիստոսէ զողորմութիւն եւ ապա զայլսն յիշէ» (Մեկնթ. Ս. Պատարագի):

Մեռելոցի համար մի ուրիշ կարեւոր արարողության ակնարկությունը կա Պողոս առաքյալի Ա. Կորնթ. ԺԵ 29 համարում. «Ապա թէ ոչ՞ զի՞նչ գործիցեն որ **մկրտիցինն վասն մեռելոց**, եթէ արդարեւ մեռեալք ոչ յառնիցին, ընդէ՞ր իսկ **բնաւ մկրտին վասն նոցա**»: Հավանաբար այս **վասն մեռելոց մկրտվելը** ուրիշ բան չէր, եթե ոչ անկունք մեռնողների քրիստոնյա ազգականների կողմից նրանց անունով մկրտվելը, որը մեռյալների համար աղոթելու սկզբունքից է բխում:

Եկեղեցին չի աղոթում հեթանոս, հերետիկոս, անհավատ եւ անկրոն մեռյալների համար: Իսկ ի Քրիստոս ննջողների ներելի սխալների համար քավություն եւ թողություն է խնդրում եւ ոչ թե նրանց մահու չափ մեղքերի համար: Որովհետեւ մեր Իզնատիոս Շնորհալի վարդապետը այսպես է արտահայտվում մեռյալների մահացու մեղքերի մասին. «Ապա թէ ընդ մեզ մտանեն մեղքն մեր ի գերեզմանս մեր, այնուհետեւ նախանձ հրոյն է որ ուտէ զհակառակորդս, եւ ոչ գտանել ուրուք արտասուօք թողութիւն» (Մեկնթ. Ղուկ. էջ 328-329): Հետեւաբար որչափ որ Եկեղեցին աղոթում է բոլոր ննջեցյալների համար, ասկայն ոչ ոք իր հույսը այդ աղոթքին վրա դնելով անհոգ պետք չէ որ մնա իր հոգեկան փրկության համար: «Մի ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունել մեզ: Զի ի ժամանակի ընդունելութեան, ասէ (մարգարէն Եսայի) լուայ քեզ, եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ, ահաւասիկ ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան» (Բ կորնթ. Զ 1-2): Փրկության ժամանակաշրջանը հիմա է, երբ ապրում ենք երկրում, մեռնելուց հետո, որչափ որ մենք գիտենք, ապաշխարելու եւ հետեւաբար փրկվելու հնարավորության չկա:

Է. Երկրորդ Գալուստ Քրիստոսի.- Ավետարանական է Եկեղեցու այս ուսմունքը, թե Քրիստոս ի կատարած աշխարհի գալու է աշխարհ՝ դատելու բոլոր մարդկանց: Եկեղեցու հիմնական վարդապետություններից մեկն է այս: Հավատամքի մեջ այս մասին ասվել է. «Գալոց է (Քրիստոս) նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս»: Իսկ Ավետարանում ասվել է. «Յայնժամ տեսցեն զՈրդի Մարդոյ եկեալ ամպովք եւ զօրութեամբ եւ փառօք բազմօք: (Մարկ. ԺԳ 26): «Այս Հիսուս որ վերացան ի ձեռն յերկինս՝ սոյնպէս եկեսցէ զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս» (Գործք. Ա 11):

Հիսուսի առաջին գալուստը, այսինքն ծնունդը կամ մարդանալը եղավ **խոնարհությանմբ**: Իր առաջին գալուստն նպատակն էր փրկել մարդկանց մեղքի կապանքներից: Իսկ երկրորդ գալուստը լինելու է **փառքով**: Եւ երկրորդ անգամ գալուն նպատակը պիտի լինի **դատել** արդարներին եւ մեղավորներին, այսինքն վարձատրել արդարներին եւ դատապարտել մեղավորներին:

Քրիստոսի երկրորդ գալուստյան ժամանակը մեզի հայտնված չէ. «Վասն աւուրն այնմիկ եւ ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս եւ ոչ Որդի, բայց միայն Հայր» (Մարկ. ԺԳ 32): Այսուհանդերձ երկրորդ գալուստը կանխող մի շարք նշաններ տրվել են:

Ավետարանը քարոզված է լինելու բոլոր ազգերին (Մարկ. ԺԳ 10):

Իսրայելը հավատալու է Քրիստոսի (Ովսէ Գ 5, Հռոմ. ԺԱ 25-26):

Նեռը կամ հակա-Քրիստոսը երեւալու է (Մարկ. ԺԳ 5-6, Բ Թեսալ. Բ 2-11):

Քրիստոնյաներից շատերը հեռանալու են ճշմարտությունից եւ ընկնելու են սուտ մարգարեների ազդեցության տակ:

Պատերազմներ են լինելու:

Բնության մեջ էլ տակնուվրայություններ են լինելու:

Քրիստոսի երկրորդ գալուստը անակնկալ կերպով տեղի պիտի ունենա, ոչ ոք պիտի գիտնա անոր ժամանակը: Հանկարծահաս պիտի գա ջրհեղեղի պես եւ պիտի լինի փայլակի պես արագ եւ ահեղասաստ. «Եւ որպէս յաւուրսն Նոյի, սոյնպէս եղիցի գալուստն Որդւոյ Մարդոյ. զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին, ըմպէին, զկանայս առնէին, եւ արանց լինէին, մինչեւ յօրն յորում եմուտ Նոյ ի տապանն, եւ ոչ գիտացին՝ մինչեւ եկն ջրհեղեղն եւ եքարձ զամենեսին, այնպէս եղիցի եւ գալուստն Որդւոյ Մարդոյ» (Մատթ. ԻԴ 38-39):

Ը. Հարություն Մեռելոց.- Այս ուսուցմունքն էլ ավետարանական է եւ հետեւաբար հավատքի հանգանակի մասն է կազմում. հավատամք «ի յարութիւն մեռելոց» ասվել է հավատամքի մեջ: Մեռելոց հարություն ասելով հասկանում ենք մեռած մարմինների հառնելը եւ նրանց վերամիավորումը իրենց հոգիների հետ, Աստծու զորությամբ եւ ներգործությամբ: Անկարելի չէ Ամենակալ Աստծու համար, որ հողից ստեղծեց մարդուն, նրա մարմնի կազմալուծվելուց եւ հող դառնալուց հետո վերստեղծել այն: Սակայն պետք չէ խորհիլ, որ

այս հարուցյալ մարմինը հողեղեն է լինելու, որովհետև հողեղենը ի վերջո ենթակա է ապականության: Այլ ըստ Նոր Կտակարանի ուսուցմանը, հատկապես Ս. Պողոսի քարոզության համաձայն, մառյալները հառնելու են **անապական, հոգեւոր եւ փառավորյալ** մարմիններով: Մարմինները ըստ ձեւի նույնը պիտի լինեն, բայց տարբեր պիտի լինեն իրենց հատկություններով եւ կարողություններով: Հրեշտակների նման պիտի լինեն, ամուսնական վիճակի ենթակա պիտի չլինեն, անմահ պիտի լինեն եւ իրենց «փառքը», այսինքն փայլն ու գեղեցկությունը համաձայն պիտի լինի այն հոգեկան վիճակին, զոր ունեցած են աշխարհի վրա: Ուրիշ խոսքով Քրիստոսի հարության համապատասխան պիտի լինի մեր հարությունը: Քրիստոս թեւ հարություն առավ «նովին մարմնով», բայց իր հարությունից առաջ ունեցած մարմնույն եւ հարությունից հետո ունեցած մարմնույն միջեւ մեծ տարբերություն կար: Հիսուսի հարուցյալ մարմինը ըստ պարագային կարող էր թանձրանալ եւ տեսանելի ու շոշափելի դառնալ, եւ ըստ պարագային՝ աներեւութանալ եւ նյութական իրերի միջից, այսպես ասած, «անցնել»: Բնականաբար **մարմինների** ոգեղեն հատկությամբ օժտված լինելը, ըստ երեւոյթին, հակառակ է ֆիզիկական գիտության ծանոթ օրենքներին. հարուցյալ մարմնի հատկությունները չենք կարող հաշտեցնել ֆիզիկայի եւ քիմիայի մեզի ծանոթ օրենքներին: Այս հարցը իր լուծումը կարող է գտնել լոկ այն հավատքով, թե ներկա այս թանձր եւ միայն մեր մեր մարմնական զգայարաններով միայն ըմբռնելի նյութից, ուժերից եւ երեւոյթներից վեր կան գերբնական ուժեր եւ օրենքներ, որոնք Արարիչ Աստծու զորությամբ կարող են փոխվել եւ կատարելագործել բնական գիտության մեզի ծանոթ օրենքները:

Նոր Կտակարանի մեջ բազմաթիվ են մեռելների հարության մասին տեղիքները. ահա մի քանի նմուշներ. «Այլ վասն յարութեան մեռելոց՝ զի յառնեն ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ի գիրս Մովսէսի» (Մարկ. ԺԲ 26): «Որպէս Ադաման ամենեքին մեռանին նոյնպէս եւ Քրիստոսի ամենեքին կենդանասցին. իւրաքանչիւրն իւրում կարգի, նախ Քրիստոս եւ ապա քրիստոնէայք ի գալստեան Նորա» (Ա Կորնթ. ԺԵ 22-23 եւ ամբողջ այս գլուխը Քրիստոսի եւ մեռելոց հարության մասին է): «Զի եկեսցէ ժամանակ յորում ամենեքին որ ի գերեզմանսն կայցեն՝ լուիցեն ձայնի նորա, եւ եկեսցեն արտաքս, որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց. եւ որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց» (Հովհ. Ե 29-30):

Իսկ հարությունը ինչպե՞ս պիտի տեղի ունենա: Այս մասին էլ մեր գլխավոր աղբյուրներից մեկը Ա. Կորնթ. ԺԵ գլուխն է: «Այլ ասիցէ ոք, զիա՞րդ յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով գայցեն»: Հարցունը ինքնին առաքյալն է դնում եւ ինքն էլ դրան պատասխանում է ըստ հետեւյալին, որը իր կարելորության համար առաջ ենք բերում ամբողջությամբ աշխարհաբարով. «Անմիտ, այն, որը դու սերմանում ես՝ չի կենդանանալու, եթե չմեռնի ինքը, քո սերմանածը բուսանելի մարմինը չէ, այլ մի մերկ հատիկ, ցորենի կամ որեւէ մի ուրիշ սերմի: Եվ Աստված (այդ մերկ հատիկին) իր ուզած մարմինն է տալիս, յուրաքանչյուր սերմին՝ իր մարմինը: Ամեն մարմին ունեցողը նույն մարմինը չունի, տարբեր է մարդոց մարմինը, տարբեր՝ ձկների մարմինը. կան երկնավոր մարմիններ, կան նաեւ երկրավոր մարմիններ: Երկնավոր մարմինները տարբեր փառք ունեն, երկրավոր մարմինները՝ տարբեր: ...Նույնպես մեռյալների հարության պարագային. (մարդու մարմինը /սերմանվում է/ թաղվում է) ապականությամբ եւ հարություն է առնում անապական: Սերմանվում է անարգությամբ եւ հարություն առնում փառքով. սերմանվում է տկարությամբ եւ հառնում է զորությամբ: Սերմանվում է շնչավոր մարմին եւ հառնում հոգեւոր մարմին. եթե շնչավոր մարմին կա, կա նաեւ հոգեւոր մարմին... Ինչպես որ հազանք հողեղենի, Ադամի պատկերը, նույնպես էլ պիտի հազանք երկնավորի (հարուցյալ Քրիստոսի) պատկերը»: Ապա ավելացնում է իբրեւ կարելոր լուսաբանություն եւ հորդորական. «Եղբայրներ, գիտցած եղեք, որ մարմինն ու արյունը (նյութական մարդը) Աստծու արքայությունը չի ժառանգել. ոչ էլ ապականացուն (մարմինը) անապականությունը...: Որովհետեւ փողը հնչելու է եւ մեռյալները հարություն են առնելու անապական կերպով, եւ մենք կնորոգվինք: Որովհետեւ պետք է մեր այս ապականության (ենթակա մարմինը) հազնի անապականություն, եւ մեր այս մահկանացու մարմինը տիրանա անմահության»:

Ուրիշ խոսքով հարուցյալ մարմինը պիտի լինի.

Անչարչարելի, այսինքն ցավերից եւ կիրքերից զերծ.

Լուսավոր. «Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից» (Մատթ. ԺԳ 43):

Հոգեւոր, այսինքն զերծ նյութի օրենքներից եւ կապանքներից:

Իսկ տարիքի եւ ֆիզիկական պակասությանց կապակցությամբ Ավետարանում ոչինչ չէ ասվել, բայց առհասարակ աստվածաբանների կարծիքն այն է, որ գեթ ֆիզիկական պակասությամբ մեռնողները կատարյալ վիճակում պիտի հառնեն:

Թ.- Վերջին Ղատաստան.- Բնականաբար Այս դատաստանը տեղի պիտի ունենա Քրիստոսի երկրորդ գալուստից եւ մեռյալների հարությունից անմիջապես հետո: Ղատավորը պիտի լինի նույնիսկ Քրիստոս: Իսկ դատաստանի չափանիշը պիտի լինեն մեր գործերն ու հավատքը: Ղատաստանի արդյունքը կլինի հավիտենական կյանքը արդարների համար եւ հավիտենական տանջանքը կամ պատիժը մեղավորների համար: Ուրիշ խոսքով արդարները ժառանգելու են Աստծու թագավորությունը, իսկ մեղավորները նետվելու են դժոխքի կրակի մեջ:

Երկնքի արքայության արժանացածների վարձքը պիտի լինի նախ հավիտենապես գերծ մնալ ֆիզիկական եւ երկրավոր կյանքի հատուկ ցավերից, տառապանքներից, ապականությունից եւ մահից: Այս բոլորը բարիքի ժխտական երեսն է, իսկ դրական կողմն է վայելել Աստծու տեսության եւ ներկայության երջանկությունը, որը հատուկ բառով կոչում ենք **Երանական Տեսություն:** Հավիտենական կյանքի բարիքներից մեկն էլ վայելելն է մյուս արդարների սիրալիր ընկերությունը:

Այն երջանկությունը, որը վայելելու են արդարները, մի գերաշխարհիկ բան լինելով, մարդկային բառերով այն բացատրելը անկարելի է, որովհետեւ երկնային եւ հեռավոր բաները մարդկանց համար անըմբռնելի, եւ հետեւաբար, աննկարագրելի են: Պողոս առաքյալ օրինակ, իր հափշտակության պահերից մեկում ինքն իրեն գտավ հոգեպես երկնքում, բայց հետո այնտեղ իր տեսածները չկարողացավ մարդկային լեզվով նկարագրել (Բ Կորնթ. ԺԲ 4): Մի ուրիշ տեղ նա ասում է. «Ձոր ակն ոչ տեսա, եւ ունկն մարդոյ ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց» (Ա Կորնթ. Բ 9):

Իսկ մեղավորների տանջանքը պիտի լինի նախ զրկված լինել ամեն տեսակ ուրախությունից եւ մխիթարությունից, մանավանդ Աստծու տեսության առթած երանությունից: Մյուս կողմից իրենց խիղճը պիտի տանջե նրանց, ենթարկվելու են նաեւ մի շարք արտաքին պատիժների, որոնք որդերով եւ անմար կրակներով են բացատրվում: Վերջին դատաստանի մասին, այսինքն արդարներն ու մեղավորները իրարուց բաժանելու գործողության կապակցությամբ բազմաթիվ առակներ խոսեց մեր Տերը, որոնցից գլխավորներն են «Լյծերի եւ Ոչխարների» առակը, «Լավ ու վատ ձկների» առակը, «Որոմների» առակը, «Տաղանդների» առակը եւ այլն, եւ այլն:

Իսկ այս մասին ավետարանական տեղիքներից հիշենք մի քանիսը. «Յորժամ եկեսցէ Որդի Մարդոյ փառօք իւրովք եւ հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց, եւ ժողովեսցեն առաջի նորա ամենայն ազգք» (Մատթ. ԻԵ 31): «Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ, եթե բարի, եւ եթե չար» (Բ Կորնթ. Ե 10): «Եւ տեսի զմեռեալս մեծամեծս եւ փոքունս որ կային առաջի աթոռոյն, եւ գրեանք բանային... եւ զատեցան մեռեալք ի գրելոցն ըստ գործոց իւրեանց» (Հայտն. ԻԱ 11):

Արդարեւ մի անհրաժեշտություն է արդար օրենքների դատաստանը, այսինքն հրապարակել ամբարիշտների խորհուրդները եւ գործերը, ամաչեցնել նրանց իրենց ամբարտավանության, հայիոյության եւ անպատկառ գործերի համար. մյուս կողմից ի լույս բերել արդարների անաղմուկ բարեգործությունները, Աստծու սիրույն համար նրանց կրած վշտերն ու տառապանքները եւ մի սուրբ կյանք ապրելու համար նրանց կրած զրկանքները եւ թափած ճիգերը:

Վերջին դատաստանի այս սոսկալի իրողությունը գեթ պետք է հորդորի քրիստոնյային ամեն չիզ թափելու, որպեսզի զվարթերես կարողանա ելնել Քրիստոսի առջեւ եւ Նրա սիրելիների հետ, այդ տիեզերական հրապարակում:

Ժ.- Դժոխք.- Մեր լեզվի մեջ շատ հաճախ է գործածվում այս բառը, հատկապես Հին Կտակարանում, իբրեւ գերեզման, եւ երբեմն էլ, իբրեւ մեռյալների աշխարհի իմաստով: Կարող է նշանակել նաեւ որպես մեռյալների կայան: Ներկայիս սակայն «դժոխք» ասելով հասկանում ենք այն «վայրը», ուր իբրեւ մեղավոր դատապարտյալներ դեւերի հետ ենթարկվում են հավիտենական տանջանքների:

Թե դժոխք կոչվածը, այսինքն մեղավորների տանջարանը, գոյություն ունի, հաստատվում է Աստվածաշնչից. «Բազումք ի ննջեցելոցն ի հող երկրի յարիցեն, ոմանք ի կեանս յաւիտենականս, եւ ոմանք ի նախատինս եւ յամօթ յաւիտենականս» (Ղան. ԺԲ 2): «Ելցեն եւ տեսցեն զոսկերս մարդկան առ իս յանցուցելոց, զի որդն նոցա ոչ վախճանեսցի, եւ

հուր նոցա ոչ շիջիցի» (Ես. ԿԶ 24): «Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենականս» (Մատթ. ԻԴ 41): Դարձյալ մեր Տերն ասում է, թե անդամներից մեկը եթե քեզ գայթակղեցում է, այն կտրիր եւ զցիր, որովհետեւ ավելի լավ է խեղանդամ մտնել արքայություն, քան ֆիզիկապէս ամբողջ վիճակում «ականել ի գեհեն հրոյն, ուր որդն նոցա ոչ մեռանի, եւ հուրն ոչ շիջանի» (Մրկ. Թ. 43):

Դժոխքը Ավետարանում ներկայացվում է որպէս մի «խավար» տեղ, ուր երբեք չի ծագելու Աստծու զվարթ եւ մխիթար լույսը: Իսկ տանջանքի մասին Ավետարանը ունի երկու բառեր. «անշեջ կրակ» եւ «անմեռ որդ»: Վերջին բառը բնականաբար խորհրդանշանն է հոգին **շարունակաբար** կրծող **խղճի խայթին**: Մեղավորները **շարունակաբար խղճի խայթ** եւ ստորջանք պիտի ունենան, թե ինչու հիմարություն արեցին, որ երկրավոր եւ ժամանակավոր հաճույքների համար կորցրին հավիտենական երանությունը: Իսկ «անշեջ հուրը» խորհրդանշանն է այրող հուսահատության, քանի որ այն ելք չի գտնում դուրս գալու այն խավարից, որի մեջ նետված է ինք:

Դժոխքի ըմբռնումի մեջ ամենից դժվար հարցը նրա **հավիտենական** լինելն է, զոր ոմանք իրենց կարճ խելքով Աստծու անսահման գութին հակառակ են գնում: Նախ պետք է ասել, որ Աստծու անսահման գութը տկարների եւ զղջացողների նկատմամբ է: Մարդ որչափ էլ ծանր եւ մահացու կերպով մեղանջած լինի, եթե երկրի վրա անկեղծորեն զղջա եւ կյանքով ու գործով հաստատի իր զղջումը, Աստված **միշտ** ներում է: Իսկ անզիղջ մեղավորների նկատմամբ գութ ցուցնել հակառակ է Աստծու արդարության ստորոգելուն, ու Աստծու մեկ ստորոգելին չի կարող հակասել Նրա մեկ ուրիշ ստորոգելուն: Դժոխքի դատապարտված մեղավորը իր կամքով եւ գիտակցաբար մերժած է Աստծուն եւ նրա կամքի գործադրությունը եւ անզեղջ կերպով փակել է իր աչքերը այս կյանքում, ուստի նա այլեւս չի կարող դառնալ դեպի Աստուած, նման այն անձին, որ կամավոր կերպով հանել է իր աչքը եւ հետեւաբար այլեւս չի կարող տեսողության տիրանալ: Իմաստության գիրքը այս մասին մի լավ պատասխան ունի. «Ով ասիցէ զքեզ (Աստուծոյ) թէ զինչ գործեցեր, եւ կամ ով է որ ընդդէմ դառնայցէ դատաստանի քում... Քանզի արդար ես, եւ արդարութեամբ վարես զամենայն, զայն որ պարտ իցէ տանջելոյ, տանջեցեր» (ԺԲ 12): Աստված բոլորի համար էլ ողորմության ժամանակ սահմանեց. ամբարիշտները արհամարհում են տրված պատեհությունը եւ չեն օգտագործում այն եւ Աստծու երկայնամտությունը չարաչար են գործածում: Ու երբ ողորմության համար սահմանված ժամանակը սպառվում է, այլեւս չեն կարողանում արժանի լինել այդ ողորմությանը: Անպտուղ թզենու պարագային էլ տերը քանի տարիներ շարունակ գալիս էր պտուղ փնտրելու, բայց չէր գտնում. որոշեց կտրել, բայց պարտիզպանի միջամտության վրա թույլ տվեց, որ մի տարի էլ մնա, որից հետո, եթե դարձյալ պտուղ չտար, կտրվելու եւ կրակի մեջ զգվելու էր ծառը:

Բացի դրանից, ստույգ է, որ Աստված ողորմած է, բայց մյուս կողմից պարտավոր չէ իր ողորմությունը մարդկանց քմայքին համաձայն կիրարկել:

Ամեն պարագայի, այն տեսությունը, թե դեւերն ու ամբարիշտներն էլ դարձի են գալու եւ արդարանալու են եւ արժանանալու արդարներին վերապահված շնորհներին, մերժվում է Եկեղեցու կողմից, որ իր հավատամքում ասում է. «Մեղաւորացն տանջանք յաւիտենականս»: Հավիտենական տանջանքի դեմ առաջ բերված առարկությունները ծնվում են մարդկային սահմանափակ խորհելու կերպերից: Մարդկայնորեն մենք խորհում ենք, որ քանի որ «Աստուած **ոչ կամի** զմահ մեղաւորին, այլ՝ զդառնալն նորա ի չար ճանապարհէն եւ զկեալն», հետեւաբար կարող է այնպէս անել, որ մեղավորները հավիտենական կերպով չդատապարտվեն: Բացի դրանից մեր փոքրիկ խելքով աշխարհում գործված ամենից ծանր մեղքին համար իսկ շատ ենք գտնում **հավիտենական** տանջանքը: Խորհում ենք, որ մարդու ստեղծագործության նպատակը երջանկությունն է: Աստծու իսկ դրած այդ նպատակը ոչնչի է վերածվում հավիտենական տանջանքով: Առարկության վերջին մեկ կետ էլ կա. քանի որ հոգին պահում է իր **ազատությունը** պետք է նախատեսություն եւ կարելիություն լինի փոփոխության եւ փրկության: Այս բոլորով միասին, խորհում է մարդու փոքրիկ խելքը, արդարների երանությունը անկատար կլինի կամ խանգարվում է, երբ այս բարի հոգիները անդրադառնան, որ իրենց ցեղից մի մաս, մինչեւ իսկ իրենց երկրավոր սիրելիներից մի քանիսը, տանջվում են հավիտենապէս: Սակայն այս բոլոր առարկությունները հիմնվում են այն տեսակետի վրա, թե մարդկային բանականությունը այն չափանիշն է, որով նույնիսկ պետք է չափվի եւ դատվի Աստծու իմաստությունն ու արդարությունը: Այս կնճռոտ հարցի լուծումը կայանում է մարդու **ազատ կամքի մեջ**: Ոչ ոք կարող է մարդու ազատ կամքին հակառակ մի բան պարտադրել իրեն, ոչ իսկ երկնքի արքայությունը կարելի է պարտադրել

մարդուն: Մարդ իր ազատ կամքով պիտի ենթարկվի Աստծու շնորհքին: Մարդ ազատ է մինչև իսկ երկրավոր բարիքները եւ աշխարհիկ նկատումները ավելի գերազանց նկատել, քան Աստծու կամքը եւ Աստծու օրենքը, որ մեզ հայտնվել է Աստվածաշունչով եւ կամ մեր խղճի մեջ գրված է: Իր այս հետեւանք էլ պիտի կրի մարդը:

Որչափ որ մեզ հայտնված է, Աստված չի սրբացնում եւ չի փրկում մարդուն հակառակ իր կամքին. Աստված չի պարտադրում մարդուն, որ իր հետ քայլի. մարդ ազատ է **հավիտենապես** ինք իրեն Աստծուց հեռու պահելու, եւ դրանով իսկ իր վրա հրավիրելու հավիտենական պատիժը: Ամեն պարագայում տիեզերքի **խորհուրդներից** մեկն է դեւերի եւ մեղավորների գոյությունը եւ նրանց հավիտեկնական պատիժը: Սրանք մի անգամ որ ընկել են, Շնորհալու ասածի համաձայն, «յաւիտեան չեն կանգնելոց»: Մեղավորը միշտ մեղավոր է մնում հետ մահու, հետեւաբար միշտ պատժի ենթակա վիճակում է մնում, որովհետեւ նա մի այնպիսի հոգեկան վիճակի է ենթարկվել, ոչ այլեւս ի վիճակի չէ հրաժարվելու մեղքից եւ հետեւաբար հավիտենապես առանց զղջալու է մնում: Քրիստոսի արյան հեղումը այլեւս չի կարող օգուտ տալ նրան, որի շնորհիվ նա կարող էր այս կյանքում զղջալ, եւ այդ առթիվ կատարած զղջումը ընդունելի էր լինելու: Աստծու խնամքը, գութը եւ շնորհքը այս կյանքում մարդկանց վրա առավելագույն չափով սփռված է, բնական եւ գերբնական միջոցներ ընձեռնված են, որպեսզի մարդիկ Աստծու շնորհներին գործակցելով խուսափեն հավիտենական դատապարտությունից եւ ընդունին հավիտենական կյանքը: Իսկ եթե մարդը կամակոր կերպով մերժէ Աստծու խնամքները եւ հայթայթած միջոցները, ինք է պատասխանատու իրեն սպասող հավիտենական պատժին, քանի որ Աստծու կողմից ոչինչ պակաս թողնված չէ: «Զի՞նչ ինչ առնել էր այգիոյ իմում, եւ ես ոչ արարի նմա. մնացի զի բերցէ խաղող եւ եբեր փուշ» (Ես. Ե 4): Ստույգ է, որ Աստված ինքը դրեց հավիտենական կյանքի նպատակը մարդու համար, սակայն պայման դրեց միաժամանակ, որ այդ նպատակին պիտի հասնեն իր պատվերները պահողները միայն:

Ուրեմն՝ «Վախճան բանիս՝ զամենայն ինչ լուր. յԱստուծոյ երկիր, զպատուիրանս նորա պահեա. զի այս է մարդն ամենեւին. զի զամենայն արարածս ածցէ Աստուած ի դատաստան, յամենայնի տնտես արարելոցն եթե բարի է եթե չար» (Ժող. ԺԲ 13-14):

ԺԱ.- Անկնունք Վախճանյալք.Նրանք, ովքեր անկնունք վախճանվել են եւ առանց մկրտության են մեռել, բնականբար հանդերձալ կյանք են մտնում սկզբնական մեղքով: Եւ հետեւաբար նրանք չեն կարող դասվել արդարների բաժնում: Բայց մեղավորների համար էլ բազմաթիվ օթեւաններ կան, եւ անկնունք մեռնող մանուկները Աստծու նախախնամությունից դատվում են այնպես, ինչպես որ պիտի դատվեն հեթանոս կամ այլակրոն «արդար» մարդերը: Աստվածաբանների հասարակաց կարծիքն այն է, որ անկնունք վախճանվող մանուկները չեն դատապարտվում հավիտենական պատժի, այլ վայելում են բնական մի երանություն, առանց զգալու գերբնական ուրիշ մի բարձրագույն երանությունից զրկված լինելը, որը իրենք երբեք չեն ճանաչել, գերբնական մի շրջանակում մտած չլինելով, նման մի հովվի, որ պալատականների փափկասուն կյանքից զրկված լինելուն չի անդրադառնում, քանի որ ոչ տեսած, ոչ լսած եւ ոչ էլ վայելած է այն նախապես:

Հետեւաբար անկնունք մեռնող մանկունք թեւ Քրիստոնյայի հատուկ երանական տեսությունից զրկվել են, սակայն վայելում են այն բնական երանությունը, որը Աստծու բարությունից պարգեվված է նրանց, որոնք բնական օրենքներին հետեւելով հասած են Աստծու բնական ճանաչումին եւ ապրած են տրված պայմանների տակ, բնական բարոյականի հատուկ մի կյանք: Գրիգոր Նազիանզացին այս մասին ասում է. «Մանկունք, որ անկնիք վախճանին, ոչ ի տանջանս յարդար դատավորէն դատապարտին. ոչ է պարտ դասել նոցա ընդ չարս այնում՝ զի կնիք քրիստոնեական չէ նոցա ընկալեալ: Որ չեն արժանի վարձուց, ոչ այնու արժանի է պատուհասի»: Իսկ Գրիգոր Նյուսացին ասում է. «Տարածամ մահ տղայոց ոչ տայ մեզ պատճառս կարածելոյ զի յետ աստի կենաց ի վիշտս կայցեն կամ ի տրտմութեան»: Սկզբնական մեղքի պատիժը Աստծու տեսությունից զրկված լինելն է. իսկ ներգործական մեղքի պատիժն է հավիտենական տանջանք գեհենի մեջ:

ԺԲ.- Արքայություն երկնից. Անդենականում արդարներին վերապահված երանավայրը կոչվում է **երկնքն Արքայության**, ուր Աստված եւ իր սուրբ կամքը թագավորում է: Թե արքայություն կոչվածը մասնավոր «տե՞ղ» է, թե հոգեկան մի վիճակ, ստույգ ոչինչ կարելի է ասել: Համաձայն Ս. Գրքի ցուցմունքին, աշխարհի երկիր եւ երկնային մարմինները մի տակնուվրայության ենթարկվելուց հետո փառավոր կերպով պիտի այլակերպվեն եւ մեջտեղ է գալու «նոր երկիր եւ նոր երկինք» (Հայտն. ԻԱ): Այս «նոր»

տիեզերքը, որի մանրամասնության մասին գաղափար չունենք մենք, պիտի լինի բնակարանը «նոր» մարդկության՝ դատաստանից հետո:

Ինչ էլ լինի արքայության, այսպես ասենք «տեղագրությունը», սա է ստույգ, որ Աստված պիտի օժտե անասելի երանությամբ եւ աներեւակայելի պարգևներով նրանց, ովքեր այս աշխարհից մեկնում են մաքրված սկզբնական մեղքից եւ քավված անձնական հանցանքներից. եւ այս իսկ պատճառով մի արդարացած հոգեվիճակի տիրացած, եւ դրանով շահել են Աստծու հաճությունը եւ բարեկամությունը:

Բնականաբար դրախտի եւ դժոխքի (դրախտը այլաբանորեն գործածվում է երկնքի արքայության նշանակությունով) գոյությունը կուրանան անաստվածները, նյութապաշտները եւ համաստվածները: Ուրիշ խոսքով, նրանք, ովքեր ուրանում են Աստծու եւ հոգու գոյությունը: Սակայն չարժի նրանցով զբաղվել, որովհետեւ վերոհիշյալները նման ժխտական կարծիքներ են արտահայտում ոչ թե լուրջ ուսումնասիրությունից եւ խորհրդածությունից հետո, այլ՝ իբրեւ արդյունք հակառակության ոգու, ծանծաղ մտածելու կերպի, եւ վերջապես հիմնված այն խախտու սկզբունքի վրա, թե ինչ որ տեսանելի եւ զգալի չէ, եւ չի ընկնում այսպես ասած, «գիտական» փորձարկության ներքեւ, գոյություն չունի:

Մենք սակայն երբ այս հարցը ուսումնասիրում ենք մի քիչ ավելի խորը կերպով, մեր նպատակը չէ անհավատներին համոզել, այլ հավատացյալները իրենց համոզումին մեջ ավելի հիմնավորել:

Ա.- Ս. Գիրքը հաստատում է ու մենք էլ հավատում ենք, որ մարդ ստեղծված է «**ի պատկեր եւ ի նմանութիւն Աստուծոյ**». այս «նմանությունը» հոգեկան է, որովհետեւ Աստված **հոգի է**: Իսկ մարդուն գերազանց հոգեկան հատկություններն են **գիտակից սեր եւ բանավոր գիտություն**: Ուրեմն այս նմանությունը Աստծու եւ մարդու միջեւ կայանում է իրարու (այսինքն մարդը եւ Աստված) սիրելու եւ իրար ճանաչելու մեջ: Երբ ասում են, թե մարդը ստեղծված է «ի պատկեր» Աստուծո, խորքում ասել ուզում ենք, թե մարդը ստեղծվել է Աստծուն ճանաչելու իբրեւ իր արարիչը, բարերարը, հայրը, որից բացարձակապես կախված է իր գոյությունը եւ ճակատագիրը, եւ **սիրելու** իբրեւ պատճառ իր գոյության եւ աղբյուր՝ իր վայելած բոլոր բարիքների: Ինչպես Աստված հավիտենական է, մարդն էլ, իբրեւ «պատկեր» Աստծու, հավիտենական է: Ուրիշ խոսքով այս գիտությունն ու սերը պետք է լինեն հավիտենական, քանի որ մարդու էությունը, հոգին հավիտենական է: Մարդու գերագույն գործունեությունը, եւ հետեւաբար գերագույն երջանկությունը կայանում է շարունակաբար եւ անընդհատ Աստծուն ճանաչելու եւ սիրելու գործողության մեջ: Այս պարզապես նշանակում է, որ մարդ ստեղծվել է հավիտենական երջանկության համար եւ անվրիպելի կերպով պիտի տիրանա այս երանության, եթե մեղքը, որ իր խորքում Աստծու ճանաչողության եւ սիրույն կորուստն է, նրան **անատակ** (կրոնական բառով՝ **անարժան**) չդարձնեն այս վեհագույն ճակատագրին: Ուրեմն մարդուն Աստծու պատկերին եւ նմանության համաձայն ստեղծված լինելու իրողությունից ծագում է հավիտենական երջանկության, այսինքն երկնքի արքայության գոյության բանավոր փաստերից մեկը:

Բ.- Աստծու հիմնական ստորոգելիներից մեկն է Իր արդարությունը: Աստված իր անսահման արդարությամբ պետք է հատուցում անի առաքինությանց: Սակայն ներկա կյանքի փորձառությունը մեզ սովորեցնում է, թե առաքինությունը իր վարձքը չի ստանա այս աշխարհում: Այս «չար եւ շնացող» աշխարհը առհասարակ չի հանդուրժում առաքինի մարդկանց գոյությունը եւ ամեն թակարդ լարում է նրան մեջտեղից վերացնելու համար: Լինի սրբազան պատմությունը, լինի եկեղեցական պատմությունը, եւ մինչեւ իսկ ազգերի պատմությունները բացահայտ կերպով հաստատում են այս իրողությունը: Հետեւաբար արդարությունը պահանջում է, որ առաքինի մարդիկ վարձատրվեն: Արդ՝ այս վարձատրությունը կատարվում է երկնքի արքայության մեջ: Ուրեմն աշխարհում առաքինության, նվիրումի, զոհողությանց տեր մարդկանց գոյությունն ինքնին հաստատում է երկնքի արքայության անհրաժեշտությունը:

Գ.- Մարդ իր մեջ երջանկության եւ կատարելության գորավոր ըղձանքը ունի: Ամենուրեք երջանկություն է փնտրում, թեւ հաճախ սխալ տեղեր եւ սխալ միջոցներով, սակայն իրողություն է, որ մարդ փնտրում է այն: Մարդ բնականից սիրում է կատարելությունը, այդ լինի իր մեջ, թե ուրիշների, եւ ձգտում է հասնել կատարելության: Սակայն մարդ ինչ էլ որ անի, որչափ էլ աշխատի եւ ճգնի չի կարող այս աշխարհում տիրանալ ոչ մի կատարյալ երջանկության եւ ոչ էլ՝ բաղձալի կատարելության: Առհասարակ մեր մեջ գոյություն ունեցող բաղձանքները եւ ձգտումները միշտ իրենց որոշ եւ առարկայական նպատակը ունենում են, որին տիրանալու, որը ձեռք բերելու ձգտում ենք

մենք: Առանց առարկայական նպատակի՝ ուժգին բաղձանքներ եւ բնագոյներ գոյություն չեն ունենում մարդու մեջ: Հետեւաբար, երբ մարդ սնուցանում է երջանկության եւ կատարելության բաղձանքներ, նշանակում է, որ սահմանված է երջանկության եւ կատարելության: Եւ քանի որ նրանց չի կարող տիրանալ երկրում, ինքնին հետեւում է, որ տիրանալու է դրանց անդենականում, այսինքն երկնքի արքայությունում:

Ի հերկինս կամ արքայության մեջ արդարների ամենամեծ երջանկությունը հառաջ է գալու Աստծու տեսությունից: Երկրի վրա Աստծու հրաշալի գործերը տեսնելով ուրախություն եւ երջանկություն ենք զգում եւ դրանցից ուղղակի մի գաղափար ենք կազմում նրա մասին: Որչափ մեծ եւ անսահման պիտի ըլլա մեր ուրախությունը, երբ երկնքում Աստծուն ուղղակի դեմ առ դեմ տեսնենք: Երկնքում Աստծուն տեսնելը կոչվում է **Երանական Տեսություն**: Արդարեւ այս աստվածատեսությունը հոգուն տալու է անսահման երջանկություն, հավիտենական կյանք եւ հավերժական խաղաղություն: Աստծու տեսության մեջ ենք գտնելու մեր հոգեկան բարձրագույն բոլոր բաղձանքների գոհացումը: «Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ ենք, չեւ եւս է յայտ եթե զինչ լինելոց ենք, զի **տեսանելոց ենք** զնա որպէս եւ Էն» (Ա. Հովհ. Գ 2): Աստծուն տեսնել կարենալու համար սուրբերի ըմբռնելու կարողությունը բազմապատկվում է, կատարելագործվում է Աստծու լույսովը, որովհետեւ Երանական Տեսությունը մտքի կարողությունից բարձր է, հետեւաբար Աստծուն տեսնել կարենալու համար միտքը պետք ունի գերբնական ուժի եւ օժանդակության, ճիշտ ինչպէս բնական լույսի պետք ունինք տեսնել կարենալու համար բնության բոլոր գեղեցկությունները:

Հավիտենական կյանք ըսվածը աստծու այս հավիտենական տեսությունն է: Պետք է ասել, որ արդարները այնքան ամրացած են ինելու բարու եւ աստվածասիրության մեջ, որ այլեւս երբեք պիտի չկարենան մեղանչել: Իրենց բոլոր փափագները պիտի ներշնչվեն Աստծու հանդեպ իրենց ունեցած սիրուց միայն: Սուրբերը կարողություն պիտի չունենան չարություն մտաբերելու կամ գործելու, որովհետեւ սիրով, երախտիքով ու երանությամբ այնքան տարված ու լցված պիտի լինեն, որ այլեւս տեղ պիտի չմնա չարի մասին մտածելու: Որովհետեւ երբ Աստված մեզ հետ ունենանք, այդ նշանակում է, թե ամեն ինչ ունենք, մեր հոգու բոլոր բարձունքները արդեն իսկ բավարարված են: Երկնքում մենք կատարելապէս ներդաշնակության մեջ ենք լինելու աստվածային կամքի հետ:

ՑԱՆԿ ՆՅՈՒԹԵՐԻ

1. Ազգային Եկեղեցական ժողովներ
2. Անկնունք վախճանավողներ
3. Ապաշխարություն (Խորհուրդ)
4. Ավանդություն
5. Ավանդության տեսակները
6. Ավանդության կարելությունը
7. Ավանդությունը եւ Ս. Գրիքը
8. Արքայություն Երկնից
9. Բանականության լույսը, իմաստասիրությունը եւ պատմությունը իբրեւ Տեղիք Աստվածաբանության
10. Բողոքական աղանդները
11. Դժոխք
12. Դրոշմ (Խորհուրդ)
13. Եկեղեցի
14. Եկեղեցին ի՞նչ է
15. Եկեղեցին Հաղթական
16. Եկեղեցին Զինվորյալ
17. Եկեղեցին Ուսուցանող
18. Եկեղեցին Ուսանող
19. Եկեղեցին Ընդհանրական
20. Եկեղեցին Միասնական
21. Եկեղեցին Տեղական
22. Եկեղեցին Առանին
23. Եկեղեցին Նյութական
24. Եկեղեցին Աներեւույթ
25. Եկեղեցին Երեւելի
26. Եկեղեցին Նախնի
27. Եկեղեցին Նահապետական
28. Եկեղեցու Նվիրապետությունը
29. Եկեղեցու Անպակասելիությունը
30. Եկեղեցու Անսխալականությունը
31. Եկեղեցու Նշանները
32. Եկեղեցու Միություն
33. Եկեղեցու Ընդհանրականությունը
34. Եկեղեցու Առաքելականությունը
35. Եկեղեցու Սրբությունը
36. Եկեղեցու Ուղղափառությունը
37. Եկեղեցու Անդամները
38. Եկեղեցական ժողովներ
39. Եպիսկոպոսական ժողովների Հեղինակությունը
40. Երկրորդ Գալուստն Քրիստոսի
41. Եօթը Սուրբ Խորհուրդները Եկեղեցվո
42. Կանոնք եւ Կանոնադրութիւնք Հայրապետաց
43. Հայց. Եկեղեցու Ընդունած Եկեղեց. ժողովները
44. Հայց. Եկեղեցին
45. Հայց. Եկեղեցու Իշխանության Սահմանը
46. Հարություն Մեռելոց
47. Ձեռնադրություն (Խորհուրդը)
48. Մկրտություն (Խորհուրդը)
49. Շնորհքը եւ իր տեսակները
50. Ո՞վ կարող է հրավիրել Եկեղեց. ժողովներ

51. Պատկերհարգություն
52. Պատմություն Քրիստոնեական Ավանդության
53. Պատմական Առաքելական Եկեղեցիներ
54. Պսակ կամ Խորհուրդ Ամուսնության
55. Սուրբ Հաղորդություն
56. Սուրբերի Հարգությունը
57. Սրբոց Բարեխոսությունը
58. Վախճանաբանություն
59. Վարդապետք Եկեղեցվո
60. Վարդապետք Հայց. Եկեղեցվո
61. Վասն Ննջեցելոց
62. Վերջին Ղատաստան
63. Վերջին Օծում կամ Կարգ Հիվանդաց
64. Վեց Արտաքին Տեղական Ժողովներ
65. Տեղիք Աստվածաբանության
66. Տիեզերական Երեք Ժողովներ
67. Տիրամոր Գերհարգություն
68. Քրիստոնեական Զանազան Ժողովներ